



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍՅԱՆ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Զեկույցի մեթոդաբանությունը	5
Գլուխ 1. Խաղաղ հավաքների իրավունք	8
1. Խաղաղ հավաքների իրավունքի հիմնական սկզբունքները.....	8
2. ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին»	10
3. 2016 թվականի հուլիսի հավաքներն՝ ըստ առանձին օրերի	11
Գլուխ 2. Անձնական ազատության իրավունքը և այդ իրավունքի սահմանափակման երաշխիքները	41
1. Անձնական ազատությունից զրկելու իրավական մեխանիզմները	41
2. Ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքները և դրանց իրականացումը երաշխավորելու պետության պարտականությունը	47
Գլուխ 3. Վերաբերմունքը հավաքների մասնակիցների նկատմամբ և հատուկ միջոցների կիրառումը	60
1. Հավաքների մասնակիցների նկատմամբ վերաբերմունքը և արգելված վերաբերմունքի կապակցությամբ քննություն իրականացնելու անհրաժեշտությունը....	60
2. Հատուկ միջոցների կիրառումը հավաքների ընթացքում	67
Գլուխ 4. Արտահայտվելու ազատությունը	73
1. Լրագրողական գործունեության խոչընդոտում	73
2. Լրագրողների գործունեությունը խոչընդոտելու հիմքով քննությունը	80
3. Իրադարձությունների լուսաբանումը լրատվամիջոցների կողմից.....	87
4. Արտահայտվելու ազատությունը սոցիալական ցանցերում.....	95

Ներածություն

Հուլիսի 17-ի վաղ առավոտյան տեղեկություններ տարածվեցին այն մասին, որ տեղի է ունեցել զինված հարձակում ՀՀ ոստիկանության պարեկապահակակետային ծառայության (ՊՊԾ) գնդի վրա, պատանդ են վերցվել ոստիկանության ծառայողներ, կան վիրավորներ, ինչպես նաև կյանքից զրկվել է ոստիկանության ծառայող:

Երկրում ստեղծվեց հասարակության ու միջազգային հանրության ուշադրության ներքո գտնվող՝ մարդու իրավունքների տեսանկյունից բարդ իրավիճակ:

Զինված հարձակմանը հաջորդեց ատելության խոսքի և բռնության քարոզչության աննախադեպ բռնկում:

Տեղի ունեցան ինչպես խաղաղ, այնպես էլ բռնությամբ ուղեկցվող հավաքներ, որոնց ընթացքում Ոստիկանության կողմից թույլ տրվեցին խաղաղ հավաքների ազատության և անձնական ազատության իրավունքների խախտումներ: Հրապարակվեցին նաև տեղեկություններ Ոստիկանության կողմից ակտիվիստ ցուցարարների նկատմամբ խոշտանգման և վատ վերաբերմունքի գործադրման վերաբերյալ:

Ատելության խոսքի և բռնության քարոզչության, ինչպես նաև Ոստիկանության թույլ տված խախտումների հետևանքով հասարակությունում ստեղծվեց լարվածության մթնոլորտ: Դա իր հերթին նպաստեց հավաքների ընթացքում բռնության դեպքերի ավելացմանը և մյուս կողմից՝ Ոստիկանության կողմից թույլ տրվող նոր խախտումների, որոնք, չնայած հասարակական սուր հակազդմանը, գազաթնակետին հասան Սարի թաղում հուլիսի 29-ին տեղի ունեցած հավաքի ժամանակ (տուժեցին հավաքների մասնակիցներ, լրագրողներ, հավաքներին հարակից տների բնակիչներ և այլն):

Լարվածության շիկացմանն ավելի նպաստեց Ոստիկանության ՊՊԾ գնդում գտնվող զինված խմբի անդամների կողմից մարդու իրավունքների տեսանկյունից վտանգավոր վարքագծի դրսևորումը (մեքենաների հրկիզումը, ուղիղ եթերում բռնության ակնհայտ կոչերը, հրազենի ցուցադրումը, անկանոն կրակոցները և այլն): Նշվածն անմիջական սպառնալիք էր ստեղծում ՊՊԾ գնդին հարակից տարածքի բնակիչների, հատկապես խոցելի խմբերի՝ երեխաների, տարեցների իրավունքների համար: Այս մասին էին վկայում նաև հենց բնակիչների՝ ինչպես Սարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած, այնպես էլ հրապարակային մտահոգությունները:

Տեղի ունեցան փոխհրաձգություններ, որոնց հետևանքով, ցավոք, եղան վիրավորներ ինչպես ՊՊԾ գնդում գտնվող խմբի, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից, կյանքից զրկվեց ոստիկանության ևս երկու ծառայող:

Հուլիսի 27-ին տեղեկություն տարածվեց այն մասին, որ զինված խմբի անդամներին բժշկական օգնություն ցույց տալու համար ՊՊԾ գնդի տարածք մուտք գործած բժշկական անձնակազմը խմբի կողմից պահվել է՝ որպես պատանդ: Այս փաստը հատկապես անթույլատրելի էր՝ հաշվի առնելով բժիշկների մարդասիրական բարձր առաքելությունը և միանգամից առաջացրեց նաև մարդու իրավունքների ոլորտի արտերկրյա կառույցների մտահոգությունը:

Նույն օրը տեղեկություններ տարածվեցին նաև այն մասին, որ խմբի որոշ անդամներ ՊՊԾ գնդի տարածքում պահվում են իրենց կամքին հակառակ և հնարավորություն չունեն առանց իրենց կյանքը վտանգելու լքել գնդի տարածքը:

Այս ամենը հանգեցրեց հասարակությունում անհանդուրժողականության շարունակական խորացմանը: Խիստ մտահոգիչ էր այն, որ հասարակության առանձին խմբերի կողմից հրապարակայնորեն ակնհայտ խրախուսվում էին ասելությունն ու բռնության կոչերը և նույնիսկ իրավունքից դուրս գործելը: Ակնհայտորեն անտեսվում էր հասարակության այն հատվածի մասնավոր և ընտանեկան կյանքը, ում դեմ ուղղված էր ասելությունը՝ այդ ամենը ներկայացնելով ակնհայտ քսենոֆոբիայի տարածման լույսի ներքո: Միջազգային պահանջների տեսանկյունից անթույլատրելի այս վիճակին ավելանում էր նաև այն, որ արդեն առաջ էին գալիս հասարակությունում տագնապի մթնոլորտ առաջացնելուն ուղղված երևույթներ (օրինակ՝ «Զվարթնոց» օդանավակայանում և հեռուստարնկերություններից մեկում ռումբերի տեղակայման վերաբերյալ ահազանգերը, Ադրբեջանի կողմից հարձակում սկսելու մասին տեղեկությունները):

Այսպիսի վիճակը խաթարում էր պետական իրավասու ինստիտուտների կողմից մարդու իրավունքների խախտումները կանխարգելելու, ինչպես նաև խախտումների դեպքերին պատշաճ արձագանքելու ուղղությամբ արդյունավետ միջոցներ ձեռնարկելը և առաջացնում նրանց նկատմամբ վստահության խնդիր: Դրանով պայմանավորված՝ լրջորեն վտանգվում էր Հայաստանում մարդու իրավունքների երաշխավորման ողջ համակարգը՝ բացասական ազդեցություն թողնելով իրավունքի գերակայության վրա:

Ուստի, անհրաժեշտ էր, որպեսզի պետության համապատասխան մարմինները և հանրային գործիչները ակտիվացնեին ջանքերը՝ ուղղված իրավունքների բոլոր տեսակի խախտումների վերացմանն ու դրանց հետագա կանխարգելմանը: Անհրաժեշտ էր ապահովել հասարակությունում հանդուրժողականության մթնոլորտի վերականգնում և վերջապես՝ ստեղծված իրավիճակի խաղաղ ու անվնաս հանգուցալուծում:

Ի վերջո, հուլիսի 31-ին զինված խումբը վայր դրեց զենքերը և հանձնվեց իրավապահ մարմիններին:

Հուլիսյան իրադարձությունները բնույթով աննախադեպ էին: Դրանք լուրջ մարտահրավերների առաջ կանգնեցրին հասարակությանն ու պետությանը: Բայց դրա հետ միասին, հնարավորություն տվեցին հասկանալ երկրում առկա համակարգային խնդիրները, դրանց նպաստող պատճառներն ու պայմանները: Հնարավորություն տվեցին նաև հասկանալու՝ կանխարգելիչ ինչ միջոցներ պետք է ձեռնարկել՝ հետագայում այդպիսի իրավիճակներից խուսափելու նպատակով:

Զեկույցի մեթոդաբանությունը

Սույն արտահերթ հրապարակային զեկույցը կազմելիս կարևորություն է տրվել խնդիրները համակարգված եղանակով վերհանելուն ու ներկայացնելուն: Դա նախևառաջ պայմանավորված է նրանով, որ խնդրո առարկա ժամանակահատվածում տեղի ունեցան բազմաթիվ իրադարձություններ և դրանք ընդհանրական կերպով ներկայացնելը կարող էր զեկույցը գրկել ճշգրտությունից ու ամբողջականությունից: Ըստ այդմ, որոշվեց զեկույցը բաժանել չորս թեմատիկ բաժինների՝ ըստ արձանագրված խախտումների բովանդակային իմաստի:

Զեկույցի առաջին բաժինը նվիրված է խաղաղ հավաքների իրավունքին, երկրորդ բաժինը՝ անձնական ազատության իրավունքին և այդ իրավունքի սահմանափակման երաշխիքներին, երրորդը՝ հավաքի մասնակիցների նկատմամբ վերաբերմունքին և հատուկ միջոցների կիրառմանը, իսկ չորրորդը՝ արտահայտվելու ազատությանը: Չորս բաժիններում, ըստ այդմ, ամփոփված են հուլիսի 17-ից 31-ի իրադարձությունների ընթացքում արձանագրված՝ մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին առնչվող խնդիրներ, որոնց կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել է հաղորդումներ, արձանագրել է խախտումներ, ներկայացրել է դրանց վերացմանն ուղղված առաջարկություններ ու պահանջներ կամ ձեռնարկել օրենքով սահմանված այլ քայլեր: Ընդ որում, բաժինների հերթականությունը որոշվել է՝ հաշվի առնելով նաև դեպքերի ժամանակագրությունը:

Զեկույցը նպատակ չի հետապնդում գնահատական տալու Ոստիկանության ՊՊԾ գնդի վրա հարձակում գործած զինված խմբի անդամների գործողություններին, ինչպես նաև իրավապահ մարմինների այն ծառայողների գործողություններին, ովքեր հատուկ միջոցառումներ էին իրականացնում՝ կապված զինված խմբի զինաթափման հետ: Ըստ այդմ, զեկույցը չի քննարկում նաև հարցեր, որոնք քրեական գործի քննության առարկա են կազմում և դուրս են Մարդու իրավունքների պաշտպանի իրավասության շրջանակից:

Յուրաքանչյուր բաժնում, որպես կանոն, նախ համառոտ ներկայացվում է տվյալ իրավունքի վերաբերյալ միջազգային և ներպետական իրավունքով ամրագրված կանոնը, սկզբունքները և համապատասխան իրավական փաստաթղթերը: Դրանից հետո ներկայացվում են կոնկրետ իրադարձության փաստական հանգամանքները, իսկ այնուհետև կատարվում է վերլուծություն արդեն շարադրված կանոնի, սկզբունքների և համապատասխան իրավական փաստաթղթերի հիման վրա:

Այսինքն՝ զեկույցում ներկայացված յուրաքանչյուր իրադարձություն կամ դեպք վերլուծվում է հստակորեն արտահայտված մեթոդաբանությամբ՝ ներկայացվում է սկզբունքը, այնուհետև փաստական հանգամանքը, առաջարկված սկզբունքի հիման վրա կատարվում է վերլուծություն և վերջում առաջարկվում լուծում: Այդ իմաստով ձեռնպահ ենք մնացել զեկույցի վերլուծություններն ու եզրահանգումները հավաքական կերպով տվյալ բաժնի կամ ենթաբաժնի վերջում ներկայացնելուց, քանի որ հաշվի առնելով իրադարձությունների ու դեպքերի ծավալուն բնույթը՝ մատուցման նման

եղանակը կարող էր առաջացնել խառնաշփոթ և ավելորդ բարդություն յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ առաջարկված լուծումը որոնելիս կամ ընկալելիս: Դրա փոխարեն, յուրաքանչյուր իրադարձության վերլուծությունն առաջարկվում է տեղում: Նման համակարգված մոտեցումը զեկույցի ընթերցումը և ուսումնասիրությունը դարձնում է դյուրին և հեշտ ընկալվող:

Նույն նպատակով զեկույցը կազմվել է հանրամատչելի եղանակով: Աշխատել ենք ձեռնպահ մնալ ակադեմիական բնույթի բառապաշարից, արտահայտություններից և շարադրման նույնպիսի ոճից, քանի որ այն նախատեսված է անձանց լայն շրջանակի համար:

Ավելին, աշխատել ենք, որպեսզի զեկույցը ստանձնի նաև որոշակի ուղեցույցի դեր: Այդ նպատակով զեկույցում ոչ միայն մատնանշվում է կոնկրետ իրավունքի խախտման հանգամանքը, այլ նաև օբյեկտիվորեն բացատրվում են, օրինակ, տվյալ իրավունքից օգտվելու իրավաչափ եղանակները: Հետևաբար, զեկույցը կարելի է օգտագործել նաև գործնական նպատակներով և դա չի սահմանափակվում միայն 2016 թվականի հուլիսի 17-ից 31-ը դեպքերի իրավական գնահատականով: Դա է պատճառը, որ զեկույցում լայնորեն վկայակոչված են մարդու իրավունքների վերաբերյալ բազմաթիվ հեղինակավոր աղբյուրներ՝ ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումներ, ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) ուղեցույցային փաստաթղթեր և այլն:

Զեկույցը կազմելիս օգտագործվել են հիմնականում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում առկա տվյալները: 2016 թվականի հուլիսի 17-ից 31-ի իրադարձությունների ընթացքում, ինչպես նաև դրանից հետո, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացավ բազմաթիվ հաղորդումներ լրագրողների, հավաքների մասնակիցների, այլ քաղաքացիների նկատմամբ իրավախախտումների մասին: Բոլոր այդ հաղորդումները գրանցվել ու ուսումնասիրվել են օրենքով սահմանված քննարկման ընթացակարգի շրջանակներում:

Զեկույցում տեղ գտած հետևությունները հիմնավորված ներկայացնելու նկատառումով կատարվել են նաև փաստահավաք աշխատանքներ: Մասնավորապես, իրականացվել են առանձնազրույցներ հավաքների ընթացքում տուժած անձանց հետ: Առանձին դեպքերում կատարվել են նաև տեղանքի ուսումնասիրության աշխատանքներ (օրինակ՝ Սարի թաղի այն հատվածում, որտեղ հուլիսի 29-ին տեղի ունեցան բախումներ ցուցարարների և ոստիկանների միջև, որի ընթացքում տուժեցին նաև լրագրողներ): Հավաքվել և ուսումնասիրվել են նաև տարբեր իրադարձությունների վերաբերյալ ականատեսների հայտարարությունները: Իրականացվել են Սարի թաղի բնակիչների և վնաս կրած լրագրողների անանուն հարցումներ, ուսումնասիրվել են զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները, սոցիալական ցանցերում առկա նյութերը, մարդու իրավունքների ոլորտի տեղական և միջազգային կազմակերպությունների, հանրային գործիչների, դիվանագիտական կազմակերպությունների, մասնագիտական խմբերի, պետական մարմինների

բազմաթիվ հայտարարություններ և ուսումնասիրության արդյունքներ: Որոշ դեպքերում ստացված տվյալները ստուգվել ու ճշգրտվել են պետական մարմիններին ուղղված բանավոր կամ գրավոր հարցումների միջոցով: Նշված բոլոր ուսումնասիրությունների հիման վրա, իրադարձությունների՝ զեկույցում բերվող ընկալումն առավել դյուրին դարձնելու նպատակով կազմվել են նաև քարտեզներ՝ տեղանքի անվանումների, հավաքի մասնակիցների մոտավոր քանակի և այլ տվյալների վերաբերյալ նշումներով:

Գլուխ 1. Խաղաղ հավաքների իրավունք

1. Խաղաղ հավաքների իրավունքի հիմնական սկզբունքները

Հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում հիմնարար իրավունք է և այդպիսի հասարակության հիմնաքարերից է: Միջազգային իրավունքում, մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում այն ամրագրված է՝ որպես հիմնարար արժեք: Այս իրավունքի նպատակը մարդկանց տարբեր խմբերի կողմից հանրային միջավայրում ընդհանուր մտքերի ու գաղափարների ցուցադրաբար արտահայտումն է, որոշակի ուղերձի հղումը: Այդ առումով հավաքների իրավունքը ներառում է նաև արտահայտվելու ազատության իրավունքը: Ըստ այդմ, հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունը էական նշանակություն ունի հանդուրժող և բազմախոհ հասարակություն ստեղծելու համար, որտեղ տարբեր հայացքներ ու մտադրություններ ունեցող մարդիկ, այդ թվում՝ փոքրամասնություն կազմող խմբերը կարող են խաղաղ գոյակցել:

Միայն խաղաղ բնույթի հավաքներն են պաշտպանված այս իրավունքով: Հավաքը համարվում է խաղաղ, եթե դրա կազմակերպիչները դրսևորել են խաղաղ մտադրություն, հավաքն ընթանում է առանց բռնության և առկա չէ բռնության անխուսափելի վտանգ: Թեև հասարակական վայրում տեղի ունեցող ցանկացած հավաք կարող է առաջ բերել բնականոն կյանքի որոշակի աստիճանի շեղում (օրինակ՝ երթևեկության խաթարում, աղմուկ կամ հասարակական անդորրի որոշակի աստիճանի խաթարում և այլն, որոնք այլ անձանց համար կարող են ժամանակավոր անհարմարություններ ստեղծել), դա չի նշանակում, թե ցանկացած նմանատիպ դեպքում հավաքը պետք է համարվի ոչ խաղաղ և այդ հիմքով մասնակիցներին պետք է զրկել այդ իրավունքի իրականացումից: Նույնիսկ հավաքի որոշ մասնակիցների կողմից բռնության կոչեր հնչեցնելը դեռ հիմք չէ հավաքն ամբողջությամբ դադարեցնելու համար: Իրավասու մարմինների առաջնային նպատակը պետք է լինի քաղաքացիների համար այդ իրավունքի իրականացումն ապահովելը, անհրաժեշտության դեպքում՝ նրանց այդ իրավունքի իրականացման հարցում օգնելը և այլոց միջամտությունից պաշտպանելը: Այդ առումով բոլոր սահմանափակումները պետք է մեկնաբանվեն նեղ ու կիրառվեն զգուշորեն, և, ընդհանուր առմամբ, բոլոր կարգավորումները պետք է հասցվեն նվազագույնի. որքանով հնարավոր է, խաղաղ հավաքների իրավունքը պետք է իրականացվի առանց կարգավորման: Այն, ինչը հստակորեն չի արգելվում օրենքով, պետք է ենթադրվի որպես թույլատրելի, և ովքեր ցանկանում են հավաքվել, չպետք է թույլտվություն պահանջեն դա անելու համար: Հավաքի անցկացման իրազեկում ներկայացնելու պահանջի նպատակը պետք է լինի հնարավորություն տալը, որպեսզի պետական մարմինները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար հավաքի անխափան տեղի ունենալը, այլ ոչ

Թե հավաքի անցկացման համար թույլտվություն հայցելը: Այսինքն՝ **կանխավարկածը միշտ պետք է լինի հավաքների ազատության իրավունքի իրականացման օգտին**¹:

Հավաքների ազատության իրավունքը կարող է սահմանափակվել միայն այնպիսի միջոցների կիրառումով, որոնք սահմանված են **օրենքով**, հետապնդում են **իրավաչափ նպատակ** և **անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**:

Առաջինը ենթադրում է օրինականության հիմնարար սկզբունքը: Հավաքի անցկացման բոլոր կարգավորող նորմերը, այդ թվում՝ սահմանափակող հիմքերը, պետք է սահմանված լինեն օրենքում: Ավելին, օրենքը ինքնին պետք է համապատասխանի երկու որակական հատկանիշի: Առաջին, օրենքը պետք է քաղաքացիներին հասանելի լինի, այսինքն՝ հրապարակված ու մատչելի: Երկրորդ, օրենքը պետք է լինի հստակ ու կանխատեսելի: Այսինքն՝ օրենքում առկա բոլոր նորմերը, դրույթները պետք է ձևակերպված լինեն բավարար հստակությամբ, որպեսզի դրանց կիրառությունը քաղաքացիների համար լինի կանխատեսելի: Եթե օրենքում առկա են ընդհանրացված ձևակերպումներ, ապա դատարանները պետք է ապահովեն դրանց հստակ ու պարզորոշ մեկնաբանությունը, որը կցրի օրենքի կիրառության բոլոր անհստակությունները: Այս երկրորդ պայմանը հայտնի է որպես իրավական որոշակիության հիմնարար սկզբունք, որը օրինականության ընդհանուր պայմանի անբաժան տարր է:

Իրավունքի սահմանափակումը ոչ միայն պետք է լինի օրենքով սահմանված կարգով, այլ նաև հետապնդի իրավաչափ նպատակ: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն (հավաքների ազատություն)՝ այդպիսի իրավաչափ նպատակներ են պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները: Նմանատիպ հիմքեր սահմանված են նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 44-րդ հոդվածում և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև նաև՝ Կոնվենցիա) 11-րդ հոդվածում: Սա նշանակում է, որ նույնիսկ եթե հավաքն իր բնույթով խաղաղ է և օրինական, իրավասու պետական մարմինները կարող են այնուամենայնիվ սահմանափակել հավաքի անցկացումը, սակայն, նշված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում:

Իրավունքի սահմանափակումը պետք է նաև անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում: Այս պայմանն ըստ էության իրավունքի գերակայության սկզբունքի արտահայտումն է և պահանջում է, որպեսզի ցանկացած

¹ Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց: Երկրորդ հրատարակություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ: Վարչավա/Ստրասբուրգ, 2010, կետ 30 (Guidelines on Freedom of Peaceful Assembly. Second edition. OSCE/ODIHR, Warsaw/Strasbourg, 2010): Ուղեցույցի անգլերեն տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://phsblog.at/wp-content/uploads/2016/04/ODHIR-Guidelines-on-Freedom-of-Peaceful-Assembly-Sec-Ed-2010.pdf>:

սահմանափակում, նույնիսկ եթե օրինական է և հետապնդում է իրավաչափ նպատակ, լինի **համաչափ** վերը նշված իրավաչափ նպատակներից որևէ մեկին հասնելու համար: Համաչափության սկզբունքը պահանջում է, որպեսզի ցանկացած սահմանափակում պայմանավորված լինի հասարակական սուր պահանջով և սահմանափակման համար ընտրված միջոցները լինեն անհրաժեշտ ու բավարար, առկա լինի ռացիոնալ կապ միջոցի ու հետապնդվող նպատակի միջև: Այլ կերպ՝ յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է սահմանել արդարացի հավասարակշռություն սահմանափակման և հետապնդվող իրավաչափ նպատակի, հավաքի մասնակիցների և ընդհանուրի շահերի միջև:

Համաչափության սկզբունքը նաև ենթադրում է, որ նույնիսկ եթե հավաքն անօրինական է, սակայն իր բնույթով խաղաղ, պետական մարմինները կրում են այս իրավունքի իրականացումն ապահովելու պոզիտիվ պարտականություն: Հիմնական բաժանարար գիծը պետք է լինի **բռնության անխուսափելի վտանգի առկայությունը**:

2. ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին»

ՀՀ օրենսդրության մեջ խաղաղ հավաքների ազատության իրավունքը սահմանված է 2011 թվականի ապրիլի 14-ին ընդունված «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք): Օրենքը 2004 թվականից ի վեր ՀՀ կառավարության և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ հավաքների մասին օրենսդրության շարունակական փոփոխության ու բարելավման արդյունք է²:

Վերը նշված բոլոր սկզբունքներն արտահայտված են Օրենքում: Գաղափարն այն մասին, որ օրենքը պետք է գործի հավաքների ազատության իրավունքի իրականացման կանխավարկածի օգտին, արտահայտված է բազմաթիվ դրույթներում: Օրենքը սահմանում է պետության պոզիտիվ **պարտականությունը** ապահովելու համար հավաքների ազատության իրականացումը և այդ իմաստով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար իրենց լիազորություններն իրականացնելիս **համաչափության** սկզբունքով ղեկավարվելը սահմանված է՝ որպես պարտականություն³:

Հավաքների անցկացման սահմանափակումները խստորեն սահմանված են այն ծավալով, ինչ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով՝ պետական անվտանգությունը, հասարակական կարգի պահպանումը, հանցագործության կանխումը, հանրության առողջության և բարոյականության և այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Միևնույն ժամանակ,

² Մինչև սույն օրենքի ընդունումը, հավաքների ազատության իրավունքը կարգավորվում էր «Ժողովներ, երթեր, հանրահավաքներ և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքով, որի վերաբերյալ <<Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) հրապարակել էր բացասական կարծիք դրա՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխանության մասին:

³ Համաչափության սկզբունքը սահմանված է նաև որպես ինքնուրույն սահմանադրական նորմ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով:

սահմանված է, որ նշված սահմանափակումները պետք է կիրառվեն այնպես, որ չաղավաղեն հավաքի նպատակը կամ այլ կերպ նվազեցնեն հավաքի պոտենցիալ ներգործությունը հանրային լսարանի վրա՝ ընդհուպ մինչև հավաքի փաստացի արգելմանը հանգեցնելը: Ինչ վերաբերում է հավաքների անցկացման արգելքներին, դրանք հասցված են նվազագույնի:

Ի տարբերություն թույլտվության՝ Օրենքում սահմանված է իրազեկման ինստիտուտ: Այսինքն, հավաքի անցկացման համար բավարար է միայն հավաքի կազմակերպչի գրավոր իրազեկումը լիազոր մարմնին, որն էլ կատարվում է ոչ թե թույլտվություն ստանալու, այլ լիազոր մարմնին հավաք անցկացնելու մտադրության մասին տեղեկացնելու նպատակով, որպեսզի պետական մարմինները հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու և այլ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն:

Թեև իրազեկումը սահմանված է՝ իբրև կանոն, Օրենքը սահմանում է նաև կանոնից երեք բացառություն. մինչև **100 մասնակից ունեցող, ինքնաբուխ և շտապ** հավաքների դեպքում պահանջվում է ոչ թե իրազեկում, այլ միայն հավաքի անցկացման վայրի ոստիկանության ստորաբաժանմանը տեղեկացում⁴:

Օրենքը սահմանում է, որ նույնիսկ եթե հավաքն անցկացվում է առանց իրազեկման և այդ իմաստով հավաքն անօրինական է, ոստիկանությունը պարտավոր է ոչ թե ցրել հավաքը, այլ աջակցել դրա իրականացմանը, եթե հավաքը խաղաղ է: **Այսինքն՝ Օրենքը գերապատվություն է տալիս հավաքների ազատության իրավունքը պաշտպանելու կարևորությանը նույնիսկ այն դեպքում, երբ հավաքն անօրինական է և պատճառում կամ սպառնում է պատճառել որոշ անհարմարություններ ու անհանգստություններ այլոց կյանքին:** Ամենակարևոր պայմանն այն է, որ հավաքը կազմակերպված լինի խաղաղ մտադրությամբ և անցկացվի խաղաղ կերպով: Քանի դեռ հավաքը խաղաղ է, պետական մարմինները պարտավոր են գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի հավաքի մասնակիցները շարունակեն իրականացնել իրենց իրավունքը: Այդ իմաստով օրենքը հստակորեն սահմանում է նաև իրավունքի չարաշահման դրույթը՝ բռնությունը, ատելության խոսքը և ռասիզմը հստակորեն սահմանված են որպես հավաքների ազատության իրականացման բացարձակ արգելք:

3. 2016 թվականի հուլիսի հավաքներն՝ ըստ առանձին օրերի

2016 թվականի հուլիսի 17-ի հավաքը

⁴ Առանց իրազեկման ինքնաբուխ հավաքների իրականացման իրավունքը սահմանված է նաև ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 2-րդ մասով:

2016 թվականի հուլիսի 17-ին՝ ոստիկանության ՊՊԾ գնդի գրավումից մի քանի ժամ անց «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում «Մենք ենք տերը մեր երկրի» քաղաքացիական նախաձեռնության անդամները տարածեցին հայտարարություն, որով կոչ արեցին հանրությանը «այս պահից սկսած» հավաքվել Ազատության հրապարակում: Նախաձեռնությունը կոչ արեց Հանրային վստահության խորհրդին ստանձնել քաղաքացիների ինքնաբուխ հավաքը Ազատության հրապարակում և քայլեր ձեռնարկել Ազգային վստահության անցումային կառավարության ձևավորման ուղղությամբ⁵:

Հայտարարությունն տարածեց նաև «Ոտքի՛ Հայաստան» քաղաքացիական նախաձեռնությունը, որով քաղաքական և հասարակական ուժերի ներկայացուցիչներին հրավիրեց ժ. 20:00-ին մասնակցել Երևանի Ազատության հրապարակում քաղաքացիների հետ խորհրդակցությանը՝ «ստեղծված իրավիճակից ելքեր որոնելու համար»⁶: Նախաձեռնության հեղինակները նաև նշեցին, որ հայտարարությունը իրազեկում է Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ոստիկանության համար, և որ հավաքն օրինական է, քանի որ խնդիրը հրատապ է և պետության համար «գերկարևոր»:

Օրվա առաջին կեսին նախատեսված հավաքը տեղի չունեցավ: Կեսօրից քիչ անց ոստիկանության աշխատակիցները քանդեցին Ազատության հրապարակում տեղադրված «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ քաղաքական միավորման վրանը և բերման ենթարկեցին վրանում գտնվող մի խումբ քաղաքացիների: Կեսօրից անց Ազատության հրապարակում աստիճանաբար սկսեցին հավաքվել քաղաքացիներ, որոնց թիվը մեծ չէր: Այդ պահի դրությամբ հավաք տեղի չէր ունենում: Քաղաքացիները խումբ-խումբ քննարկում էին օրվա կարևոր իրադարձությունը՝ ՊՊԾ գնդի գրավման և դրա շուրջ ծավալվող դեպքերը: Միաժամանակ, հայտնվեցին ոստիկանության բազմաթիվ աշխատակիցներ, ովքեր քիչ անց սկսեցին ընտրողաբար, առանձին քաղաքացիների նկատմամբ հարկադրանք կիրառելով, նրանց տանել դեպի հրապարակում կայանված ոստիկանության մեքենա, որտեղից նրանց, ինչպես հետագայում պարզվեց, տարան ոստիկանության տարբեր բաժիններ: Ոստիկանության աշխատակիցների այդ գործողությունները հանգեցրին բերման ենթարկվող և հրապարակում գտնվող քաղաքացիների դժգոհությանը ու զայրույթին: Այդուհանդերձ, ոստիկանության աշխատակիցների նկատմամբ որևէ բռնություն տեղի չունեցավ:

Ոստիկանության աշխատակիցների նշված գործողությունները կրկնվում էին պարբերաբար՝ որոշակի ընդմիջումներով, և այդ իրավիճակը ընդհանուր առմամբ շարունակվեց մի քանի ժամ շարունակ՝ մինչև երեկո: Ոստիկանության ծառայողները խմբերով շրջում էին հավաքված քաղաքացիների խմբերի շուրջ և, ընտրելով որևէ քաղաքացու, մի քանի ոստիկաններով, ուժի կիրառմամբ, հարկադրաբար տանում էին ոստիկանության մեքենա, որը ազդանշաններ արձակելով արագորեն հեռանում էր Ազատության հրապարակից: Ոստիկանները որևէ բացատրություն չէին ներկայացնում

⁵ Հայտարարության տեքստը հասանելի է Ֆեյսբուք սոցիալական ցանցի հետևյալ էջում՝ <https://web.facebook.com/Mengeng.am/?fref=ts>:

⁶ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://galatv.am/hy/news/157294/>:

իրենց գործողությունների համար, միայն երբեմն այդ գործողություններից բողոքող և դրանք կանխելու փորձ անող քաղաքացիներին ասում էին. «մի՛ խանգարեք, գործողություն ենք կատարում»: Առանձին դեպքերում ոստիկանության ծառայողների առանձին խմբեր շրջում էին նաև մոտակա Հյուսիսային պողոտայի սկզբնամասում և այնտեղից բերման ենթարկում որևէ քաղաքացու:

Պարզ չէ, թե ինչ հիմքերով էին ոստիկանության ծառայողները ընտրում այս կամ այն քաղաքացուն բերման ենթարկելու համար: Ինչպես արդեն նշվեց, ոստիկանության ծառայողները իրենց գործողությունների համար որևէ բացատրություն չէին ներկայացնում: Միննույն ժամանակ, բերման ենթարկված քաղաքացիներից, ինչպես նաև կեսօրից հետո Ազատության հրապարակում հավաքված քաղաքացիներից որևէ մեկը հակաիրավական վարքագիծ չէր դրսևորել, որպեսզի դա հիմք հանդիսանար անձին ազատությունից զրկելու համար:

Նույն օրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հայտարարություն տարածեց այն մասին, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել էին հաղորդումներ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների բերման ենթարկելու մասին: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից արագ արձագանքման շրջանակներում նախաձեռնվեցին այցեր Ոստիկանության բաժիններ, ուր, ըստ առկա տեղեկատվության, գտնվում էին բերման ենթարկվածները ոչ միայն Ազատության հրապարակից, այլ նաև Երևան քաղաքի այլ հատվածներից⁷:

Հուլիսի 17-ին նախատեսվող հավաքները համապատասխանում էին Օրենքի 3-րդ գլխով նախատեսված՝ մինչև 100 մասնակից ունեցող, ինքնաբուխ կամ շտապ հավաքների բնույթին: Բանն այն է, որ ժամեր առաջ տեղի էր ունեցել հանրային նշանակության կարևոր իրադարձություն՝ ոստիկանության գնդի վրա տեղի էր ունեցել հարձակում զինված խմբի կողմից, որի անդամները առաջ էին քաշել պահանջներ, և այդ իրադարձությանը անմիջապես կամ հրատապ արձագանքելու անհրաժեշտություն կար: Շտապ հավաք հրավիրելով՝ կազմակերպիչները հետապնդում էին այդ իրադարձությանը արձագանքելու նպատակ՝ քաղաքացիներին, քաղաքական և հասարակական ուժերին հրավիրելով Ազատության հրապարակ՝ «ստեղծված իրավիճակից ելքեր որոնելու համար», հանրային ճնշման միջոցով հնարավոր արյունահեղությունը կանխելու նպատակով: Դա լիովին տեղավորում էր Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված շտապ կամ ինքնաբուխ հավաքների հասկացությունների մեջ: Նման հանգամանքներում հավաքի մասին լիազոր մարմնին նախապես իրազեկելու պարտականություն հավաքի կազմակերպիչները չէին կրում: **Հապաղելը կարող էր հասարակական արձագանքը դարձնել ժամանակավրեպ:**

Եվրոպական դատարանը ևս, անդրադառնալով հավաքների անցկացման մասին նախապես իրազեկման հիմնահարցին, ամրագրել է, որ ինքնաբուխ հավաք անցկացնելու իրավունքը կարող է գերակայել հանրային հավաքների վերաբերյալ

⁷ Մարդու իրավունքների պաշտպանի բոլոր հայտարարությունները, վկայակոչված սույն զեկույցում, հասանելի են Պաշտպանի «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի էջում հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/Armenianombudsman/?hc_ref=PAGES_TIMELINE&fref=nf:

նախնական ծանուցում տալու պարտականությանը միայն առանձնահատուկ հանգամանքների ներքո, մասնավորապես, երբ հանրահավաքի եղանակով անհրաժեշտ է անմիջապես արձագանքել ընթացքի մեջ գտնվող իրադարձությանը: Ավելին, ընդհանուր կանոնից նման շեղումը կարող է արդարացված լինել, եթե հապաղումը կարող է նման արձագանքը դարձնել ժամանակավրեպ⁸: Հետևաբար, թեև նշված հավաքների նախաձեռնողները պատշաճ կերպով լիազոր մարմնին նախնական ծանուցում, իրազեկում չէին ներկայացրել, դրա բացակայությունը բացատրվում էր հավաքի միջոցով ընթացքի մեջ գտնվող կարևոր իրադարձությանը անմիջապես արձագանքելու անհրաժեշտությամբ, իսկ Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ լիազոր մարմնին հավաքի մասին իրազեկելու ժամկետները պահպանելը անհնար կդարձներ ժամանակին արձագանքել տեղի ունեցած իրադարձություններին, ինչն, ըստ էության, ինքնաբուխ հավաքի հիմնավորում է: Ինքնաբուխ հավաքները, պետության կողմից, ենթակա են պաշտպանության

Ի հավելումն վերը նշվածի, ոչինչ չէր վկայում այն մասին, որ հավաքը նախաձեռնող անձինք հետապնդում էին բռնության նպատակ, կամ որ Ազատության հրապարակում գտնվող քաղաքացիները, ովքեր հավաքին մասնակցելու նպատակով եկել էին Ազատության հրապարակ, հետապնդում էին ոչ խաղաղ նպատակներ և այդ առումով առկա էր բռնության անխուսափելի վտանգ:

ՀՀ ոստիկանության կամ այլ իրավագոր մարմնի կողմից չեն ներկայացվել այնպիսի հիմնավորումներ, որոնք կհավաստեին, որ նախատեսվող հավաքը ունենալու էր ոչ խաղաղ բնույթ և որ քաղաքացիներին հարկադրաբար հրապարակից հեռացնելիս առկա էր նրանց կողմից բռնության անխուսափելի վտանգ: Այսքանով հանդերձ, **Ազատության հրապարակից բերման ենթարկված քաղաքացիներից ոչ ոք չէր դրսևորել հակաիրավական վարքագիծ, մինչդեռ ոստիկանները շարունակում էին նրանց հեռացնել նախատեսվող հավաքի վայրից՝ նույնիսկ քաղաքացիներին ընտրելով պատահականության սկզբունքով:** Ստեղծված պայմաններում ոստիկանության աշխատակիցների գործողությունները այն տպավորությունն էին թողնում, որ դրանք ուղղված էին հավաքը կանխելուն:

Եթե հավաքն իր բնույթով խաղաղ էր, ոստիկանությունը չէր կարող խափանել հավաքի անցկացումը: Եթե Ոստիկանությունն առաջնորդվում էր հավաքը նախապես սահմանափակելու իրավունքով, ապա այդ իրավիճակում Ոստիկանությունը նման լիազորություն չուներ: Օրենքը, կարգավորելով հավաքների սահմանափակումների կարգավորման կարգը, այն նախապես սահմանափակելու իրավազորությամբ օժտել է իրավագոր մարմնին, որն Օրենքի 11-րդ հոդվածի ամրագրմամբ **համայնքի ղեկավարն է՝** տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանը: Մինչդեռ, Երևանի քաղաքապետարանը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում առկա տեղեկություններով, հուլիսի 17-ի դրությամբ Ազատության հրապարակում հավաքը արգելելու որոշում չէր

⁸ St' u Բուկտան ու այլոք ընդդեմ Հունգարիայի (*Bukta and others v. Hungary*) գործով Եվրոպական դատարանի վճիռ, գանգատ թիվ 25691/04, 17/07/2007, կետ 36:

կայացրել: Հետևաբար, հավաքը խափանելու փոխարեն՝ Ոստիկանությունը պետք է կատարեր Օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով իր վրա դրված պարտականությունը. ժամանելով հավաքի վայր՝ աջակցել հավաքի մասնակիցներին, որպեսզի հավաքը կայանար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց պաշտպանել այլոց միջամտությունից: Այս ամենի արդյունքում՝ հավաքը տեղի չունեցավ:

Հուլիսի 17-ին խաղաղ հավաքի ազատության իրավունքն իրացնելու փորձերը համապատասխանում էին խաղաղ հավաքի ներպետական և միջազգային իրավական չափանիշներին, քանի դեռ իրավագոր մարմինների կողմից չեն ներկայացվել հակառակը հավաստող հիմնավոր ապացույցներ: Հավաքը, չլինելով իրազեկված, եղել է ինքնաբուխ, շտապ և, ընդհանուր առմամբ, խաղաղ և, հետևաբար, ենթակա պետության կողմից պաշտպանության: Սակայն Ոստիկանությունը, կիրառելով անօրինական սահմանափակում, խախտել է խաղաղ հավաքներին մասնակցելու անձանց հիմնարար իրավունքը:

2016 թվականի հուլիսի 18-ի հավաքը

Հուլիսի 18-ին «Մենք ենք տերը մեր երկրի» քաղաքացիական նախաձեռնության անդամները տարածեցին հայտարարություն՝ քաղաքացիներին առաջարկելով հուլիսի 18-ին՝ ժամը 10:00-ին հավաքվել Երևանի տարբեր վայրերում և ժամը 11:00-ից սկսած այդ վայրերից շարժվել դեպի Ոստիկանության Էրեբունու բաժին: Հայտարարության մեջ հավաքի մասնակիցներին առաջարկվում էր իրենց հետ ունենալ սուլիչներ, բարձրախոսեր և պաստառներ: Երթի ուղերձն էր. *«մենք սատարում ենք Էրեբունու խմբի քայլին և նրանց պահանջներին: Մենք համաձայն չենք այս իշխանության հակահայ ու դավաճան քաղաքականության հետ: Մենք ուզում ենք փոփոխություններ»*⁹: Նույն օրը մեկ այլ՝ «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնող խումբ հայտարարությամբ առաջարկեց ժամը 19:00-ին հավաքվել Ազատության հրապարակում՝ հանրային քննարկման: Հայտարարության մեջ նշվում էր, որ նախաձեռնող խումբը դեմ է ուժի ցանկացած կիրառմանը և Ոստիկանության կողմից ազատ խոսքի ու տեղաշարժի ազատության իրավունքի ոտնահարմանը¹⁰:

Նախատեսված երթը չկայացավ, սակայն կեսօրից հետո մի խումբ քաղաքացիներ հավաքվեցին Խորենացի-Քրիստափոր փողոցների խաչմերուկի պուրակում, որը գտնվում էր դեպի ՊՊԾ գունդի տանող Խորենացի փողոցի այն հատվածում, որտեղից ոստիկանները արգելափակել էին փողոցը (տե՛ս Քարտեզ 4): Նրանցից ոմանք սկսեցին պատրաստել ցուցապաստառներ՝ ըստ երևույթին պատրաստվելով անցկացնել բողոքի

⁹ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ https://web.facebook.com/577805108932908/photos/pb.577805108932908.-2207520000.1472648013./1107616455951768/?type=3&_rdr

¹⁰ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ https://web.facebook.com/287822698007881/photos/pb.287822698007881.-2207520000.1468841520./927372880719523/?type=3&_rdr

ցույց: Այդ ընթացքում Ոստիկանության աշխատակիցները սկսեցին բերման ենթարկել պուրակում գտնվող մի քանի քաղաքացիների՝ այդ թվում նաև պաստառները պատրաստող անձանց՝ միաժամանակ առգրավելով պաստառները: Ոստիկանները բերման էին ենթարկում բռնելով քաղաքացիների ոտքերից և ձեռքերից, իսկ մի անձի նկատմամբ, ով չէր դիմադրում, կիրառեցին ձեռնաշղթաներ: Այդ ընթացքում ոստիկանների մեկ այլ խումբ պուրակի մի մասը առանձնացրեց անվտանգության ժապավենով և հրահանգելով ու հրելով հավաքված քաղաքացիներին ստիպեցին նրանց անցնել անվտանգության ժապավենի մյուս կողմը: Այդ ընթացքում ոստիկանները քաղաքացիներին հրահանգում էին չանցնել անվտանգության ժապավենը, արգելում էին բարձրանալ ու կանգնել փողոցի մայթին, մոտենալ Խորենացի փողոցի վրա կառուցած արգելապատնեշին: Ոստիկանները որևէ բացատրություն չներկայացրին, թե ինչու բերման ենթարկեցին քաղաքացիներին:

Պուրակում հավաքված էին մի քանի տասնյակ քաղաքացիներ ու լրագրողներ: Բոլոր դեպքերում նրանց թիվը չէր անցնում 100-ը: Հետևաբար, Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ նույնիսկ եթե նրանք պատրաստվում էին անցկացնել հավաք, դրա համար որևէ իրազեկում չէր պահանջվում: Բացի այդ, բերման ենթարկված քաղաքացիներից երկուսը պատրաստում էին ցուցապաստառ, իսկ մնացածը պուրակում խաղաղ կանգնած էին: Նման հանգամանքներում նրանք զրկվեցին բողոքի ցույց անցկացնելու հնարավորությունից:

Նույն օրը՝ երեկոյան ժամը 19:00-ին Ազատության հրապարակում մեկնարկեց հանրահավաք: Հավաքի կազմակերպիչներից մեկը հավաքի սկզբում հայտարարեց, որ հավաքի նպատակն է պարզել օբյեկտիվ իրականությունը ՊՊԾ գունդը գրաված զինված խմբի կողմից կատարվող գործողությունների մասին և խաղաղ պայքարի կոչ անել: Չնայած դրան, մի խումբ ոստիկաններ օղակի մեջ առան նրան և ուժի գործադրմամբ տեղափոխեցին հրապարակում գտնվող ոստիկանության մեքենա: Դա հավաքի մի խումբ մասնակիցների մոտ առաջացրեց զայրույթ, ինչն էլ նրանց և ոստիկանների միջև բախման պատճառ դարձավ¹¹: Դրանից հետո հավաքի մասնակիցները որոշեցին կազմակերպել երթ և խմբով շարժվեցին Կարապի լճի ուղղությամբ, սակայն քանի որ ոստիկանները արգելափակեցին նրանց ճանապարհը այդ ուղղությամբ, երթի մասնակիցները շարժվեցին դեպի Հյուսիսային պողոտա: Ոստիկանները հավաքի մասնակիցների երթը կանխելու նպատակով Հյուսիսային պողոտայում կազմեցին արգելապատնեշ, որի արդյունքում երթի որոշ մասնակիցների և ոստիկանների միջև տեղի ունեցավ բախում (տե՛ս Քարտեզ 1): Ոստիկանները հավաքի մասնակիցներին հրահանգում էին դադարեցնել հավաքը և «գնալ տները»: Որոշ ժամանակ անց երթի մասնակիցները որոշեցին վերադառնալ Ազատության հրապարակ և այնտեղ շարունակել հավաքը: Մոտ երկու ժամ անց հավաքի մասնակիցները երթով անարգել շարժվեցին դեպի Խորենացի փողոց՝ կոչ անելով քաղաքացիներին միանալ իրենց

¹¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=InRbxriOTJY>:

շարժմանը, սատարել զինված խմբի անդամներին և ազատ արձակել բոլոր բերման ենթարկվածներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն, անդրադառնալով հուլիսի 18-ի հավաքի ընթացքում տեղի ունեցած իրադարձություններին, պահանջեց ոստիկաններից խստորեն պահպանել օրինականության և համաչափության սկզբունքները, ի սպառ բացառել հավաքի՝ իրավախախտում թույլ չտված մասնակիցների իրավունքների նկատմամբ որևէ անհիմն միջամտություն կամ բռնություն, իսկ հավաքի մասնակիցներին կոչ արեց խստորեն պահպանել հավաքի խաղաղ բնույթը, օրինականության սահմաններում գործող ոստիկանների նկատմամբ թույլ չտալ ագրեսիայի և վիրավորանքի որևէ դրսևորում¹²:

Հավաքի սկզբում կազմակերպիչները հայտարարեցին, որ հավաքի նպատակն է պարզել օրյեկտիվ իրականությունը հուլիսի 17-ին զինված խմբի կողմից կատարվող գործողությունների մասին և խաղաղ պայքարի կոչ անել: Ցանկացած հավաք համարվում է խաղաղ, **եթե դրա կազմակերպիչները բացահայտ հայտնել են իրենց խաղաղ մտադրություններին մասին**, և այդ հավաքներին պետք է վերաբերվել իրենց հայտնած մտադրություններին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են հստակ և ակնհայտ ապացույցներ, որ այդ հավաքի կազմակերպիչները և մասնակիցները մտադիր են կիրառել բռնություն կամ դրդել դրան: Այս առումով խնդրահարույց էր այն, որ առավոտյան տարածած հայտարարության մեջ հավաքի կազմակերպիչները, ի թիվս այլ նպատակների, նշել էին նաև զինված խմբին սատարելը որպես հավաքի նպատակ, և նույնը հայտարարվել էր նաև երթի ժամանակ: Հայտարարության հեղինակները չհստակեցրին, թե ինչ նկատի ունեին «սատարել» կոչով: Ողջամիտ դիտորդի տեսանկյունից այդ արտահայտությունը կարող էր ընկալվել որպես բռնությանը աջակցություն ցուցաբերելու կոչ: **Դրա հետ միասին, հավաքի ընթացքում բացակայում էին ակնհայտ ու իրական ապացույցներ, որ կազմակերպիչները կամ մասնակիցները մտադիր էին կիրառել բռնություն կամ դրդել դրան:** Անհրաժեշտ է նաև նկատել, որ իրավագոր որևէ մարմնի կողմից, սույնը զեկույցը կազմելու ժամանակահատվածում, հիմնավոր կերպով չի ապացուցվել, որ տվյալ հավաքի կազմակերպիչների մտադրություններն իրականում այլ են եղել, քան ներկայացվել է նրանց կողմից և ուղղված են եղել բռնություն կիրառելուն կամ հրահրելուն: Հետևաբար, հավաքն ընդհանուր առմամբ իր բնույթով խաղաղ էր, թեև զինված խմբի գործողություններին սատարելու մասին հայտարարությունը խնդրահարույց էր:

Անդրադառնալով երթով անցկացվող հավաքների օրինականությանը՝ հարկ է նշել, որ Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *հավաքն իրականացվում է մեկ վայրում հավաքվելու կամ մեկ վայրից մյուսը տեղաշարժվելու միջոցով (երթով)*: Հիմք ընդունելով հիշյալ հոդվածի բովանդակությունը՝ կարելի է փաստել, որ ՀՀ-ում պաշտպանության են ենթակա ինչպես ստատիկ, այնպես էլ դինամիկ՝ մեկ վայրից

¹² Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի հուլիսի 19-ի հայտարարությունը, որի ամբողջական տեքստը հասանելի է Պաշտպանի Ֆեյսբուքի էջում՝ տողատակի ծանոթագրություն 7:

մյուսը տեղաշարժվելու միջոցով (երթով) անցկացվող հավաքները, հետևաբար՝ հիշյալ ժամանակաշրջանում երթով կազմակերպված բոլոր հավաքները ևս ունեցել են օրինական բնույթ:

Խնդրահարույց է այն, որ հավաքի կազմակերպիչները հավաքի անցկացման մասին լիազոր մարմնին չեն իրազեկել՝ Օրենքի 2-րդ գլխի նորմերով սահմանված կարգով: Եթե հուլիսի 17-ին իրազեկման անհրաժեշտություն չկար, քանի որ անհրաժեշտ էր հրատապ կերպով արձագանքել հանկարծակի տեղի ունեցած կարևոր իրադարձությանը և այդ իմաստով հուլիսի 17-ի հավաքը ինքնաբուխ ու շտապ էր, ապա հաջորդ օրվա դրությամբ թեև իրադարձության հանրային նշանակությունը շարունակվում էր պահպանվել, հնարավոր չէ պնդել, որ հավաքի կազմակերպիչները հուլիսի 18-ի առավոտվա դրությամբ բավարար ժամանակ ու հնարավորություն չունեին լիազոր մարմնին երեկոյան անցկացվելիք հավաքի մասին իրազեկելու համար՝ հատկապես հաշվի առնելով, որ իրազեկման ընթացակարգերը Օրենքում սահմանված են այնպես, որ դրա համար կպահանջվեին նվազագույն ջանքեր: Հետևաբար, անհրաժեշտ էր կատարել Օրենքի պահանջը՝ ապահովելու համար հավաքի օրինականությունը: Տվյալ դեպքում, փաստորեն, հավաքն անօրինական էր, քանի որ իրազեկում չէր ներկայացվել:

Այդուհանդերձ, նույնիսկ եթե հավաքն անօրինական է, ելնելով համաչափության սկզբունքից, հավաքի մասնակիցներին պետք է հնարավորություն տալ իրականացնել հավաքի իրենց իրավունքը, եթե հավաքը խաղաղ է և բացակայում են բռնության իրական ու անխուսափելի սպառնալիքներ: Բռնության իրական ու անխուսափելի սպառնալիք հուլիսի 18-ի հավաքի ժամանակ առկա չէին: Միևնույն ժամանակ, հավաքն արգելված չէր իրավասու լիազոր մարմնի՝ Քաղաքապետարանի կողմից: Նման հանգամանքներում անհասկանալի է, թե ինչու էր Ոստիկանությունը կրկին փորձում կանխել հավաքը՝ դրա մասնակիցներին շուրջկալի եղանակով ազատությունից զրկելու, ֆիզիկական կոպիտ ուժ կիրառելու եղանակով: Ինչպես արդեն նշվեց, եթե բռնության իրական սպառնալիքները բացակայում են, ինչպես նաև բացակայում է համայնքային իրավասու մարմնի որոշումը հավաքն արգելելու մասին, ապա ոստիկանությունը հավաքի վայր ժամանելուն պես ուներ միայն մեկ պարտականություն՝ ապահովել հավաքի իրականացումը մասնակիցների համար և անհրաժեշտության դեպքում պաշտպանել նրանց այլոց միջամտությունից:

Քանի որ Օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված հիմքերից և ոչ մեկը առկա չի եղել, այն է՝ երթով անցկացվող հավաքը այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերը անհամաչափորեն չի խախտել, ՀՀ ոստիկանությունը կիրառել է անօրինական սահմանափակում՝ դադարեցնելով երթով անցկացվող հավաքը օրենքով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում:

2016 թվականի հուլիսի 19-21-ի հավաքները

Հուլիսի 19-ին «Մենք ենք տերը մեր երկրի» նախաձեռնությունը տարածեց հայտարարություն, կոչ անելով քաղաքացիներին հուլիսի 19-ից սկսած ամեն օր ժամը 18:30-ին հավաքվել Ոստիկանության Էրեբունու բաժնի հարակից հատվածում ամենօրյա հավաքների նպատակով՝ ի գորակցություն զինված խմբի անդամների, և որևէ ուժային լուծում ստեղծված իրավիճակում բացառելու նպատակով¹³: Մինչ այդ, Խորենացի-Քրիստափոր փողոցների խաչմերուկում նախորդ օրվանից քաղաքացիական ակտիվիստները ինքնաբուխ կերպով հավաքվում էին ոստիկանության արգելապատնեշի դիմաց կամ մոտ պուրակում և կազմակերպում բողոքի տարբեր փոքր ակցիաներ: Նման ակցիաների հիմնական ուղերձն էր Ոստիկանության կողմից զինված խմբի անդամների նկատմամբ ուժի կիրառումից ձեռնպահ մնալը, իշխանությունների հրաժարականը, զինված խմբի անդամների հետ տարվող բանակցությունների հրապարակայնության ապահովումը:

Ստանձնելով հավաքի անցկացման կազմակերպչի դերը՝ նախաձեռնության անդամները մինևույն ժամանակ չիրազեկեցին լիազոր մարմինն հավաքի մասին, ինչն Օրենքի պահանջ է և դրա բացակայությունը հավաքը դարձնում է անօրինական: Ինչ վերաբերում է այս կանոնից բացառությանը, այսինքն մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբուխ հավաքների դեպքում իրազեկման անհրաժեշտության բացակայությունը, ապա կարևոր հասարակական իրադարձությունից երկու օր անց իրադարձությանը արձագանքելու հրատապությունը, որը կարող էր իրազեկելու պահանջը կատարելու դեպքում առարկայազուրկ դարձնել դա, այլևս բացակայում էր: Ոչինչ չէր կաշկանդում կատարել Օրենքի հստակ պահանջը և հավաքի մասին իրազեկել իրավասու լիազոր մարմինն: **Կրկին, իրազեկելու նպատակը ոչ թե հավաքի համար թույլտվություն հայցելն է, այլ պետական իրավասու մարմիններին հնարավորություն տալը, որ հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովվելու և այլ անձանց իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն:**

Նույն օրը Ոստիկանությունը հայտարարեց, որ քաղաքացիների անվտանգության նկատառումով՝ Խորենացի փողոցի հատվածում քաղաքացիների և տրանսպորտի տեղաշարժը սահմանափակված է: Ոստիկանությունը հավաքի մասնակիցներին հորդորեց գերծ մնալ արկածախնդրությունից, երթեր չկազմակերպել դեպի հատուկ պահպանվող գոտի և իրավապահ մարմինների համար չստեղծել լրացուցիչ դժվարություններ: Ոստիկանությունը հատկանշեց, որ հավաքի մասնակիցները փորձում են վերջնագրեր ներկայացնել իրեն և իրավապահ այլ մարմիններին՝ պահանջելով կատարել կոնկրետ գործողություններ կամ ձեռնպահ մնալ օրենքով իրենց վերապահված լիազորություններն իրականացելուց: Ոստիկանությունը զգուշացրեց, որ նշված նախազգուշացումներին չենթարկվելու և զինված խմբի դեմ իրավապահ մարմինների գործունեությունը որևէ կերպ խոչընդոտելու դեպքերում

¹³ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/events/1802531819982241/>

իրավախախտների նկատմամբ կիրառվելու են օրենսդրությամբ նախատեսված համարժեք միջոցներ: Սակայն քաղաքացիները շարունակում էին պարբերաբար հավաքվել Խորենացի-Քրիստափոր փողոցի խաչմերուկում: Բողոքի ակցիաներին մասնակցող քաղաքացիների թիվը մեծ չէր:

Ոստիկանությունը վերը նշված հայտարարությամբ չարգելեց նշված տարածքում հավաքների անցկացումը, քանի որ դրա լիազորությունը չուներ: Ինչպես արդեն նշվել է, այդպիսի լիազորություն ունի համայնքի ղեկավարությունը՝ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանը: Այդ օրը Քաղաքապետարանը Խորենացի փողոցի տվյալ հատվածում հավաքները արգելելու մասին որոշում չէր կայացրել: Ինչ վերաբերում է տվյալ հատվածում քաղաքացիների և տրանսպորտի աշխատանքի սահմանափակման մասին որոշում կայացնելուն, այնքանով, որքանով այդ որոշումը կապված էր Ոստիկանության հատուկ ստորաբաժանումների կողմից զինված խմբի դեմ իրականացվող հատուկ միջոցների հետ, նման որոշում կայացնելու լիազորություն Ոստիկանությունն ուներ: Տվյալ դեպքում Ոստիկանությունն իր լիազորություններն իրականացրեց ապահովելով համաչափության սկզբունքը՝ քաղաքացիների և տրանսպորտի աշխատանքը ոչ թե արգելելով ամբողջությամբ, այլ սահմանափակելով մասամբ՝ դրանով հնարավորություն տալով քաղաքացիներին, հարակից բնակավայրերի բնակիչներին ոչ միայն տեղաշարժվել այդ տարածքով, այլ նաև անցկացնել հավաքներ:

Երեկոյան բախումներ տեղի ունեցան ոստիկանների և ցուցարարների միջև: Ցուցարարներից ոմանք սկսեցին քաշքշել և հարվածել արգելապատնեշի մոտ կանգնած ոստիկաններին, շշեր նետել նրանց ուղղությամբ: Ցուցարարները ջարդեցին ոստիկանական մի մեքենայի ապակին, այնուհետև մետաղային արգելապատնեշներով փակեցին Նար-Դոս փողոցից դեպի Խորենացի փողոց և Տիգրան Մեծ պողոտայից դեպի Խորենացի փողոց տանող ճանապարհները: Ոստիկաններն այդ գործողություններին չպատասխանեցին որևէ ակտիվ գործողությամբ: Հուլիսի 20-ի առավոտյան ոստիկանները հանեցին ցուցարարների սարքած արգելապատնեշները (տե՛ս Քարտեզ 4):

Հաշվի առնելով, որ տվյալ վայրում անցկացված հավաքի համար իրազեկում չէր ներկայացվել, ինչպես նաև որ ցուցարարները իրականացնում էին բռնություններ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ, հավաքի մասնակիցների գործողություններն անօրինական էին: Միննույն ժամանակ, ոստիկանները չձեռնարկեցին միջոցներ հավաքն ամբողջությամբ դադարեցնելու նպատակով, որի իրավունքը Ոստիկանությունն օբյեկտիվորեն ուներ: ՀՀ ոստիկանությունը **իրավագոր է միայն հավաքի ընթացքում դադարեցնել կամ ցրել հավաքը**՝ Օրենքով նախատեսված հիմքերի դեպքերում: Այդպիսի հիմք է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանը՝ *«էթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը»*: Փաստորեն, Ոստիկանությունը առաջնորդվեց համաչափության սկզբունքով և հավաքի որոշ մասնակիցների կողմից բռնության կոչերը կամ բռնի գործողությունները չընդունեց

որպես հիմք հավաքն ամբողջությամբ դադարեցնելու կամ ցրելու համար՝ այդպիսով հնարավորություն տալով այլ մասնակիցներին իրականացնել իրենց իրավունքը:

Հուլիսի 20-ի երեկոյան զգալի թվով ցուցարարներ հավաքվեցին նույն վայրում՝ Խորենացի փողոցի արգելապատնեշի դիմաց և պահանջեցին հնարավորություն տալ սնունդ փոխանցել զինված խմբի անդամներին (տե՛ս Քարտեզ 4): Ուշ երեկոյան, ցուցարարները Ոստիկանության ներկայացուցչից պահանջեցին ներկայանալ և պատասխանել իրենց հարցերին, մասնավորապես՝ թե ինչու զինված խմբի անդամներին սնունդ փոխանցելու իրենց պահանջը չէր կատարվում: Նրանք հայտարարեցին, որ կդիմեն կտրուկ միջոցների, եթե զինված խմբին սնունդ տրամադրելու իրենց պահանջը մերժվի:

Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանը, ով իրադարձությունների խաղաղ հանգուցալուծմանն ուղղված հրապարակային գործունեություն էր իրականացնում, ստանձնեց միջնորդի դեր ցուցարարների ու ոստիկանության միջև և ցուցարարներին խոստացավ նրանց պահանջները հաղորդել Ոստիկանությանը: Այդուհանդերձ, որոշ ժամանակ անց ցուցարարները կրկին պահանջեցին ոստիկանության ներկայացուցչին հանդիպել իրենց: Ցուցարարները ոստիկանությանը մինչև երեկոյան ժամը 22:00-ը վերջնաժամկետ ներկայացրին՝ հակառակ դեպքում սպառնալով «սրել վիճակը», «փակել գլխավոր բոլոր փողոցները», «գործողություններ անել», որի ողջ պատասխանատվությունը կկրի Ոստիկանությունը: Այն բանից հետո, երբ մի քանի ցուցարարներ ոստիկանների շարքերի ուղղությամբ քարեր նետեցին, ոստիկանության ներկայացուցիչը մոտեցավ հավաքի կազմակերպիչներին և հորդորեց չդիմել բռնությունների և քարեր չնետել ոստիկանների ուղղությամբ՝ զգուշացնելով հակառակ դեպքում կիրառել միջոցներ: Ոստիկանության ներկայացուցիչը չպատասխանեց սնունդ փոխանցելու վերաբերյալ ցուցարարների հարցերին:

Ոստիկանության ներկայացուցչի հեռանալուց հետո հավաքի կազմակերպիչները հայտարարեցին, որ ոստիկանությունը չկատարեց իրենց պահանջը, ինչն էլ հանգեցրեց ցուցարարների դժգոհությանը: Հավաքի մի քանի մասնակիցներ սկսեցին պահանջել անցնել կտրուկ գործողությունների: Մի ցուցարար բարձրախոսով հորդորեց կանանց հետ գնալ, որից հետո ցուցարարները ընդհուպ մոտեցան ոստիկանների շարքերին: Սկսվեց հրմշտոց, որի ընթացքում ցուցարարներից մեկի կոչով մի խումբ ցուցարարներ հարձակվեցին առաջին շարքում կանգնած ոստիկանների վրա: Դրան անմիջապես հետևեցին մյուս ցուցարարները: Սկսվեց ոստիկանների հետ բախում, որը նախաձեռնեցին ցուցարարները: Նրանք սկսեցին ոտքերով, ձեռքերով ու փայտե ձողերով հարվածել ոստիկաններին, նրանց ուղղությամբ նետել քարեր ու շէր: Որոշ ցուցարարների հաջողվեց խլել ոստիկանության ծառայողների վահանները և դրանցով հարվածել վերջիններին: Ոստիկանության աշխատակիցները ակտիվ գործողությունների չդիմեցին: Նրանք պաշպանվում էին վահաններով՝ ձգտելով պահպանել ոստիկանների շարքերը, որոնց հետևում դեպի ՊՊԾ գունդ տանող արգելապատնեշն էր: Այս իրավիճակը շարունակվեց մի քանի րոպե, որից հետո ոստիկանությունը կիրառեց հատուկ միջոցներ՝ լուսաձայնային պայթուցիկ սարքեր և

արցունքաբեր գազ, միննույն ժամանակ առաջ շարժվելով ցուցարարների ուղղությամբ: Ցուցարարները ցրվեցին, իսկ ոստիկանության որոշ աշխատակիցներ սկսեցին հետապնդել առանձին ցուցարարների՝ ընդհուպ մինչև նրանց հետևից վազելով հարակից շենքերի բակեր: Բախումները Խորենացի փողոցում ավարտվեցին մոտ ժամը 22:30-ին, իսկ ցուցարարները հավաքվեցին մեծամասամբ հարակից Տիգրան Մեծ պողոտայում:

Հուլիսի 17-ից սկիզբ առած հավաքներից սա առաջինն էր, երբ Ոստիկանությունն ուներ օրինական հիմք հավաքը դադարեցնելու համար: Հավաքն իր բնույթով խաղաղ չէր, հավաքի ընթացքում կազմակերպիչների և մասնակիցների կողմից հնչում էին բռնության կոչեր և իրենց կոչերով նրանք բացահայտեցին բռնություն կիրառելու իրենց մտադրությունը: Հավաքի մասնակիցների նախահարձակ գործողություններից, ոստիկանները, մի որոշ ժամանակ պաշտպանվում էին: Հաշվի առնելով, թե հասարակական անվտանգության տեսանկյունից ինչ վտանգավոր իրավիճակ կստեղծվեր, եթե ցուցարարները ճեղքեին ոստիկանության շարքերը, այնուհետև արգելապատնեշը և շարժվեին ՊՊԾ գնդի ուղղությամբ, Ոստիկանությունն այլընտրանք չունեց, քան հատուկ միջոցներ կիրառելը և հավաքը ցրելը: Այսպիսով, ցուցարարների գործողությունները անօրինական էին և նման գործողություններով ցուցարարները չարաշահեցին խաղաղ հավաքների իրենց սահմանադրական իրավունքը: Դրա հետ միասին, Ոստիկանության կողմից նույնպես թույլ տրվեցին խախտումներ՝ չպահպանելով արձագանքման համաչափության սկզբունքները (այս մասին առավել մանրամասն խոսվում է սույն զեկույցի 3-րդ գլխում):

Երբ հավաքը ցրվեց, որոշ ժամանակ անց, ցուցարարները վերադարձան և սպասողական վիճակում հանգրվանեցին ոստիկանության շարքերից մինչև 50 մետր շառավղով հեռավորության վրա՝ Խորենացի-Քրիստափոր փողոցների խաչմերուկում: Նրանք իրենց և ոստիկանների շարքերի միջև կառուցեցին բարիկադներ մոտակա տարածքներից բերված աղբամաններով՝ փակելով նաև Խորենացի փողոցին զուգահեռ Տիգրան Մեծ պողոտայի մի մասը: Ոստիկանները շարունակեցին մի քանի շարքերով կանգնած մնալ իրենց նախկին դիրքում՝ Խորենացի փողոցի վրա արգելապատնեշի դիմաց: Այդ իրավիճակը տևեց մի քանի ժամ: Թեև երկու կողմերն էլ ակտիվ միջոցների չէին դիմում, սակայն դրությունը շարունակում էր մնալ լարված:

Ժամը 04:00-ի սահմաններում, Ոստիկանության մի բարձրաստիճան աշխատակից բարձրախոսով երկու անգամ հայտարարեց, որ հավաքն անօրինական է, որ հավաքի մասնակիցները խախտում են հասարակական կարգն ու բնակիչների անդորրը, և պահանջեց դադարեցնել հավաքը՝ տալով 15 րոպե ժամանակ: Ցուցարարները չլքեցին տարածքը: Ժամանակը լրանալուց հետո՝ ոստիկանության աշխատակիցները իրենց շարքերից ճանապարհ բացեցին, որտեղից արագորեն վազելով դուրս եկան ոստիկանական համազգեստով և քաղաքացիական հագուստներով անձինք, վազեցին ցուցարարների ուղղությամբ և սկսեցին առանց ընտրության բռնել ու բերման ենթարկել նրանց: Դրանից հետո ցուցարարները ցրվեցին և հավաքը դադարեց: Առավոտյան Տիգրան Մեծ պողոտայում երթևեկությունը վերականգնվեց:

Թեև այս իրավիճակում ոստիկանության ծառայողները նախահարձակ եղան, սակայն իրավիճակը գնահատելով մի քանի ժամ առաջ ծավալված դեպքերի ընդհանուր լույսի ներքո կարելի է եզրահանգել, որ շարունակում էր պահպանվել բռնության անխուսափելի վտանգ, որն էական պայման է ոստիկանության կողմից հավաքը ցրելու անհրաժեշտությունը և օրինական հիմքերը գնահատելու համար՝ հատկապես հաշվի առնելով, թե հանրորեն ինչ վտանգ ու անկանխատեսելի հետևանքներ կարող էր առաջացնել ցուցարարների գործողությունները, եթե նրանց հաջողվեր ձեռքի ոստիկանության շարքերը և նրանց հետևում գտնվող արգելապատնեշը:

Անհրաժեշտ է գնահատել նաև այն, որ ծավալվող դեպքերը լրջորեն խաթարում էին շրջակա բնակիչների անդորրը, հասարակական կարգը: Դեպքերը տեղի էին ունենում գիշերվա ուշ ժամին, և այդ իրավիճակը շարունակվում էր արդեն բավականին երկար:

Մարդկանց փոքրաթիվ խմբերով հավաքները նույն վայրում և դրա հարակից պուրակում շարունակվեցին հուլիսի 21-ի ողջ օրվա ընթացքում, սակայն դրանք անցան առանց լուրջ միջադեպերի:

Հուլիսի 21-ի վաղ առավոտից սկսած Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի առանձին խմբեր քաղաքացիների ահազանգերի հիման վրա սկսեցին այցերը ոստիկանության ստորաբաժանումներ՝ իրավիճակին և բերման ենթարկված քաղաքացիների իրավական հիմքերին ծանոթանալու նպատակով: Պաշտպանը նաև այցելեց բժշկական հաստատություններում գտնվող ոստիկաններին ու հավաքի մասնակիցներին: Հրապարակային հայտարարությամբ Պաշտպանը մտահոգությունը հայտնեց գիշերվա բախումների առնչությամբ՝ հիշեցնելով, որ «Հավաքների ազատության մասին» օրենքով խաղաղ հավաքի ընթացքում անհրաժեշտ է պահպանել հավաքի խաղաղ բնույթը, ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք նպատակաուղղված են հավաքի խաղաղ բնույթը վտանգելուն¹⁴:

Հուլիսի 21-ին Եվրոպական միության պատվիրակությունը՝ Հայաստանում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունների ղեկավարների համաձայնությամբ տարածեց հայտարարություն՝ մտահոգություն հայտնելով անհամաչափ ուժի կիրառման և ոստիկանության կողմից իրականացված զանգվածային ձերբակալությունների մասին զեկույցների առնչությամբ, և իշխանություններին կոչ արեց հարգել համաչափության սկզբունքը խաղաղ բնույթի, ինչպես նաև բռնությամբ ուղեկցվող հանրային բողոքի ակցիաների առնչությամբ: Միաժամանակ, հայտարարությամբ կոչ արվեց ցուցարարներին ձեռնպահ մնալ բռնի գործողություններից՝ իրենց քաղաքացիական իրավունքների իրացման ընթացքում: Ի գիտություն ընդունելով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված հայտարարությունները, ԵՄ պատվիրակությունը հայտարարությամբ իշխանություններին հորդորեց լիարժեք քննություն կատարել ոստիկանների կողմից իրականացված բոլոր իրավախախտումների մասին հաղորդումների առնչությամբ, այդ

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը Ֆեյսբուքի էջում՝ տողատակի ծանոթագրություն 7:

թվում՝ նրանց կողմից ոչ պատշաճ վերաբերմունքի և իրավապաշտպանների և բուժօգնության մերժման առնչությամբ¹⁵:

2016 թվականի հուլիսի 22-25-ի հավաքները

Հուլիսի 22-25-ը Խորենացի-Քրիստափոր փողոցների հատվածում շարունակվեցին հավաքները, որոնք երբեմն սակավամարդ էին՝ մինչև 100 մարդու մասնակցությամբ, իսկ երբեմն էլ բազմամարդ: Կազմակերպիչները հավաքների մասին չիրազեկեցին լիազոր մարմնին՝ ինչպես նախկին բոլոր հավաքների դեպքում: Միննույն ժամանակ, հավաքների արգելման մասին որոշում նույնպես չէր կայացվել համայնքային լիազոր մարմնի կողմից:

Հավաքներին ելույթներով հանդես էին գալիս քաղաքական գործիչներ, քաղաքացիական ակտիվիստներ ու տարբեր նախաձեռնությունների անդամներ: Հավաքները իրենց բնույթով խաղաղ էին: Թեև առկա էր հավաքներին բնորոշ հռետորաբանություն, սակայն բռնության կոչեր և բռնության դեպքեր չեն արձանագրվել: Այս հավաքների մասնակիցները և կազմակերպիչները հստակորեն հայտարարում էին իրենց խաղաղ մտադրության առկայության մասին: Ոստիկանությունը չէր միջամտում հավաքների անցկացմանը, քանի որ բացակայում էր բռնությունների անխուսափելի վտանգ:

Այսպիսով, բացառությամբ այն հավաքների, որոնցում մասնակցում էին մինչև 100 մասնակիցներ, մնացած բոլոր հավաքները անօրինական էին, քանի որ անցկացվում էին առանց իրազեկման: Դրանք ինքնաբուխ կամ շտապ հավաքներ չէին, որ բացառվեր իրազեկման պահանջը: Այդուհանդերձ, քանի որ մասնակիցները ունեին խաղաղ մտադրություն, ինչպես նաև, որ հանրային կարգի ու այլոց իրավունքների միջամտությունը նվազ էր և ոչ ավելին, քան սովորաբար տեղի է ունենում հանրահավաքների ժամանակ, իշխանությունները դրսևորեցին հանդուրժողականություն և չմիջամտեցին մասնակիցների հավաքների ազատության իրավունքին:

2016 թվականի հուլիսի 26-28-ի հավաքները

Հուլիսի 26-ին Ոստիկանությունը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ այն մասին, որ Խորենացի փողոցի արգելափակված հատվածում առկա էր լարվածության կտրուկ սրման իրական և անմիջական վտանգ՝ անկանխատեսելի հետևանքներով, և որպես նման վտանգի առկայություն՝ իրավապահ մարմնի կողմից փաստվեց, որ հարուցված քրեական գործի քննության ընթացքում ստացվել էին

¹⁵ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ http://eeas.europa.eu/.../all_news/news/2016/2016_07_21_hy.htm:

հավաստի տվյալներ առ այն, որ զինված խմբի անդամներն անմիջականորեն ուղղորդում և ուղղակի ցուցումներ էին տալիս դրսում գտնվող անձանց՝ կազմակերպելու և իրականացնելու քաղաքացիների կյանքն ու առողջությունը վտանգող, այդ թվում՝ խուճապ սփռող և բախումներ հրահրող հանցավոր գործողություններ, որի պայմաններում հավաքի մասնակիցների կյանքին և առողջությանը, ինչպես նաև հասարակական անվտանգությանը սպառնացող վտանգը հնարավոր չէր կանխել այլ կերպ, քան հավաքը մեկ այլ վայր տեղափոխելու միջոցով: Ուստի, հայտարարությամբ Ոստիկանությունը պահանջեց հավաքի փաստացի ղեկավարներից սեղմ ժամկետում հավաքը տեղափոխել մեկ այլ վայր, որտեղ խաղաղ հավաքներին աջակցելու ՀՀ ոստիկանության պարտականությունների սահմաններում հնարավոր կլինեք ապահովել հավաքի մասնակիցների անվտանգությունը:

Չնայած այդ հայտարարությանը՝ հուլիսի 26-ին Կենտրոն վարչական շրջանի փողոցներով անցկացվեց բազմամարդ երթ: Կեսգիշերին երթի մասնակիցները վերադարձան Խորենացի փողոցի արգելափակված հատվածը: Ոստիկանությունը դադարեցրեց հավաքը և բերման ենթարկեց հավաքի 60-ից ավել մասնակցի:

Հուլիսի 27-ին Ոստիկանությունը կրկին հայտարարեց, որ Խորենացի փողոցի արգելափակված հատվածում արգելվում է հավաք անցկացնել՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Այդ օրն առավոտյան ժամերին ոստիկանության աշխատակիցները առանց ընտրության Խորենացի փողոցից բերման ենթարկեցին քաղաքացիների՝ այդ թվում ոչ միայն այդ վայրում բողոքի ցույց անել պատրաստվող քաղաքացիների, այլ նաև պատահական անցորդների և հարակից շենքերի բնակիչների: Ոստիկանության այս քայլն ավելի էր մեծացնում լարվածությունը:

Նույն օրը երեկոյան Ազատության հրապարակից մեկնարկեց բազմամարդ երթ ղեպի Խորենացի փողոց, որտեղ կենտրոնացվել էին ոստիկանության մեծ ուժեր: Հավաքի կազմակերպիչները, ցուցարարները երթի ժամանակ պարբերաբար հայտարարում էին, որ երթն անցկացվում է խաղաղ նպատակով: Հասնելով Խորենացի փողոց, ցուցարարները նստացույց հայտարարեցին և պահանջեցին ոստիկանությունից ազատ արձակել նախորդ օրը բերման ենթարկված քաղաքացիներին: Սակայն, որոշ ժամանակ անց հավաքը դադարեց՝ մասնակիցների ցրվելու հետևանքով: Հավաքի կազմակերպիչները հայտարարեցին հաջորդ օրը երեկոյան Ազատության հրապարակում հավաք անցկացնելու մասին:

Հուլիսի 28-ին հայտարարվեց Խորենացի փողոցում երեկոյան հավաք կազմակերպելու մասին¹⁶: Ոստիկանությունը առավոտվանից արգելում էր քաղաքացիներին կանգնել Խորենացի փողոցում արգելված հատվածում, իսկ երեկոյան

ժամը 19:00-ից սկսեց հավաքի ներկայացած անձանց բերման ենթարկել: Հավաքի կազմակերպիչները որոշեցին հավաքը տեղափոխել Ազատության հրապարակ: Այստեղ տեղի ունեցավ բազմամարդ հավաք, որից հետո մասնակիցները երթով շարժվեցին ղեպի Խորենացի փողոց: Ոստիկանությունը չարգելեց նրանց մուտքը Խորենացի փողոցի

¹⁶ Տե՛ս հայտարարության մասին հետևյալ հղումով՝ <http://www.azatutyun.am/a/27886270.html>:

արգելված հատված: Հավաքի մասնակիցները որոշեցին նստացույց անել Խորենացի փողոցում: Այդ ընթացքում հավաքի կազմակերպիչներից մեկն առաջարկեց ճեղքել ոստիկանների արգելապատնեշը, հասնել ՊՊԾ գնդի տարածք և միանալ զինված խմբին, սակայն հավաքի մասնակիցները չընդունեցին այդ առաջարկը: Որոշ ժամանակ անց հավաքը դադարեց մասնակիցների ցրվելու պատճառով:

Հուլիսի 25-ից 28-ը տեղի ունեցած դեպքերի առնչությամբ պետք է կրկին փաստել, որ ՀՀ ոստիկանությունը հավաքներն արգելելու իրավագոր մարմին չէ: Հետևաբար, Ոստիկանության հուլիսի 26-ի և 27-ի հայտարարությունները չէին կարող ունենալ իրավական նշանակություն և հիմք հանդիսանալ Խորենացի փողոցում անցկացվող հավաքներն անօրինական որակելու և դադարեցնելու համար:

Հավաքները արգելելու իրավասությունը պատկանում է Երևանի քաղաքապետարանին, որը նշված օրերի վերաբերյալ հավաքները արգելելու մասին որոշում չի կայացրել: Մյուս կողմից, անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք նոր հանգամանքներ, որոնք ստիպեցին Ոստիկանությանը տարածել հուլիսի 26-ի և 27-ի հայտարարությունները: Մասնավորապես, հուլիսի 26-ին կտրուկ սրվել էր դրությունը ՊՊԾ գնդի տարածքի շուրջ: Հուլիսի 25-ի լույս 26-ի գիշերը տեղի էր ունեցել հրաձգություն ոստիկանության և զինված խմբի միջև, զինված խմբի անդամները կատարում էին քաղաքացիների, այդ թվում՝ հարակից տների բնակիչների կյանքի և առողջության համար վտանգավոր գործողություններ գնդի տարածքից դուրս, ինչին ոստիկանության ծառայողները ստիպված էին արձագանքել հրագնի կիրառումով: Սա նաև սրում էր իրավիճակը և ավելացնում լարվածության մթնոլորտը երկրում: Շարունակ ընթացող հավաքների ընթացքում հավաքների կազմակերպիչները, այդ թվում նաև մասնակիցները, ավելի ու ավելի հաճախ էին հայտարարում կտրուկ գործողությունների անցնելու, ոստիկանության արգելապատնեշը ճեղքելու և զինված խմբի անդամներին միանալու, զինված գործողությունների միջոցով իշխանությունների հրաժարականին հասնելու մասին: Այդ ամենին հավելված, Ոստիկանությունը հայտնեց քրեական գործի քննության ընթացքում ստացված նոր փաստերի մասին առ այն, որ զինված խումբը ՊՊԾ գնդի տարածքից հրահանգներ էր տալիս ոստիկանության արգելապատնեշի մյուս կողմում գտնվող հավաքի մասնակիցներին կազմակերպելու և իրականացնելու խուճապ տարածող և բախումներ հրահրող գործողություններ: Հրապարակային տեղեկությունները թույլ են տալիս նշել, որ նման փաստերի ամբողջության հիման վրա Ոստիկանությունը օբյեկտիվորեն կարող էր եզրահանգել, որ առկա էր հանրային վտանգավորություն ներկայացնող բռնության իրական սպառնալիք: Այդուհանդերձ, նույնիսկ նման պայմաններում իրավասու չէր կայացնել հավաքն արգելելու մասին նախնական որոշում: Այդպիսի լիազորությամբ օժտված էր համայնքային իշխանությունը, կոնկրետ դեպքում՝ Երևանի քաղաքապետարանը, մինչդեռ վերջինս նման որոշում չէր կայացրել:

Ինչ վերաբերում է քաղաքացիներին ոչ ընտրողական եղանակով բերման ենթարկելուն, ապա առանց անհատապես նրանց կողմից իրավախախտում կատարած լինելու կասկածի հիման վրա նրանց ազատությունից զրկելը, թեկուզ համեմատաբար

կարճ ժամանակահատվածով, հանդիսանում է անձնական ազատության և հավաքների ազատության իրավունքների կոպիտ միջամտություն:

Հուլիսի 26-ին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ ընդգրկուն հայտարարությամբ, որում ինը կետի շրջանակներում շարադրեց իր դիրքորոշումը և առաջարկները ՊՊԾ գնդի շուրջ ծավալվող իրադարձությունների առնչությամբ: Պաշտպանը, մասնավորապես, առաջարկեց պետական մարմիններին գործադրել բոլոր ջանքերը մարդկանց հավաքների ազատության, անձնական ազատության և վատ վերաբերմունքի արգելքի իրավունքի խախտման դեպքերից յուրաքանչյուրով պատշաճ քննություն իրականացնելու և խախտում թույլ տված յուրաքանչյուր պաշտոնատար անձի պատասխանատվությունն ապահովելու համար՝ օրենքի ողջ խստությամբ:

Այնուհետև, նա պահանջեց յուրաքանչյուր պետական իրավասու մարմնից հանրությանը պարբերաբար և համակարգված բնույթի հրապարակային հաշվետվություն ներկայացնել իր կողմից ձեռնարկված կամ ձեռնարկվող միջոցների մասին: Պաշտպանը նշեց, որ այդպիսի համակարգային մոտեցումը կունենա կարևոր նշանակություն՝ հետագայում նման խախտումները կանխարգելելու և իրավապահ մարմինների գործունեության հանդեպ վստահություն ապահովելու տեսանկյունից: Այդ կերպ նաև կապահովվի քաղաքացու նկատմամբ բռնության կամ նրա իրավունքի իրականացմանը անհիմն միջամտության արգելքների գործնական երաշխավորումը: Պաշտպանը կրկին հավաքների մասնակիցներին հորդորեց խստորեն պահպանել հավաքի խաղաղ բնույթը և բացառել օրինականության սահմաններում գործող ոստիկանների նկատմամբ ագրեսիայի կամ վիրավորանքի ցանկացած դրսևորում:¹⁷

Հուլիսի 27-ին հաղորդագրություն տարածեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը, որով ողջունեց Պաշտպանի հայտարարությունը և միացավ շարունակաբար զսպվածություն դրսևորելու վերաբերյալ բոլոր կողմերին ուղղված նրա կոչին: Հաշվի առնելով հուլիսի 26-27-ի զարգացումները, ԱՄՆ դեսպանատունը բոլոր կողմերին հորդորեց ցուցաբերել առավելագույն զսպվածություն, գործել օրենքի սահմաններում ու հանդես բերել իրավիճակի խաղաղ հանգուցալուծման հանձնառություն¹⁸:

2016 թվականի հուլիսի 29-ի հավաքները

2016 թվականի հուլիսի 29-ին ժամը 19:30-ին Ազատության հրապարակում մեկնարկեց հերթական հանրահավաքը, որին սկզբում ներկա էին մի քանի հարյուր մասնակիցներ, սակայն նրանց թիվն էապես ավելացավ առաջիկա մեկ ժամվա ընթացքում: Հավաքի սկզբում ելույթ ունեցողները հայտարարեցին, որ կես ժամ առաջ վիրավորվել են զինված խմբի ևս երկու անդամներ և որ հասել է պահը, որ անհրաժեշտ է

¹⁷ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը և առաջարկները Երևանում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ, կետ 5: Հուլիսի 26, 2016: Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://web.facebook.com/Armenianombudsman/posts/551780361676099>:

¹⁸ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/136697>:

միավորվել ու գնալ «մեր տղաների մոտ», քանի որ քիչ ժամանակ է մնացել, և որ հնարավոր է, որ սա լինի վերջին հանրահավաքը: Մեկ այլ ելույթ ունեցող հայտարարեց, որ անհրաժեշտ է սկսել քաղաքացիական խաղաղ անհնազանդության գործողություններ մայրաքաղաքում և շրջաններում, իսկ հաջորդ ելույթ ունեցողը հայտարարեց, որ իրենք դեմ են արյունահեղությանը, և որ որևէ մեկի վրա հարձակվելը իրենց նպատակը չէ, որ իրենց նպատակն է կանխել արյունահեղությունը ՊՊԾ գնդի տարածքում, որի համար անհրաժեշտ է բազմամարդ երթով գնալ ու մնալ Խորենացի փողոցում: Վերջին ելույթ ունեցողը հայտարարեց երթի երթուղու մասին: Նա նշեց. *«հիմա մենք երթով շարժվելու ենք դեպի Խորենացի սաստար կանգնելու մեր տղաներին...մենք պետք է գնանք Խորենացի ու մնանք այնտեղ...մենք հիմա շարժվում ենք Թումանյանով, Աբովյանով, Պուշկինով, Վարդանանցով, Նար-Ռոս...հետո կհիմանաք»*¹⁹: Այս հայտարարությունից հետո կազմակերպիչները հայտարարեցին հանրահավաքի ավարտի մասին և մասնակիցներին առաջարկեցին պատրաստվել երթի:

Երթը սկսվեց Թումանյան փողոցից, որից հետո երթի մասնակիցները վանկարկումներով շարժվեցին Պուշկին փողոց, Վարդանանց փողոցով միացան Նար-Ռոս փողոցին: Երթն ուղեկցվում էր տարբեր վանկարկումներով, իսկ կազմակերպիչները ողջ ընթացքում քայլում էին սկզբից: Երթը շարժվում էր Նար-Ռոս փողոցով և երբ երթի առաջամասը հասավ Աղյուսագործների փողոցի խաչմերուկ, առաջին շարքերը հանկարծակի սկսեցին վանկարկել «Սարի թաղ, Սարի թաղ» և այդ պահին երթի կազմակերպիչներն, ովքեր քայլում էին դիմացից, անսպասելիորեն թեքվեցին դեպի ձախ՝ Աղյուսագործների փողոց և երթի մասնակիցներից մի մասին տարան իրենց հետևից, իսկ մասնակիցների մնացած մասը շարունակեց շարժվել Խորենացի փողոցի ուղղությամբ (տե՛ս Քարտեզներ 2 և 3):

Երթն ուղեկցող ոստիկանները, ովքեր ակնհայտորեն չէին սպասում նման շրջադարձի, փորձեցին դեպի Սարի թաղ շարժվող երթի մասնակիցներին կանգնեցնել և հրահանգել վերադառնալ նախապես հայտարարված ուղի, սակայն նրանց դա չհաջողվեց: Երթի մասնակիցները, շարունակելով վանկարկել տարբեր կոչեր, արագորեն շարժվեցին Սարի թաղի ուղղությամբ, որտեղ երթի առանձին մասնակիցներ մյուսներին ուղղորդեցին դեպի Սարի թաղի 3-րդ փողոց: Այսպիսով, երթը մտավ Սարի թաղ և մասնակիցները սկսեցին արագորեն շարժվել Սարի թաղի նեղ փողոցներով: Այդ ընթացքում երթի մասնակիցները վանկարկում էին կոչեր, սուլում, բարձրաձայն բղավում: Ի վերջո երթի մասնակիցները հասան Սարի թաղի այն հատվածը, որտեղից ձանապարհը դեպի ներքև երկու ոլորանով միանում էր Խորենացի փողոցին, իսկ բարձունքից հստակորեն տեսանելի էր ՊՊԾ գունդը (տե՛ս Քարտեզ 4): Այստեղ երթի կազմակերպիչները կանգնեցրին երթը և հայտարարեցին. *«մենք պլանավորեցինք, որ գանք ամենամոտ կետը, որտեղից մեր ձայնը կլսվի, և փորձենք այստեղից մեր*

¹⁹ Իրադարձությունների ընթացքը լուսաբանող տեսանյութը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://galatv.am/hy/news/159118/>:

աջակցությունը հայտնենք, ասեմ ձեզ՝ մեր հասարակության, մեր քաղաքացիների մի մասն էլ զնացել է Խորենացի, նրանք էլ այնտեղ են, դրա համար երկու կողմից մեր արձագանքով ոգևորենք մեր տղաներին, և հակառակ կողմի ոգին նվազեցնենք»²⁰։ Երթի մասնակիցները սկսեցին վանկարկել կոչեր՝ ի աջակցություն զինված խմբի։

Մոտավորապես նույն ժամանակահատվածում Խորենացի-Քրիստափոր փողոցների հատման վայր հասած երթի մասնակիցների և ոստիկանների միջև տեղի ունեցավ բախում։ Վերջիններս նրանց նկատմամբ կիրառեցին հատուկ միջոցներ՝ լուսաձայնային պայթուցիկներ, և մասնակիցներից շատերին բերման ենթարկեցին։

Այդ ընթացքում Սարի թաղում գտնվող երթի մասնակիցների միջև սկսվեց տարաձայնություն։ Մի մասը գտնում էր, որ անօգուտ էր սպասել այդտեղ և որ անհրաժեշտ էր իջնել ու միանալ Խորենացի փողոցում գտնվող ցուցարարներին, իսկ մյուս մասը գտնում էր, որ անհրաժեշտ էր սպասել և կոչերով աջակցություն հայտնել զինված խմբին։ Քիչ անց մասնակիցներից ոմանք բաժանվեցին հավաքի մյուս մասնակիցներից և սկսեցին քայլելով իջնել դեպի Խորենացի փողոց։ Որոշ ժամանակ հետո վերադարձան և հայտարարեցին, որ փողոցով դեպի վեր են բարձրանում ոստիկանական ուժեր (տե՛ս, Քարտեզ 4)։ Ցուցարարներից ոմանք մոտեցան ոստիկանության շարքին և սկսեցին բանակցել, իսկ ցուցարարների մեծ մասը մնաց սպասողական վիճակում՝ ոստիկանների շարքից մոտ 50 մետր հեռավորության վրա։ Այդ ընթացքում ցուցարարները ոստիկանների ուղղությամբ սկսեցին նետել քարեր, իսկ վերջիններս պատասխանեցին՝ նետելով լուսաձայնային պայթուցիկներ։ Դա տևեց մի քանի րոպե, որից հետո կողմերը հանդարտվեցին։ Թե՛ ոստիկանները, թե՛ ցուցարարները շարունակեցին կանգնած մնալ իրենց տեղերում։ Քիչ անց ոստիկանության և ցուցարարների ներկայացուցիչները սկսեցին բանակցել։

Ոստիկանությունը պահանջում էր ցուցարարներից ցրվել, որի համար վերջիններիս տալիս է 5 րոպե ժամանակ, իսկ ցուցարարները՝ չմիջատմել հավաքի իրականացմանը։ Այդ բանակցությունները ընթացան լարված, հնչեցին փոխադարձ մեղադրանքներ, այդ թվում՝ հայհոյանք ու ռասսայական բնույթի արտահայտություններ։

Բանակցությունների դադարից քիչ անց ոստիկանության ծառայողները սկսեցին նետել ցուցարարների ուղղությամբ լուսաձայնային պայթուցիկ նյութեր։ Կիրառված հատուկ միջոցների արդյունքում մոտակա տան բակում սկսվեց հրդեհ, բազմաթիվ, այդ թվում՝ հավաքի մասնակից չհանդիսացող անձինք ստացան տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, պատճառվեց նյութական վնաս, ահաբեկվեցին մոտակա տների բնակիչները²¹։ Հատուկ միջոցների կիրառմանը զուգընթաց ոստիկանության ստորաբաժանումները սկսեցին շարժվել ցուցարարների ուղղությամբ՝ նրանց ստիպելով ցրվել ու դադարեցնել հավաքը։ Որոշ ժամանակ անց բոլոր ցուցարարները դուրս եկան Սարի թաղի տարածքից²²։ Հատուկ միջոցներ կիրառելուց անմիջապես հետո

²⁰ Նույն տեղում։

²¹ Նույն տեղում։

²² Ոստիկանության կողմից անձանց բերման ենթարկելու ձևի ու եղանակների մասին առավել մանրամասն խոսվում է սույն զեկույցի 3-րդ գլխում։

ցուցարարներից շատերը պատասպարվեցին հարակից բնակելի տներում: Խնդիր դարձավ այն, որ ոստիկանները մտնում էին այդ տները և առանց տարբերակելու ու առանց հիմնավորման բերման ենթարկում նաև տների բնակիչներին: Սա էր նաև Սարի թաղում հավաքի հետևանքներից մեկը, որը գիշերով լինելու ու Սարի թաղի՝ հավաքի համար նախատեսված չլինելու արդյունքում՝ բնակիչներին նյութական, ֆիզիկական և հոգեկան վնասներ պատճառեց (այդ ոիսկն ավելի մեծ էր երեխաների, ծերերի և այլ խոցելի խմբերի համար):

Հուլիսի 29-ին Ազատության հրապարակում կազմակերպված հավաքը և դրան հաջորդած երթը իրազեկված հավաքներ չէին: Փաստորեն, բացառությամբ, հուլիսի 17-ին նախատեսվող հավաքների, մնացած բոլոր հավաքները, որոնք անցկացվեցին գրեթե ամեն օր և որոնց մասնակցում էին մեծամասամբ 100-ից ավելի մասնակիցներ, իրազեկված հավաքներ չէին: Այդ հավաքների կազմակերպիչները, ովքեր մեծամասամբ նույն անձինք էին կամ հասարակական միավորումների անդամներ, չէին կատարում հավաքի մասին նախօրոք ծանուցելու մասին Օրենքի հստակ պահանջը: Նշված բոլոր հավաքներն իրենց բնույթով ինքնաբուխ կամ շտապ չէին, որպեսզի օրենքով սահմանված իրազեկելու պահանջը չգործեր: Մինչդեռ **հավաքի մասին իրազեկելը կանոն է, իսկ չիրազեկելը՝ կանոնից բացառություն**, որի համար անհրաժեշտ է, որպեսզի առկա լինեն կոնկրետ ու առանձնահատուկ հանգամանքներ, որոնք սահմանված են Օրենքի 26-րդ հոդվածում: Ինչպես արդեն նշվել է վերևում, այդ հանգամանքները առկա էին հուլիսի 17-ին, իսկ դրան հաջորդած օրերին այդ հանգամանքները բացակայում էին: Ինչպե՞ս կարելի է ինքնաբուխ համարել մի հավաք, որի անցկացման տեղի ու ժամի մասին կազմակերպիչները նախօրոք հրապարակավ հայտարարում են: Հետևաբար, ինչպես հուլիս 29-ի, այնպես էլ մնացած բոլոր հավաքների դեպքում, բացառությամբ հուլիսի 17-ի, հավաքների կազմակերպիչները պետք է պարզապես կատարեին օրենքի պարզ ու հստակ պահանջը: Այն, որ հուլիսի 29-ի հանրահավաքի ու երթի մասին համայնքի լիազոր մարմինը չէր իրազեկվել, նշված հավաքներն ինքնին վերածեցին ոչ օրինական հանրային հավաքների:

Այդուհանդերձ, նույնիսկ օրենքի խախտումով անցկացված հավաքը կարող է համարվել իրավաչափ, եթե համաչափության սկզբունքը պահպանվել է: Տվյալ դեպքում թեև իրազեկում չէր ներկայացվել, հավաքը կամ երթը նախապես արգելելու մասին որոշում համայնքային մարմնի կողմից չէր կայացվել: Ոստիկանությունն էլ իր հերթին չմիջամտեց հանրահավաքի և երթի կայացմանը մինչև Սարի թաղում և Խորենացի փողոցում հատուկ միջոցների կիրառումը:

Խնդրահարույց էր այն, որ երթի կազմակերպիչները շեղեցին երթի մասնակիցներին նախօրոք հայտարարած ուղուց: Թեև հանրահավաքում նրանք հայտարարեցին, որ իրենց նպատակն էր երթով հասնել Խորենացի փողոց, մնալ այնտեղ ու «սատար կանգնել» զինված խմբի անդամներին, նրանք ի վերջո երթի մասնակիցներին ուղղորդեցին դեպի Սարի թաղ: Առավել խնդրահարույց էր այն, որ ո՛չ հանրահավաքի և ո՛չ էլ երթի ընթացքում կազմակերպիչները չբացահայտեցին իրենց իրական մտադրությունները և, փաստորեն, երթի ուղու մասին նախապես չտեղեկացրին

մասնակիցներին, որոնց թվում կային նաև կանայք ու երեխաներ: Մա նշանակում է Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պարտականություններից խուսափում, որի համաձայն՝ հավաքի ղեկավարը պարտավոր է հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: Ընդհանրապես, «Խաղաղ հավաքների ազատության ԵԱՀԿ ուղեցույցի» համաձայն՝ հավաքի կազմակերպիչները պարտավոր են համագործակցել իրավապահ մարմինների և այլ իրավասու պետական կամ համայնքային մարմինների հետ՝ մինչև հավաքի կազմակերպելը, ինչպես նաև դրա ընթացքում՝ ապահովելու համար հավաքի մասնակիցների անվտանգությունը, հավաքի անխափան և անվտանգ անցկացումը և օրինականության պահանջների պահպանումը²³: Ուղեցույցը նույնիսկ հավաքի կազմակերպիչներին պարտավորեցնում է համագործակցել իրավապահ մարմինների և այլ համապատասխան մարմինների հետ՝ գնահատելու համար այն հնարավոր վտանգները, որոնք կարող են ծագել հավաքի ընթացքում, և թե ինչպես պետք է դրանց դիմագրավել և դրանք հաղթահարել²⁴: Ավելին, Ուղեցույցը սահմանում է, որ հավաքների մասին ներպետական օրենքը կարող է հավաքի կազմակերպիչներին իրավաչափորեն պարտավորեցնել ենթարկվել իրավապահ մարմինների աշխատակիցների օրինական պահանջներին, իսկ հրաժարվելու դեպքում՝ ենթարկել պատասխանատվության²⁵: Փաստորեն, ներպետական օրենքի և միջազգային իրավունքի վերը նշված պահանջները խախտվել են երթի կազմակերպիչների կողմից, և այդ խախտումները կատարվել են կանխամտածված կերպով, քանի որ ոչինչ չի վկայում, որ երթի կազմակերպիչները ստիպված էին եղել փոխել երթի ուղին չնախատեսված խոչընդոտի պատճառով: Հանգամանքները ցույց են տալիս, որ հավանաբար դա էր պատճառը, որ երթի ուղին հանրահավաքի մասնակիցներին բացատրելիս, կազմակերպիչներից մեկը թվելով բոլոր փողոցները, Նար-Ղոս փողոցը թվելուց հետո ասաց. «հետո կիմանաք»:

Ի հավելումն, երթը Սարի թաղ առաջնորդելն անհամաչափ միջամտություն էր այլոց սահմանադրական իրավունքներին ու ազատություններին: Մասնավորապես, երթը ընթանում էր Սարի թաղի նեղ ու կիսալուսավորված փողոցներով, ուշ երեկոյան և ուղեկցվում էր մի քանի հարյուր մարդկանց բարձրաձայն կոչերով, վանկարկումներով, սուլոցներով ու բղավոցներով: Թեև հանրային ցանկացած հավաք, որպես կանոն, պատճառում է որոշակի անհարմարություններ շրջակա միջավայրին, օրինակ, բնակիչներին, սակայն տվյալ դեպքում այդ անհարմարություններն ավելին էին, քան դրանցով սովորաբար ուղեկցվում են երթերն ու հանրահավաքները կամ հանրային բողոքի այլ ակցիաները:

Հավաքի կազմակերպիչները, այդ թվում՝ առանձին մասնակիցներ, բազմիցս հայտարարեցին, որ Սարի թաղ գնալով իրենց նպատակն էր աջակցության ուղերձ հղել ՊՊՕ գնդում գտնվող զինված խմբի անդամներին: Հանրահավաքի ժամանակ նրանք

²³ Տե՛ս ԵԱՀԿ ուղեցույցը սողատակի ծանոթագրություն 1-ում՝ կետ 186-187:

²⁴ Նույն տեղում, կետ 189:

²⁵ Կետ 190:

նան հայտարարեցին քաղաքացիական անհնազանդության գործողություններ սկսելու անհրաժեշտության մասին:

Թե՛ առաջինը, և թե՛ երկրորդը տեղավորվում են հավաքների ազատության իրավունքի շրջանակներում՝ քանի դեռ մտադրությունը խաղաղ է: Եթե դա էր նրանց մտադրությունը, ապա ի՞նչ կարիք կար դրա համար երթը և դրան հաջորդած հավաքն անցկացնել Սարի թաղի կիսամութ փողոցներում, երեկոյան ուշ ժամի, էապես խաթարելով բնակիչների հանգիստը, վտանգելով նրանց անվտանգությունը՝ հատկապես հաշվի առնելով, որ նման վիճակը այդ տարածքի բնակիչների համար շարունակվում էր արդեն տևական ժամանակ՝ մոտ 12 օր: Սրան ավելանում է նաև այն, որ Սարի թաղի մի շարք բնակիչների և ոստիկանների միջև մի քանի օր առաջ տեղի ունեցած բախման պատճառով Սարի թաղն արդեն ասոցացվում էր բռնության հետ: Նման հանգամանքներում բնակիչների անձնական կյանքի և տան նկատմամբ հարգանքի իրավունքը անհամաչափ սահմանափակվեց երթի ընթացքում և ոստիկանությունը Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հավաքը դադարեցնելու համար ստացավ ձևական իրավական հիմք այլ անձանց սահմանադրական իրավունքների անհամաչափ սահմանափակումը կանխելու նպատակով, թեև ոստիկանությունը գործեց օրենքի կոպիտ ու անհանդուրժելի խախտումներով՝ մարդկանց մոտ առաջացնելով արդարացի դժգոհություններ:

Բացի վերը նշվածից, ոստիկանությունը սկզբունքորեն իրավասու էր միջամտել հավաքների իրավունքին նաև Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ հիմքով՝ կանխելու համար հանրային շահերի անհամաչափ սահմանափակումը: Այն պահին, երբ ցուցարարները հավաքվել էին Սարի թաղի բարձունքում, իրավիճակը հետևյալն էր. այդ օրը և նախորդ օրերին տեղի ունեցած հավաքների ժամանակ, հանրային այլ հարթակներից (օրինակ՝ ՋԼՄ-ներով և առցանց լրատվամիջոցներով) հավաքների կազմակերպիչները, ինչպես նաև հավաքների շատ մասնակիցներ արդեն բացեիբաց տարածել էին բռնության բազմաթիվ կոչեր՝ հատկապես ընդդեմ ոստիկանների, բազմիցս հայտարարելով, որ անհրաժեշտ է միջամտել ՊՊԾ գնդի շուրջ ոստիկանության հատուկ ստորաբաժանումների կողմից կատարվող գործողություններին: Որոշ դեպքերում այդպիսի միջամտություն բռնության կիրառումով արդեն տեղի ունեցել էր, մասնավորապես՝ երբ հուլիսի 20-ի երեկոյան ցուցարարները նախահարձակ եղան ոստիկանության պատնեշի վրա Խորենացի փողոցում, մինչդեռ վերջիններս պաշտպանում էին դեպի ՊՊԾ գունդ տանող ճանապարհը: Ի հավելումս, այդ օրը նկատելիորեն լարված էր իրավիճակը ՊՊԾ գնդի շուրջ. արդեն մի քանի օր էր, ինչ զինված խմբի անդամները զինված գործողություններ էին իրականացնում ՊՊԾ գնդի տարածքից դուրս:

Ոստիկանությունը հայտարարել էր, որ տիրապետում էր փաստերի, որ զինված խմբի անդամները ուղղորդում էին հավաքների մասնակիցներին և փորձում էին բախումներ հրահրել ցուցարարների և ոստիկանների միջև: Այդ պահի դրությամբ արգելափակված փողոցի մյուս հատվածում՝ Խորենացի-Քրիստափոր փողոցների խաչմերուկում, արդեն տեղի էին ունենում բախումներ ոստիկանության և նույն հավաքի

մասնակիցների մեկ այլ խմբի միջև, իսկ ՊՊԾ գնդից արձակվում էին կրակոցներ ուստիկանների ուղղությամբ: Եվ վերջապես, Սարի թաղում հավաքի կազմակերպիչներն արդեն բացահայտ հայտարարում էին ՊՊԾ գնդի շուրջ ուստիկանների հատուկ ստորաբաժանումների՝ զինված խմբի դեմ ուղղված գործողություններին միջամտելու անհրաժեշտության մասին: Նման փաստերի ամբողջությունից ուստիկանությունը կարող էր ողջամտորեն եզրահանգել, որ **այն պահին**, երբ երթի մասնակիցները հավաքվել էին Սարի թաղի բարձունքում, որտեղից ՊՊԾ գնդի տարածքը ուղիղ տեսանելի էր և գտնվում էր գնդին մոտ, առկա էր **իրական ու անխուսափելի վտանգ**, որ ցուցարարները կարող էին Սարի թաղից իջնել Խորենացի փողոց և միջամտել ՊՊԾ գնդի ուղղությամբ ուստիկանության հատուկ ստորաբաժանումների գործողություններին: Այդ դեպքում կարող էր իրական վտանգ առաջանալ թե՛ ուստիկանների, թե՛ հավաքի մասնակիցների ու լրագրողների, թե՛ Սարի թաղի բնակիչների կյանքի և առողջության համար: Դրա մասին վկայում էին նաև իրավապահ մարմինների տարածած հաղորդագրությունն (այդ թվում՝ տեսանյութերն ու ձայնագրությունը) այն մասին, որ հուլիսի 29-ին, ժամը 21:00-ից մինչև 23:00-ն ընկած ժամանակահատվածում ՊՊԾ գնդի տարածքից, մասնավորապես, գնդի եռահարկ շենքի տանիքի պատուհաններից, ինչպես նաև գնդի հսկիչ անցագրային կետից զինված խմբի անդամները տարբեր զինատեսակներից պարբերաբար կրակ են արձակել Սարի թաղի տարածքում ծառայություն իրականացնող ուստիկանության աշխատակիցների, նշված բնակավայրի տների, ինչպես նաև Խորենացի փողոցի արգելափակված հատվածը վերահսկող իրավապահ մարմինների ծառայողների ուղղությամբ, իսկ Խորենացի փողոցի բեռնատար ավտոմեքենաներով պատնեշի վրա նետել են ձայնալուսային նռնակներ²⁶: Դրանից բացի, Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի ներկայացուցիչների փաստահավաք աշխատանքները Սարի թաղում՝ հավաքից անմիջապես հետո, ցույց տվեցին, որ Սարի թաղի նշված տարածքի փողոցներով ուստիկանական և քաղաքացիական ավտոմեքենաները երթնեկում էին լույսերն անջատված վիճակում՝ ՊՊԾ գնդի տարածքից արձակվող կրակոցների պատճառով: ՊՊԾ գնդի տարածքից հնչող կրակոցների մասին առանձնագրույցների ընթացքում իրարից անկախ նշել են նաև հարակից տների բնակիչները: Անթույլատրելի էր նաև այն, որ այս պայմաններում հավաքի կազմակերպիչները Սարի թաղ հավաքը առաջնորդելիս հաշվի չառան այն, որ երթի մասնակիցների թվում կային երեխաներ, կանայք ու տարեցներ, որոնք նկարագրված պայմաններում առավել խոցելի էին դառնալու և պետք է ենթակա լինեին առջնահերթ պաշտպանության:

Ըստ այդմ, քանի որ ՊՊԾ գնդի տարածքում և դրա շուրջ տեղի էին ունեցել և շարունակում էին տեղի ունենալ հանրային անվտանգության դեմ ուղղված գործողություններ (ուստիկանության գնդի վրա հարձակում, շենքի գրավում, պատանդառություն, հրազենի անօրինական ձեռքբերում, կրում, կիրառում, որոնք

²⁶ <http://www.lragir.am/index/arm/0/country/rss/136939>:

հանգեցրել էին ոստիկանների մահվան ու հրազենային վնասվածքի), որոնք որպես այդպիսին սպառնում էին ողջ հանրության անվտանգությանը, Ոստիկանությունն ըստ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հրահանգելով դադարեցնել Սարի թաղի հավաքը՝ հետապնդում էր **իրավաչափ նպատակ՝ այդպիսով կանխելով հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը** հավաքի մասնակիցների կողմից: Այդպես Ոստիկանությունը կիրառեց համաչափության սկզբունքը՝ ցուցարարներին սկզբում զգուշացնելով դադարեցնել հավաքը, տալով նրանց ժամանակ, և առաջարկելով հավաքը տեղափոխել այլ վայր:

Ինչ վերաբերում է հավաքի սահմանափակման միջոց ընտրված հատուկ միջոցների կիրառմանը՝ պետք է նշել, որ այն խիստ անհամաչափ սահմանափակում էր: Այսպես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է հատուկ միջոցներ գործադրել խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրային միջոցառումները դադարեցնելու ժամանակ: Այն հնարավոր էր սահմանափակել ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 5-րդ կետի ուժով (հանրային կարգի պահպանություն և այլոց հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով). օրինակ՝ Սարի թաղի բնակիչների իրավունքների պաշտպանության նպատակով համաչափ գործողություններով դադարեցնել հավաքը: Հատկապես, որ առանձին բնակիչներ պարբերաբար դժգոհել էին թե՛ ոստիկանների, թե՛ հավաքի մասնակիցների աղմուկից և առաջացրած անհարմարություններից: Սակայն ոստիկանությունն այս պարագայում կիրառեց խիստ անհամաչափ միջոցներ, այդ թվում՝ պայթուցիկ սարքեր (անգամ բնակիչների տներ նետված)²⁷, չորոշակիացված, առանց ընտրողական բնույթի բռնի ուժ, բնակիչների տան և այլ գույքի մասնակի ոչնչացում:

Բազմաթիվ են դեպքերը, երբ Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել և արձանագրվել են ոստիկանության աշխատակիցների կողմից բնակիչների գույքի ոչնչացում, այդ թվում՝ պայթուցիկ սարքերի միջոցով, առանձին անձանց, այդ թվում՝ հավաքի հետ կապ չունեցող, բնակիչների նկատմամբ իրենց իսկ տանը կիրառված ֆիզիկական բռնության դեպքեր, մարմնական լուրջ վնասվածքներ, ֆիզիկական բռնության սպառնալիքներ, անչափահաս երեխաների, կանանց հոգեբանական տառապանքներ և այլն: Այս գործողությունները որևէ կերպ չեն տեղավորվում հավաքների սահմանափակման համար կիրառվող **համաչափ** միջոցների շրջանակներում:

Հուլիսի 29-ին Մարդու իրավունքների պաշտպանն անձամբ այցելել է տուժած քաղաքացիների տներ, ակնատես է եղել պատճառված վնասին: Ավելին, հետագա օրերին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները

²⁷ Պայթուցիկ սարքերից մեկը նետվել է այն պատշգամբ, որտեղ կանգնած են եղել բնակիչներ, իսկ նրանցից մեկը փորձել է տեսանկարահանել ընթացող գործողությունները: Առաջացած պայթյունը վնասել է բնակիչներին, և տան ապակիները կոտրվել են: Բնակիչներն այս ակտը բացատրել են նրանով, որ ոստիկաններին թվացել է, թե այդ պատշգամբում լրագրող է, և պայթուցիկը նրան ահաբեկելու նպատակ է հետապնդել:

պարբերական այցելությունների ընթացքում արձանագրել են Ոստիկանության գործադրած հատուկ միջոցների հետևանքով բնակիչներին պատճառված զգալի վնասները, որոնք ոչ միայն նյութական են եղել, այլ նաև ֆիզիկական և հոգեբանական:

Հարկ է ամրագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի և Երևանի քաղաքապետարանի համագործակցության արդյունքում Մարի թաղում նյութական վնաս կրած զգալի թվով մարդիկ քաղաքապետարանից փոխհատուցում են ստացել և շարունակում էին ստանալ:

Հուլիսի 29-ին և 30-ին տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքում քաղաքացիների նկատմամբ Ոստիկանության ծառայողների կողմից գործադրած բռնության, նրանց կողմից հատուկ միջոցների կիրառման, դրանց հետևանքով հավաքների մասնակիցներին, ինչպես նաև Մարի թաղի բնակիչներին պատճառված վնասների վերաբերյալ հաղորդումներն ու նյութերը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ քրեական հետապնդման հարուցման հարցը լուծելու նպատակով: Ուղարկված նյութերը վերաբերում են թե՛ ոստիկանության ծառայողների, թե՛ քաղաքացիական հագուստով անձանց գործողություններին:

Հուլիսի 30-ին ԵՄ մամուլի խոսնակը հայտարարություն տարածեց Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ՝ հորդորելով ՀՀ իշխանություններին ձեռնպահ մնալու բիրտ ուժի գործադրումից հասարակական հանրահավաքները կառավարելիս, ինչպես նաև հորդորելով ցուցարարներին ձեռնպահ մնալ բռնի գործողություններից՝ իրենց քաղաքացիական իրավունքների իրացման ընթացքում:²⁸ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը նույնպես հանդես եկավ հայտարարությամբ, որով ոստիկանի կորստի վերաբերյալ իր ցավակցությունը հայտնելով՝ քննադատության ենթարկեց Ոստիկանության, ինչպես նաև բժիշկների պատանդառության համար զինված խմբի գործողությունները: ՄԱԿ-ի գրասենյակը միացավ նաև հանդուրժողականության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կոչին²⁹: Այդ օրերին կարևոր էին նաև Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հաղորդագրությունները: Մասնավորապես, հուլիսի 30-ի հայտարարությամբ դեսպանատունը խորը մտահոգություն հայտնեց այն արժանահավատ հաղորդումների կապակցությամբ, որ հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը ցուցարարներին ցրելու նպատակով ոստիկանության կողմից բռնության ու բիրտ ուժ էր կիրառվել, և որ ոստիկանների համար թիրախ են հանդիսացել լրագրողները և նրանց սարքավորումները: ՀՀ կառավարությանը խախտումները անհապաղ կանխելու, հնարավոր կրկնություն ու դրանք հետագայում բացառելու կոչ անելու հետ միասին, դեսպանատունը, նաև կոչ արեց ցուցարարներին պատասխանատու վերաբերմունք հանդես բերել հավաքների ազատության իրավունքն

²⁸ ԵՄ մամուլի խոսնակի հուլիսի 30, 2016թ. հայտարարությունը: Հասանելի է հետևյալ հղումով՝ https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/7556_fr: Հայտարարությունը հայերեն լեզվով հասանելի է նաև ԵՄ Հայաստանի պատվիրակության Ֆեյսբուք սոցիալական ցանցում հետևյալ հղումով՝ https://web.facebook.com/eudelegationtoarmenia/?_rdr:

²⁹ <http://newspress.am/archives/39540>:

իրացնելիս՝ ցուցաբերելով զսպվածություն, գերծ մնալով բռնությունից ու խուսափելով Ոստիկանության Էրեբունու շենքի շուրջ ակտիվ իրադարձություններից:

Դեսպանատունը ողջունեց նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ջանքերն ուղղված ցուցարարների, լրագրողների, անցորդների հանդեպ դրսևորված բռնության դեպքերի փաստագրմանը և բերման ենթարկվածների իրավական պաշտպանությանը: Կարևոր էր հայտարարության այն հատվածը որտեղ նշվում էր, որ դեսպանատունը պատրաստ է շարունակել աշխատանքը քաղաքացիական հասարակության ու կառավարության այն գործիչների հետ, ովքեր իրապես հանձնառու են ամրապնդել իրավունքի գերակայությունը³⁰:

³⁰ <https://armenian.armenia.usembassy.gov/news073016.html>:

Քարտեզ 1.



Քարտեզ 2.



Քարտեզ 3.



Քարտեզ 4.



Գլուխ 2. Անձնական ազատության իրավունքը և այդ իրավունքի սահմանափակման երաշխիքները

1. Անձնական ազատությունից զրկելու իրավական մեխանիզմները

Անձնական ազատության իրավունքը մարդու բնական իրավունքներից ամենացածր, պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական ազատությունն արտահայտող հնարավորությունն է³¹: Անձնական ազատության իրավունքի երաշխավորումն ու իրական պաշտպանությունն է, որ այլ հիմնարար արժեքների թվում ընկած լինելով ժողովրդավարական պետության հիմքում՝ որոշում է այդ պետության իրավական համակարգի զարգացման աստիճանը:

Անձի անձնական ազատության իրավունքը բովանդակային բացահայտում է ստացել միջազգային իրավական փաստաթղթերում: Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք ունի: «ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձեռքարկման կամ կալանքի: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան կոնվենցիոն հոդվածում նշված դեպքերում և օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է անձի ազատության մեջ գտնվելու կանխավարկածը³², որը բացառում է ազատությունից զրկելու հարցում օրենքով հատուկ չնախատեսված որևէ վարքագիծ:

Ազատությունից զրկելու ամենատարածված դեպքերից է, երբ իրավապահ մարմնի ներկայացուցիչը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր կամ այդ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին:

Այս առումով, Եվրոպական դատարանն, օրինակ, «ազատությունից զրկել» է համարում նույնիսկ անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և այդ վայրից նրա

³¹ <http://www.osce.org/hy/yerevan/74940?download=true>:

³² [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf), էջ 7:

հեռանալն արգելելը³³ կամ, ասենք, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ, եթե անձն այդ վայր է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման³⁴: Ընդ որում, ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ: Որոշիչ է այն, որ անձն այլևս չի կարող լքել իր գտնվելու վայրը³⁵:

Մեր երկրում անձնական ազատության իրավունքի սահմանադրական հիմքերն ամրագրված են Սահմանադրության 27-րդ հոդվածում, որը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով (...): Սահմանադրության հենց այս հոդվածով են ամրագրվում այն իրավական երաշխիքները, որոնք կոչված են ապահովելու ազատությունից զրկվելու դեպքում անձի նվազագույն իրավունքների ամբողջական իրացումը, ինչպես նաև բացառելու այդ անձի նկատմամբ օրենքով արգելված վերաբերմունքի որևէ դրսևորում: Սահմանադրությունն այս առումով հստակ ամրագրել է այն իրավունքները, որոնք պետք է երաշխավորվեն ազատությունից զրկելու ամենասկզբնական պահից:

Ընդ որում, Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող դրույթները մեկնաբանելիս պետք է հիմք ընդունել դրանց վերաբերյալ միջազգային իրավաբանության պահանջները: Սա է Սահմանադրության 81-րդ հոդվածի պահանջը: Այլ կերպ՝ սահմանադրական մակարդակով ամրագրվել է, որ անձի իրավունքների և ազատությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու դրանց գործնական իրացման երաշխիքների ապահովման հիմքում պետք է ընկած լինեն միջազգային իրավական մոտեցումները: Անթույլատրելի է անձի հիմնարար իրավունքների և ազատությունների՝ միջազգային իրավական պահանջներին անհամաչափ և անհամատեղելի սահմանափակումը, այդ թվում՝ բավարար իրավական երաշխիքներ չտրամադրելով:

Հայաստանի Սահմանադրությունը, կոնվենցիոն մոդելին համապատասխան, ամրագրում է այն դեպքերի սպառիչ ցանկը, որոնց հիմքով անձին ազատությունից զրկելը կարող է համարվել իրավաչափ: Ավելին, խոսքը ազատության կանխավարկածի խիստ մոդելի մասին է, որն անթույլատրելի է համարում ազատությունից զրկելու որևէ նոր դեպքի սահմանումը:

Այս ամենով հանդերձ, սահմանադրական մեջբերված երաշխիքներն ունեն համընդհանուր նշանակություն և իրավունքների առաջացումը չեն կապում այն հարցի հետ՝ արդյոք անձն ազատությունից զրկվել է քրեական, վարչական կամ, ասենք, նույնիսկ կարգապահական վարույթի շրջանակներում:

³³ Գիլանը և Քուինտոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Gillan & Quinton v. UK*), 12 հունվարի 2010 ., գանգատ թիվ 4158/05:

³⁴ [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf), 17-18 էջերը:

³⁵ Դե Ուայլդը, Ումսը և Վերսիպին ընդդեմ Բելգիայի (*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*), 18 նոյեմբրի 1970թ., գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66:

Այս երաշխիքների արժեքն էլ հենց նրանում է, որ դրանք անմիջականորեն գործող պահանջներ են և պրակտիկ իրացման համար որևէ միջնորդավորված իրավակարգավորման կարիք չունեն:

Չնայած նկարագրված պահանջներին, հուլիսյան իրադարձությունների ընթացքում տեղի ունեցան իրավունքների ակնհայտ խախտման դեպքեր: Այդ դեպքերը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվեցին ինչպես Ոստիկանության ստորաբաժանումներ անընդհատ այցերի, այնպես էլ անհատական բողոքների հիման վրա:

Խախտումների վերհանման հարցում բարդությունն այն էր, որ բերման ենթարկելու կամ ձերբակալման դեպքերի հիմնական մասն այդ օրերին տեղի էր ունենում գիշերով: Դրանով էր նաև պայմանավորված այն, որ իրադարձությունների առաջին իսկ օրից՝ հուլիսի 17-ից սկսած Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն անցավ շուրջօրյա աշխատանքային ռեժիմի՝ հաճախ առանց հերթափոխների, չնայած դրա համար ռեսուրսների ակնհայտ բացակայությանը:

Հուլիսի 17-31-ն ընկած ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման թեժ գծի 116 հեռախոսահամարին ստացվեց 200-ից ավելի հաղորդում ազատությունից զրկելու 335 դեպքի վերաբերյալ: Այս, ինչպես նաև ոստիկանության բաժիններ այցերի հիման վրա ուսումնասիրությունները վկայում են, որ նշված օրերին ոստիկանության ստորաբաժանումներ է բերման ենթարկվել 500-ից ավելի անձ: Պաշտպանի աշխատակազմի Արագ արձագանքման, ինչպես նաև Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ստորաբաժանումների ներկայացուցիչների կողմից իրականացվել է 48 այց ոստիկանության այն ստորաբաժանումներ, որտեղ տեղի են ունեցել առանձնագրույցներ շուրջ 300 անձի հետ:

Հուլիսյան իրադարձությունների հենց սկզբից Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հնչեցին Ոստիկանությանն ուղղված պահանջներ անձին ազատությունից զրկելիս սահմանադրական կանոնների խստիվ պահպանման անհրաժեշտության վերաբերյալ: Դրանք արվեցին ինչպես հրապարակայնորեն, այնպես էլ առանձին բողոքներով՝ Ոստիկանության հետ գրավոր հաղորդակցության միջոցով:

Չնայած հնչող պահանջներին ու կոչերին, Ոստիկանությունը շարունակեց խախտումներ թույլ տալը՝ կապված անձին հավաքի վայրից Ոստիկանության բաժին բերման ենթարկելու, ձերբակալելու կամ որևէ այլ կերպ նրան ազատությունից զրկելու հետ: Խախտումների վերլուծությունը վկայում է, որ դրանց գերակշիռ մասը տեղի էր ունենում հավաքի վայրից (այլ կերպ՝ փողոցից), այսինքն՝ փաստացի արգելանքի վերցնելու պահից մինչև ոստիկանության բաժին բերման ենթարկելու ընթացքում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցով ոստիկանության բաժիններ բերման ենթարկելիս, ինչպես նաև այնտեղ գտնվելու սկզբնական ժամերին:

Խախտումները, մասնավորապես, կապված էին անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու, նրան իր իրավունքներն չպարզաբանելու, ազատությունից զրկվածի նախընտրած անձին (օրինակ՝ ընտանիքի անդամներին) իր գտնվելու վայրի

մասին չտեղեկացնելու, փաստաբանի և բժշկի մուտքը ոստիկանության բաժին չթույլատրելու, վարչական ձերբակալման ժամկետը սխալ հաշվելու և իրավունքների այլ խախտումների հետ:

Այս խախտումներն աչքի ընկան հատկապես այն առումով, որ նպաստեցին հասարակությունում առանց այն էլ ստեղծված բարդ և մարդու իրավունքների տեսանկյունից նախադեպը չունեցող խնդրահարույց իրավիճակում լարվածության մթնոլորտի ու պետական մարմինների նկատմամբ հասարակության անվստահության ձևավորմանը:

Ցավոք, նշված խախտումների կանխարգելման հարցում որևէ լուրջ երաշխիք չի ապահովում նաև ՀՀ օրենսդրությունը: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, որը հիմնված է խորհրդային ֆորմալ մոտեցումների վրա և համակարգային առումով չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, իրավունքների ապահովման տեսանկյունից վաղուց սպառել է իրեն: Այս հարցը համակարգային առումով կարող է լուծել Վարչական իրավախախտումների նոր օրենսգիրքը, որի ընդունումը, սակայն, անընդունելի պատճառներով ձգձգվում է: Անհրաժեշտ փոփոխություններ կատարված չեն նաև գործող օրենսգրքում:

Միջազգային իրավաբանությունն այս հարցում միանշանակ է. անկախ վարույթի տեսակից՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք պետք է օժտված լինի անձի նկատմամբ որևէ տեսակի արգելված վերաբերմունքի բացառումը երաշխավորելուն ուղղված իրավունքներով: Պետությունը պարտավոր է ապահովել անձի այդ իրավունքների իրացումը՝ անկախ նրա ֆորմալ կարգավիճակից. վկա, տուժող, կասկածյալ, մեղադրյալ, հրավիրվող անձ և այլն: Ընդ որում, գործող օրենսդրական կարգավորումները նույնիսկ ազատությունից զրկելը վիճարկելու և ազատ արձակվելու հնարավորություն չեն ապահովում, եթե ազատությունից զրկելն անիրավաչափ է:

Ավելին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքում առկա են հակասական կարգավորումներ, որոնք բացասաբար են ազդում իրավունքների ապահովման պրակտիկայի վրա: Այսպես, օրենսգիրքը նախատեսում է **վարչական ձերբակալումը, բերման ենթարկելը և խախտողի բերումը:** Այս մեխանիզմերը, սակայն, չեն նախատեսում անձի իրավունքները՝ որպես ազատությունից զրկված անձի նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ իրական երաշխիքներ: Բացի այդ, ոչ միայն հստակ տարանջատված չեն բերման ենթարկելու, խախտողին բերելու և ձերբակալման ինստիտուտների նպատակները, կիրառման հիմքերը, այլ նաև ամրագրված չէ անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է կիրառվել այդպիսի միջամտություն:

Անձին ազատությունից զրկելու սկզբնական պահը ճիշտ որոշելը և իրավունքներն ապահովելը կարևոր է նաև այդ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի որևէ դրսևորում, այդ թվում՝ խոշտանգում բացառելու տեսանկյունից: Այդ իրավունքներն են, որ ունենում են կանխարգելիչ նշանակություն: Ուստի, այս պահանջի չապահովումը հանգեցնում է նաև Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:

Հուլիսյան իրադարձությունների հետ կապված հավաքների ընթացքում տեղի ունեցան նաև զանգվածային բերման ենթարկելու դեպքեր: Ընդ որում, դա արվում էր անթույլատրելի եղանակով՝ առանց անհրաժեշտ հիմքերը ազատությունից զրկված անձանց պարզաբանելու:

Իրականում, ազատությունից զրկելու զանգվածային դեպքերը կամ զանգվածային ձերբակալությունները պետք է լինեն բացառություն: Միջազգային պրակտիկայում դրանց ներկայացվում են համապատասխանության բարձր պահանջներ: Պետության իրավասու մարմինների, իսկ կոնկրետ պարագայում՝ ստիկանության կողմից յուրաքանչյուր դեպքում պետք է գործադրվեն բոլոր ջանքերը՝ խուսափելու համար այդպիսի ձերբակալումներից կամ բերման ենթարկելու դեպքերից: Այդպիսի պրակտիկան վտանգավոր է իրավունքների ապահովման տեսանկյունից, քանի որ տարերային գործողությունները հնարավորություն չեն տալիս անհատական մոտեցում ցուցաբերել ազատությունից զրկելիս, ինչը մեծացնում է կամայականության դրսևորումները: Այսպիսի պրակտիկան հակասում է նաև խաղաղ հավաքների ազատության իրավունքին, քանի որ դրա արդյունքում չի իրացվում հենց այդ իրավունքը:

Հավաքների մասնակիցները չպետք է զրկվեն խաղաղ հավաքների ազատության իրավունքից միայն այն պատճառով, որ իրավապահ մարմինները չունեն բավարար ռեսուրսներ կամ որակյալ անձնակազմ՝ անհատական (թիրախային) ձերբակալություններ իրականացնելու համար: Հավաքների մասնակիցները կարող են ձերբակալվել միայն այն դեպքում, երբ առկա են անհրաժեշտ հիմքեր ազատությունից զրկելու համար³⁶:

Ոստիկանության ստորաբաժանումներ այցերը, բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց հետ առանձնազրույցները, ինչպես նաև այդ այցերի ընթացքում Ոստիկանության ծառայողների հետ քննարկումները վկայում են, որ շատ դեպքերում հենց իրենք՝ Ոստիկանության ծառայողները չէին տիրապետում օրենսդրությանը և, իհարկե, նաև սահմանադրական կամ կոնվենցիոն կարգավորումներից բխող իրենց պարտականություններին: Խոսքը վերաբերում է հատկապես այն ծառայողներին, ովքեր պարեկային կամ այլ ծառայության շրջանակներում գտնվում են անձի հետ անմիջական շփման մեջ: Ուստի, այս առումով անհրաժեշտ է հրատապ փոփոխության ենթարկել Ոստիկանության ծառայողների համար Ոստիկանության կրթահամալիրում նախատեսված ուսումնական և վերապատրաստման դասընթացները: Այդ նպատակի արդյունավետ իրականացման համար պետք է նաև փոփոխության ենթարկել Ոստիկանության այն բոլոր ներքին կանոնակարգումները, որոնք վերաբերում են այս խնդիրներին: Սա առաջիկայում պետք է լինի Ոստիկանության առաջնահերթ խնդիրը:

Ցուցարարի կամ ցանկացած այլ անձի հետ շփվող յուրաքանչյուր ոստիկան պետք է սպառնիչ տիրապետի այն իրավունքներին, որ իր կողմից բերման ենթարկվողը կամ ձերբակալվողն ունի, ինչպես նաև այդ իրավունքների իրացումն ապահովող պարտականություններին: Ոստիկանության ծառայողը նաև պետք է հստակ գիտակցի, թե

³⁶ Տողատակի ծանոթագրություն 1. տե՛ս կետ 161-ում:

որ պահից ազատությունից զրկված կհամարվի այն անձը, ում նա մոտեցել է և որ պահից նա պետք է այդ անձի համար երաշխավորի իրավունքներից օգտվելը: Ընդ որում, դա պետք է արվի այնպես, որ յուրաքանչյուր մարդ իր վրա զգա ոստիկանության այդ գիտելիքի սպառիչ արդյունքը: Այս գիտելիքների բացակայությունը պետք է հիմք լինի ոստիկանության ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու կամ պատասխանատվության խիստ միջոցների ենթարկելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշված բոլոր դեպքերի ամփոփման արդյունքում դրանց կապակցությամբ պարզաբանումներ ստանալու, ինչպես նաև կատարված քննության արդյունքում մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու առաջարկներով հարցումներ են ուղարկվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Հատուկ քննչական ծառայության պարզաբանումների համաձայն՝ Ոստիկանության ծառայողների կողմից ենթադրաբար իրենց պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով կամ դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իրենց լիազորությունների շրջանակից, Երևան քաղաքի տարբեր վայրերից ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ անձանց բերման ենթարկելիս նրանց նկատմամբ բռնություն են գործադրել, պատճառել մարմնական վնասվածքներ, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի ժամանակով ապօրինի պահել են այնտեղ՝ անձանց իրավունքներին և օրինական շահերին, հասարակության և պետության օրինական շահերին պատճառելով էական վնաս: Ըստ Հատուկ քննչական ծառայության՝ քրեական այս գործի նախաքննությունը շարունակվում է³⁷:

Հուլիսյան իրադարձությունների օրերին Ոստիկանության խախտումները դատապարտող ու դրանք դադարեցնելու հայտարարություններով հանդես եկան քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական ակտիվիստները³⁸: Այս հարցում արագ արձագանքում էին նաև լրատվության միջոցներն ու լրագրողները, որոնք օգնում էին տարածելու տեղեկություններ ազատությունից զրկված անձանց իրավունքների, դրանք կանխարգելելու ուղղությամբ քայլերի վերաբերյալ: Այս աշխատանքը զգալի աջակցություն էր Մարդու իրավունքների պաշտպանին թե՛ իրավունքների խախտումները վեր հանելու, թե՛ քաղաքացիներին լրացուցիչ պարզաբանող տեղեկություններ ներկայացնելու առումով:

Վերջապես՝ քաղաքացիներին ազատությունից անհիմն զրկելու, նրանց իրավունքները խախտելու պրակտիկայի վերաբերյալ մտահոգող հայտարարություններով մի քանի անգամ հանդես եկան Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը, ԱՄՆ դեսպանատունը, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը, ինչպես նաև միջազգային այլ կառույցներ: Նրանք բոլորն էլ կոչ արեցին

³⁷ Այս մասին ավելի մանրամասն խոսվում է սույն գեկույցի հաջորդ գլխում:

³⁸ «Հայաստանի Հելսինկյան կոմիտե», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ», «Ընդդեմ իրավական կամայականության», «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություններ և այլն:

բացառել իրավունքների խախտումները կամ ազատությունից անհիմն զրկելու դեպքերը: Այդ բոլոր հայտարարություններում ողջունելի համարվեց Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը՝ կապված ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության հետ և կարևորվեց աշխատանքի նույն սկզբունքով շարունակումը³⁹: Հուլիսյան իրադարձություններից անմիջապես հետո հայտարարությամբ հաղես եկավ նաև Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը, որտեղ նույնպես կարևորվում էր Մարդու իրավունքների պաշտպանի կատարած աշխատանքն ու ակտիվությունը⁴⁰:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ այդ օրերի աշխատանքի նկատմամբ միջազգային գործընկերների նման արձագանքներն անգնահատելի կարևորություն ունեին: Դրանք առաջին հերթին կարևոր աջակցություն էին տարվող գործունեությանը, ինչպես նաև վկայում էին այն մասին, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքն այդ բարդ ու նախադեպը չունեցող իրավիճակում կազմակերպվում էր ճիշտ սկզբունքներով:

2. Ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքները և դրանց իրականացումը երաշխավորելու պետության պարտականությունը

Ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշումը և անազատության մեջ պահելու ժամկետները

Հուլիսյան իրադարձությունների օրերին անձնական ազատության իրավունքի հետ կապված իրավիճակը ցույց տվեց, որ Ոստիկանության՝ մարդու հետ անմիջական շփման մեջ գտնվող ծառայողների մոտ ճիշտ պատկերացում չկա ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշման առնչությամբ: Իրականում, ազատությունից զրկելու մեխանիզմի գործադրման սկզբնական պահ պետք է համարել անձին փաստացի արգելանքի վերցնելը՝ անկախ նրա նկատմամբ կիրառվող ներգործության միջոցի կամ անձի կարգավիճակի ֆորմալ անվանումից: Ինչպես վերը նշվեց, դա պետք է կապվի այն բանի հետ, թե արդյոք անձը փաստացի զրկված է սեփական կամքով ազատ տեղաշարժվելու հնարավորությունից և ստիպված է հետևել ոստիկանի կամ որևէ այլ իրավապահ մարմնի ներկայացուցչի կամքին: Հենց այդ պահի հետ պետք է կապվի նաև ազատությունից զրկելու ժամկետի հաշվարկը:

Ազատությունից զրկման պահի ճիշտ որոշումն ունի կարևոր նշանակություն, քանի որ դրանով է պայմանավորված իրավունքների ձեռքբերումը և պետական մարմնի

³⁹<https://armenpress.am/arm/news/855422/amn-despanatuny-mtahogich-e-hamarum-ppts-gndi-taratsqum.html>; <https://armenian.armenia.usembassy.gov/news073016.html>; <http://newspress.am/archives/39540>; http://eeas.europa.eu/archives/delegations/armenia/press-corner/all_news/news/2016/2016_07_21_hy.htm և այլն:

⁴⁰ <http://www.civilnet.am/news/2016/08/01/statement-by-the-co-chairs-of-the-steering-committee-of-the-eastern-partnership-civil-society-forum-on-the-recent-developments-in-armenia/297964>:

համապատասխան պարտականությունների առաջ գալը:

Ըստ այդմ, անձնական ազատությունից զրկված ցանկացած անձ պետք է ունենա առնվազն հետևյալ իրավունքները.

1. անհապաղ տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին՝ իրեն հասկանալի լեզվով,

2. պահպանել լռություն,

3. իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը,

4. հրավիրել փաստաբան,

5. իր պահանջով ենթարկվել բժշկական զննման, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից,

6. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկել և դատարանի կողմից ազատ արձակվել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Այս ցանկը ազատությունից նոր զրկված անձի իրավունքների նվազագույն շրջանակ է: Սա նշանակում է, որ դրանից պակաս իրավունքներ անձը չի կարող ունենալ: Այլ կերպ՝ պետությունն ազատ է ազատությունից զրկվածին այլ իրավունքներ վերապահելու հարցում, սակայն թվարկվածների նախատեսումը պարտադիր նվազագույնն է: **Այս հայեցակարգի իմաստն այն է, որ դրանց երաշխավորումը կամ այդ իրավունքների իրացման ապահովումը ուղղված է անձի նկատմամբ հնարավոր վատ վերաբերմունքը, այդ թվում՝ խռչտանգումը բացառելուն: Դրանք նաև կոչված են երաշխավորելու անձեռնմխելիություն հնարավոր ապօրինի քրեական հետապնդումից:** Ընդ որում, այս իրավունքների շրջանակն բնույթով այնպիսին է, որ ենթադրում է նաև ոստիկանության կամ անձին ազատությունից զրկող այլ մարմինների պարտականությունն ապահովելու այդ իրավունքներից օգտվելու անձի իրական հնարավորությունը:

Այս հայեցակարգի լիարժեք գործադրման համար, նախևառաջ անհրաժեշտ է ապահովել օրենսդրական լիարժեք հիմքերի առկայություն: Մասնավորապես, դրանք պետք է նախատեսված լինեն հիմնարար օրենսդրական ակտերում: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքն, օրինակ, այս առումով չի բովանդակում որևէ արդյունավետ լուծում: Ավելին, առկա կարգավորումներն էլ բացասական են ազդում իրավակիրառ պրակտիկայի վրա: Քննարկվող իրավունքների ապահովման հարցը քրեական վարույթի առնչությամբ որոշակիորեն լուծված է ՀՀ վճռաբեկ դատարանի Գագիկ Միքայելյանի գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ, սակայն կարևոր լուծումներով հանդերձ, համակարգային հիմքերի բացակայության պատճառով, այն այդպես էլ չունեցավ լիարժեք ազդեցություն: Դրան հակառակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն, օրինակ, ոչ միայն նախատեսում է իրավունքների հստակ շրջանակ, այլ նաև դրանց գործնական իրացումը երաշխավորող՝ պետության համապատասխան պարտականություններ⁴¹: ՀՀ վարչական

⁴¹ Մտահոգիչ է այն, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մի քանի տարի է, ինչ գտնվում է ՀՀ խորհրդարանում, և որևէ քայլ չի արվում դրա ընդունմանը նպաստելու համար:

իրավախախտումների նոր օրենսգրքի նախագիծը նույնպես պարունակում է այնպիսի լուծումներ, որոնք կարող են նպաստել այս հարցի լուծմանը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասն, օրինակ, ամրագրում է, որ վարչական ձեռքարկման ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից: Այս հոդվածի իմաստով «բերելու պահից» ձևակերպումը ազատությունից զրկման համատեքստում պետք է ենթադրի անձի ձեռքարկման գործընթացի՝ անձին փաստացի ազատությունից զրկելու փուլը: Մինչդեռ, գործնականում անձի իրավունքների խախտումները՝ կապված ձեռքարկման ժամկետների հետ, վկայում են, որ խնդրո առարկա դրույթը՝ սահմանադրական պահանջներին հակասող մեկնաբանություն և կիրառություն է ստացել: Այս իրավիճակը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում պայմանավորված է նաև նրանով, որ արհեստական բաժանում է իրականացված ազատությունից զրկելու մեխանիզմի առանձին տարրերի միջև: Իրականում, այդ տարրերը պետք է դիտարկվեն իբրև միասնական մեխանիզմի մասեր, որոնցից թեկուզև մեկի ընթացքում արձանագրված խախտումը կարող է հանգեցնել ողջ մեխանիզմի փլուզմանը:

Այդուհանդերձ, հաշվի առնելով այդ օրերին արձանագրված խախտումների կրկնվող բնույթը և դրանց հետագա կանխարգելման հրատապ անհրաժեշտությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմում ներկայացվեց Սահմանադրական դատարան՝ վիճարկելով բոլոր այն օրենսդրական կարգավորումների ու պրակտիկայի սահմանադրականությունը, որոնց հետևանքով տեղի էին ունենում իրավունքների խախտումները: Խոսքը վերաբերում է անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու, այդ թվում՝ այլ անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու, փաստաբանի և բժշկի մուտքը ոստիկանության բաժին չթույլատրելու, վարչական ձեռքարկման ժամկետը սխալ հաշվելու հետ կապված հարցերին և այլն: Այս դիմումի հիման վրա 2017 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1339 որոշմամբ արձանագրեց, որ «անձի ազատության իրավունքի ապահովման բնագավառում ձևավորվել է ոչ իրավաչափ իրավակիրառ պրակտիկա՝ հնարավոր դարձնելով անգամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի՝ ոստիկանության կողմից շարունակական կիրառումը, ինչն իր հերթին երկրում սահմանադրական օրինականությանն ուղղված լուրջ սպառնալիք է»: Ավելին, Սահմանադրական դատարանը նույն որոշմամբ արձանագրեց, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման հետաձգումը և, ըստ այդմ, շարունակվող պրակտիկան Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգության սպառնալիք են:

Անձի իրավունքն անհապաղ տեղեկացվելու ազատությունից զրկվելու պատճառների մասին իրեն հասկանալի լեզվով

Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք պետք է իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվի ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Սա ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված իրավունք է, որն ուղղակիորեն բխում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածից:

Այս կանոնը կոչված է ապահովելու, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ հստակ իմանա՝ ինչու է ինքը զրկվել ազատությունից: Այն նաև երաշխիք է մյուս իրավունքների իրացման համար և հանդիսանում է այդ համակարգի բաղկացուցիչ մասը: Օրինակ՝ երբ անձը տեղեկացնում է փաստաբան հրավիրելու իրավունքի մասին, դա ստեղծում է իրական հնարավորություն օգտվելու իրավաբանական օգնությունից վարույթի սկզբնական փուլերում, որոնք իրավունքների երաշխավորման տեսանկյունից ռիսկային են⁴²:

Պետք է պարզ, անձի համար հասկանալի լեզվով բացատրվեն իրեն ազատությունից զրկելու հիմքերը, որոնք պետք է ունենան փաստական և իրավական հիմնավորում: Դա պետք է արվի այնպես, որ ազատությունից զրկվող անձն, անհրաժեշտության դեպքում, կարողանա, օրինակ, հրավիրել փաստաբան կամ դիմել դատարան՝ ազատությունից զրկման իրավաչափությունը վիճարկելու համար: Մեխանիկական մոտեցումն այստեղ անթույլատրելի է: Այն, թե արդյոք ազատությունից զրկելու պատճառներն անհապաղ են հայտնվել, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվի՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները: Ամեն դեպքում, ազատությունից զրկելու պատճառները պետք է հայտնվեն հենց փաստացի արգելանքի վերցնելու պահին:

Հուլիսյան իրադարձությունների ընթացքում այս իրավունքի խախտումների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք պրակտիկայում ստանում են հետևյալ հիմնական դրսևորումները:

Խոսքն առաջին հերթին, վերաբերում է այն դեպքերին, երբ ազատությունից զրկման հիմքերի կապակցությամբ փաստացի արգելանքի վերցնելիս անձին չի ներկայացվում որևէ պարզաբանում կամ տեղեկություն: Խախտումների այս տեսակն արձանագրվում է դեպքերի ճնշող մեծամասնության պարագայում:

Խախտումների մյուս խումբը վերաբերում էր նրան, որ ազատությունից զրկելու հիմքերը անձին պարզաբանելու փոխարեն՝ ոստիկանության ծառայողների կողմից հղում էր արվում Ոստիկանության լրատվական ծառայությանը կամ խորհուրդ էր տրվում դիմել այդ ծառայություն կամ էլ պարզապես նշվում էր, որ անձը բերման է ենթարկվում այն հիմքով, որն արդեն պարզաբանված կամ տեղ է գտած Ոստիկանության լրատվական ծառայության հրապարակային հայտարարություններում: Այսպիսի պրակտիկան նույնպես անթույլատրելի է. **որևէ մեկը պարտավոր չէ տեղյակ լինել ոստիկանության լրատվական ծառայության**

⁴² Այս իրավունքի երաշխիքային նշանակության մասին տե՛ս, օրինակ, Ֆոքսը, Քեմբլն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (*Fox, Campbell and Hartley v. the United Kingdom*) գործով ՄԻԵԴ վճիռ, գանգատ թիվ 12244/86 12245/86 12383/86, 30/08/1990, կետ 40:

հաղորդումներին և այն էլ դրանցում տեղ գտնող ընդհանրական բնույթի տեղեկությունները որևէ կերպ չեն կարող համարվել անձին ազատությունից զրկելու իրավաչափ հիմք: Ավելին, անգամ եթե անձը հրապարակային աղբյուրից տեղեկացել է համապատասխան հաղորդման մասին, դա ոստիկանության ծառայողներին չի ազատում այդ անձին բերման ենթարկելիս նրան հիմքերը պարզաբանելու սահմանադրական պարտականությունից: Յուրաքանչյուր մարդու ազատությունից զրկման հիմքում պետք է լինեն նրա կողմից ենթադրաբար կատարված կոնկրետ իրավախախտման հատկանիշներ: Հետևաբար, հիմքերի պարզաբանումը պետք է կրի անհատական բնույթ (առանձին բացառություններ կան միայն հատուկ դեպքերում զանգվածային բերման ենթարկելու դեպքերի առնչությամբ, որոնց մասին վերն արդեն խոսվել է):

Խախտումների մեկ այլ խումբ էլ կապված էր այն պրակտիկայի հետ, երբ ազատությունից զրկելու պահին պատճառները պարզաբանելու փոխարեն ոստիկանության ծառայողը պարզապես նշում էր, որ դա կարվի ոստիկանության բաժնում կամ անձին բաժին տեղափոխելու ճանապարհին: Ընդ որում, ազատությունից զրկված անձանց հետ առանձնագրույցները վկայում են, որ պարզաբանումներ այսպիսի խախտումների դեպքերում այդպես էլ առավելապես չեն արվել:

Ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի, այնպես էլ վերջինիս աշխատակազմի հետ առանձնագրույցներում բերման ենթարկվածները նշել են, որ նույնիսկ բաժնում գտնվելու ընթացքում չեն պարզաբանվել ազատությունից զրկելու հիմքերը: Իբրև հիմքերը փաստացի արգելանքի վերցնելու պահին չպարզաբանելու պատճառ՝ հաճախ բերվում էր անընդունելի հիմնավորում այն մասին, որ դա կարվի այն պահին, երբ ոստիկանության բաժնում գտնվողը ստանա ձերբակալվածի կարգավիճակ՝ համապատասխան արձանագրության կամ որոշման հիման վրա:

Մինչդեռ, Սահմանադրական դատարանն, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա արձանագրել է, որ ազատությունից զրկվելու պատճառների մասին տվյալ անձին «անհապաղ տեղեկացնելը» հանրային իշխանության ուղղակի պարտականությունն է և այդ հարցում հայեցողական մոտեցումն անթույլատրելի է: Վկայակոչելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան Սահմանադրական դատարանն իրավացիորեն նշել է, որ սա տարրական երաշխիք է առ այն, որ յուրաքանչյուրն իմանա, թե ինչու է ձերբակալվել կամ կալանավորվել: Ավելին, ազատությունից զրկելու մասին չիրազեկելը նշանակում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված հիմնարար երաշխիքների ամբողջական ժխտում և այդ իրավունքի առավել կոպիտ խախտում:

Անձնական ազատությունից զրկված անձի իրավունքը, որպեսզի այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը

Հուլիսի 17-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման թեժ գծին, ինչպես նաև գրավոր

եղանակով հասցեագրվել է Ոստիկանության բաժնում գտնվելու ընթացքում իր ընտրած անձին տեղեկացնելու իրավունքի խախտմանը վերաբերող 155 բողոք:

Այս իրավունքի հետ կապված՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ **անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Սահմանադրությունը բացառություն է նախատեսել միայն հանցագործությունների կանխման կամ բացահայտման համար, որի դեպքում այս իրավունքի իրականացումը միայն օրենքով սահմանված դեպքերում կարող է հետաձգվել:**

Ազատությունից զրկելու մասին ազգականին կամ իր ընտրությամբ այլ անձի տեղեկացնելու իրավունքը ամրագրված է նաև Եվրոպական դատարանի և խոշտանգումների կանխարգելման ոլորտի կազմակերպությունների իրավական չափանիշներում:

Ազատությունից զրկված լինելու մասին այլ անձանց տեղեկացնելու վերաբերյալ իրավակարգավորում է նախատեսված նաև ՎԻՎՕ 260-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի ադմինիստրացիան: Անչափահասի ձերբակալման մասին նրա ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց տեղյակ պահելը պարտադիր է:

Վերոնշյալից հետևում է, որ ի տարբերություն սահմանադրական նորմի, որով երաշխավորվում է անձի՝ ազատությունից զրկված լինելու մասին անհապաղ իր ընտրած անձին տեղեկացնելու իրավունքը, Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքը սահմանում է այդ իրավունքի իրացման ավելի նեղ շրջանակ: Մասնավորապես, նախատեսված է միայն հարազատներին, աշխատանքի կամ ուսման վայրի ադմինիստրացիային տեղյակ պահելու իրավունք, այն էլ միջնորդավորված ձևով:

ՀՀ սահմանադրական դատարանն, այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՄԴՆ-1059 որոշմամբ լուրջ մտահոգությունն էր հայտնել վարչական ձերբակալման ենթարկված անձի՝ այդ մասին այլ անձանց տեղյակ պահելու իրավունքի իրավակարգավորման և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ: Ըստ այդմ, դատարանը ՎԻՎՕ 260-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել էր հակասահմանադրական: Չնայած Սահմանադրական դատարանի որոշմանը՝ այս իրավունքի օրենսդրական երաշխավորմանն ուղղված փոփոխություններ այդպես էլ չկատարվեցին: Սահմանադրական դատարանի որոշումների կատարման և իրավունքի խախտումները վերացնելու նկատմամբ անհետևողականությունն է պատճառը, որ պրակտիկայում այդ խախտումները կրում են շարունակական բնույթ: Սրա առնչությամբ, 2017 թվականի հունվարի 24-ի ՄԴՆ-1339 որոշմամբ դատարանը ևս մեկ անգամ արձանագրեց, որ այս իրավունքն անմիջականորեն գործող իրավունք է և պրակտիկայում պետք է լինի երաշխավորված:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ և 65-րդ հոդվածները սահմանում են, որ համապատասխանաբար կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն

արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը, հեռախոսակապի կամ հնարավոր այլ միջոցով տեղյակ պահելու արգելանքի տակ գտնվելու իր տեղի և հիմքերի մասին: Այս նորմը, սակայն, չի համապատասխանում միջազգային պահանջներին, քանի որ վերաբերում է միայն նշված դատավարական կարգավիճակն ունեցող անձանց և տեղեկացնելու հնարավորության շրջանակը վերաբերում է միայն մերձավոր ազգականներին:

Այս իրավունքի առանձնահատկությունն այն է, որ դրա իրականացումը կարող է նաև հետաձգվել: Մասնավորապես, այդպիսի հնարավորություն նախատեսված է Եվրոպական դատարանի, ինչպես նաև խոշտանգումների կանխարգելման ոլորտի միջազգային մյուս կազմակերպությունների իրավական չափանիշներում:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե քննարկվող իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով: Այսինքն՝ Սահմանադրությունը այս իրավունքի հետաձգման հնարավորություն նախատեսել է միայն քրեական վարույթի համար: Վարչական իրավախախտման համար բերման ենթարկված կամ ձերբակալված անձի նկատմամբ այս բացառությունը կիրառելի չէ:

Ամեն դեպքում, անգամ քրեական վարույթի շրջանակներում քննարկվող իրավունքի հետաձգման հարցը լուծելիս անհրաժեշտ է հավաստել հետևյալ իրավական պայմանների միաժամանակյա առկայությունը՝ 1) իրավունքի իրականացման հետաձգման վերաբերյալ գրավոր որոշում, 2) կոնկրետ հիմնավորում իրավունքի իրականացումը հետաձգելու վերաբերյալ, 3) հետաձգումը առավելագույնը 7 կամ 8 ժամով, 4) հետաձգելու մասին որոշման կայացում համապատասխան մարմնի վերադասի կամ դատախազի համաձայնությամբ:

Այս հարցի հետ է սկզբունքորեն կապվում նաև ազատությունից զրկման հետագա փուլերում մերձավոր ազգականների կամ իր նախընտրած անձի հետ տեսակցություններ ունենալու իրավունքը: Այն դիտարկվում է ձերբակալվածի կամ կալանավորվածի արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու հիմնարար իրավունքի շրջանակում:

Հուլիսյան իրադարձությունների ընթացքում այս իրավունքի իրականացման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խնդրահարույց պրակտիկայի են հանգեցնում հենց դրա օրենսդրական կարգավորումները: Խոսքը վերաբերում է թե՛ ձերբակալված անձանց, թե՛ կալանավորվածներին, ում սահմանադրական իրավունքներն ակնհայտորեն չէին ապահովվում իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Ընդ որում, այդ առումով, հատկապես կարևոր է ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ կապի ապահովումը:

Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն, օրինակ, Հայաստանի վերաբերյալ 2011 թվականի զեկույցում նշել է, որ անհրաժեշտ է ձեռնարկել

արդյունավետ քայլեր՝ ապահովելու համար, որ կալանավորված անձանց՝ տեսակցություններ ունենալու և հեռախոսակապից օգտվելու իրավունքներն անհիմն կերպով չսահմանափակվեն⁴³:

Կալանավորված անձանց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու կարևորությունն ընդգծվել է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 2-րդ մասի 24.1-րդ կետում, որի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի իրենց ընտանիքների հետ հնարավորինս հաճախ հաղորդակցվել նամակների, հեռախոսակապի կամ այլ հաղորդակցման միջոցներով ինչպես նաև տեսակցություն ունենալ նրանց հետ:

Այս չափանիշներն արտահայտվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում:

Իրականում, ազատությունից զրկված անձի համար ընտանիքի հետ կապի ապահովումն ունի մեծ կարևորություն: Հատկապես ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հարաբերությունները իր ընտանիքի հետ ազատությունից զրկվելու սկզբնական պահից սկսած: Այս կապն է, որ հնարավորություն է տալիս նաև կանխելու հնարավոր ինքնավնասումները, մահվան դեպքերն ու այլ խնդրահարույց իրավիճակները ազատությունից զրկման վայրերում:

Ինքնին հետաքննության կամ նախաքննության առկայության փաստը չի կարող լինել ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքի սահմանափակման հիմք: Նման շփման ցանկացած սահմանափակում պետք է ունենա հատուկ և անհատականացված հիմնավորում: Ընդ որում, հիմնավորման հարցին՝ հատկապես ընտանիքի հետ կապն ապահովելու առումով, միջազգային պրակտիկայում առաջադրվում են բարձր չափանիշներ, ինչպես նաև ժամկետային խիստ սահմանափակումներ:

Ընտանիքի հետ տեսակցությունների կամ շփման ցանկացած սահմանափակում պետք է հիմնավորվի քննության պատշաճ ընթացքի կամ անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով, որը պետք է կիրառվի սահմանափակ ժամկետով՝ դրա հիմքերի մանրամասն շարադրմամբ: Ընդ որում, յուրաքանչյուր որոշում պետք է ունենա անհատականացված հիմնավորում:

Արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու իրավունքի իրականացման առնչությամբ միջազգային պահանջները նախատեսում են նաև այդ իրավունքի իրականացմանը պետության միջամտության հնարավորություն: Սակայն դա պետք է համապատասխանի անհրաժեշտ պայմանների և իրականացվի օրենքով նախատեսված հստակ ընթացակարգին համապատասխան:

Հայաստանի օրենսդրությունն այս առումով բովանդակում է որոշակի

⁴³ ԽԿԿ-ի զեկույցը 2010թ. մայիսի 10-ից 21-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ: Փաստաթուղթ թիվ CPT/Inf (2011) 24, կետ 124-126: Զեկույցի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով. <http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf>:

կարգավորումներ, սակայն դրանք բավարար չեն իրավունքի իրական երաշխավորման համար: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Ինչպես ընդհանրապես, այնպես էլ հուլիսյան իրադարձություններին առնչվող գործերի պրակտիկան վկայում է, որ տեսակցության կամ այլ շփման հնարավորություն սահմանափակող որոշումները չունեն անհատական բնույթի հիմնավորումներ: Դրանք ընդհանրական են և չեն բավարարում պատճառաբանվածության համար անհրաժեշտ չափանիշները: **Ընդ որում, այդ որոշումների կայացման պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ մեծ է կամայական սահմանափակումների ռիսկը, որոնք իրենց հերթին այդ դեպքում կարող են ունենալ ազատությունից զրկված անձին լրացուցիչ զրկանքներ պատճառելու բնույթ՝ մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի հետ կապից զրկելու միջոցով:** Սրա հետ կապված, առաջանում է ևս մեկ խնդիր. տեսակցությունները սահմանափակող որոշումներում անհատական հիմնավորումների բացակայությունը այդ որոշումները ստուգող մարմնին զրկում է դրանք պատշաճ ստուգման ենթարկելու և հիմնավոր ակտ կայացնելու հնարավորությունից: Այսպիսի պրակտիկան անթույլատրելի է, այն ակնհայտ բացասաբար է ազդում նաև ազատությունից զրկման վայրում անձի հոգեբանական վիճակի վրա: Ուստի, պետք է նաև կատարել հրատապ օրենսդրական փոփոխություններ և վերացնել նշված խնդրահարույց պրակտիկան երկրում:

Առաջին, պետք է հստակեցնել օրենքում առկա «քննության շահ» հասկացության բովանդակությունը, քանի որ այն իրավակարգավորման նպատակներին չհամապատասխանող ընդհանրական ձևակերպման պատճառով իրավունքների ապահովման խախտման տեսանկյունից ստանում է վտանգավոր մեկնաբանություն և կիրառության չարաշահում:

Երկրորդ, տեսակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակից պետք է առանձնացնել ազատությունից զրկվածի ընտանիքի անդամներին կամ մերձավոր ազգականներին ու նրանց հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել ավելի խիստ պահանջներ:

Երրորդ, քննություն իրականացնող մարմինը չպետք է ունենա ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ ձերբակալվածի կամ կալանավորվածի տեսակցության իրավունքը սահմանափակելու լիազորություն: Պրակտիկան ցույց է տալիս, որ դա հանգեցնում է չարաշահումների, ինչպես նաև չի համապատասխանում մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին: Այսպիսի լիազորությամբ կարող են օժտված լինել միայն դատախազը՝ գործի՝ մինչդատական վարույթի փուլերում և

դատարանը՝ գործի՝ դատական քննության փուլերում:

Չորրորդ, այս իրավունքը սահմանափակող որոշումները պետք է լինեն պատճառաբանված: Դրանք նաև պետք է անմիջապես հանձնվեն ձեռքարկվածին կամ կալանավորվածին, որպեսզի վերջինս լիարժեք օգտվի բողոքարկման իրավական հնարավորությունից:

Հինգերորդ, ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքը սահմանափակող որոշումը պետք է դառնա պարբերական վերանայման առարկա՝ անկախ ազատությունից զրկված անձի ցանկությունից կամ վերաբերմունքից (ասենք, յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ):

Վեցերորդ, գործը դատական քննության նշանակելու որոշման մեջ նույնպես պետք է հատուկ անդրադարձ կատարվի մինչդատական վարույթում դատախազի կողմից կայացված հիշյալ որոշմանը: Արգելքի պահպանման դեպքում պետք է դատարանի համար սահմանվի պահանջ՝ հիմնավորելու դրա պահպանման անհրաժեշտությունը:

Փաստաբան հրավիրելու և բժշկական զննման ենթարկվելու իրավունքները

Հուլիսյան իրադարձությունների ընթացքում ինչպես գրավոր բողոքների և ահազանգերի, այնպես էլ ոստիկանության բաժիններ այցերի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել 179 բողոք՝ կապված փաստաբանի մուտքը ոստիկանության բաժին խոչընդոտելու հետ:

Ոստիկանության բաժին փաստաբանի մուտքի արգելքն առավելապես հիմնավորվում էր ոչ իրավաչափ պատճառաբանությամբ այն մասին, թե բերման ենթարկված և ոստիկանության բաժնում գտնվող անձը չունի որևէ կարգավիճակ, իսկ փաստաբանի մուտքը կթույլատրվի, երբ նա ձեռք բերի ձեռքարկվածի կարգավիճակ:

Ոստիկանության բաժին փաստաբանի մուտքը չթույլատրելու վերաբերյալ բողոքներ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվում էին նաև փաստաբանների կողմից: Այդ բողոքները վերաբերում էին նաև այնպիսի իրավիճակների, երբ փաստաբանի տեղեկությամբ վստահորդը բերման է ենթարկված, սակայն ազատությունից զրկման կոնկրետ վայրի տեղն իրեն հայտնի չէ, որի պատճառով չի կարողանում այցելել նրան: Օրինակ՝ հուլիսի 27-ին իրավապաշտպան Լևոն Բարսեղյանի փաստաբան Հայկուհի Հարությունյանի կողմից ստացվել էր հաղորդում այն մասին, որ Ոստիկանության Շենգավիթի բաժնում է գտնվում իր վստահորդը, ում չի կարողանում տեսակցել: Նմանատիպ բոլոր դեպքերում իրականացվել է արագ արձագանքում, որի շրջանակներում հնարավոր է եղել աջակցել Ոստիկանության տարբեր բաժիններ փաստաբանների մուտքի իրավունքի պատշաճ իրացմանը:

Ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման տեսանկյունից արագ արձագանքումը հատկապես կարևոր է, քանի որ փաստաբանի մուտքը խոչընդոտելը կարող է հանգեցնել բացասական հետևանքների, այդ թվում՝ անազատության մեջ հետազայում մնալու կամ քրեական հետապնդման ենթարկվելու հետ կապված:

Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայում: Մասնավորապես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն այլ իրավունքների թվում ներառում է նաև **իր փաստաբանին իրավիքելու իրավունքը**:

Փաստաբանի իրավունքի ապահովման կարևոր երաշխիք է նաև վերջինիս կողմից իր լիազորությունների իրականացմանը խոչընդոտող վարքագծի քրեականացումը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 332³-րդ հոդվածի առաջին մասը հանցագործություն է համարում պաշտոնատար անձի կողմից փաստաբանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը:

Նկարագրված նորմով փաստաբանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու սուբյեկտ կարող է լինել միայն պաշտոնատար անձը: Կարծում ենք, այսպիսի կարգավորումը սահմանում է սուբյեկտային առումով քրեաիրավական ազդեցության նեղ շրջանակ: Փաստաբանի գործունեությունը խոչընդոտող սուբյեկտների շարքը կարող է շատ ավելի լայն լինել: Այդ դեպքում դա չի ընդգրկի այն իրավիճակները, երբ օրինակ՝ ոչ թե պաշտոնատար անձն է ուղղակիորեն խոչընդոտում փաստաբանի աշխատանքը, այլ ոչ պաշտոնատար անձինք, թեկուզ հենց այդ պաշտոնատար անձի դրդմամբ կամ հրահրմամբ:

Ուստի, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 332³-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել այնպիսի փոփոխության, որով այս հանցակազմի սուբյեկտ պաշտոնատար անձից բացի կհամարվի ցանկացած այլ այնպիսի անձ, ով խոչընդոտել է փաստաբանի օրինական գործունեությունը:

Դրանից բացի, անհրաժեշտ է նշված հոդվածը լրացնել նոր խմբագրությամբ առանձին մասով, որը պատասխանատվություն կնախատեսի փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

Բժշկական զննման ենթարկվելու իրավունքն ունի հիմնարար նշանակություն: Պետությունը պարտավոր է ապահովել բժշկի կողմից անձի հետազոտումը, եթե կան նման անհրաժեշտություն կամ այդպիսի պահանջ է ներկայացնում ազատությունից զրկված անձը: Այս իրավունքը ներառում է նաև անձի՝ սեփական բժշկի կողմից իր միջոցների հաշվին հետազոտվելու իրավունքը և կարևորագույն երաշխիք է, որ կոչված է բացառելու անձի նկատմամբ որևէ տեսակի վատ վերաբերմունք: Այս իրավունքի պատշաճ իրացումը հնարավորություն է տալիս նաև արձանագրել վատ վերաբերմունքի հնարավոր որևէ դրսևորում և ապահովել մեղավոր անձին պատասխանատվության ենթարկելը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, դրանց շրջանակում Ոստիկանության բաժիններում կատարված ուսումնասիրություններն ու ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցները ցույց տվեցին, որ

պրակտիկայում առկա են դեպքեր, երբ ազատությունից զրկված անձը պնդում է, օրինակ, Ոստիկանության ծառայողների կողմից բռնության գործադրման մասին, սակայն Ոստիկանության կազմած արձանագրությունը չի պարունակում նշում այդ և հետևաբար՝ նաև բժշկական հետազոտության մասին: Կան նաև դեպքեր, երբ բերման ենթարկվածները նշում են, որ իրենք ենթարկվել են անհրաժեշտ բժշկական զննման, սակայն այդ մասին բերված անձանց հաշվառման մատյանում հնարավոր չի լինում գտնել որևէ տեղեկություն, քանի որ ի սկզբանե չի նշվել, որ այդ անձանց վրա հայտնաբերվել են ֆիզիկական ուժի գործադրման հետքեր կամ առկա է եղել բժշկական զննման անհրաժեշտություն:

Այսպիսի պրակտիկան, իհարկե, չի կարող ընդունելի լինել. պետք է խստիվ ապահովել բժշկական զննման ենթարկվելու իրավունքի իրացումը, ինչպես նաև այդ մասին գրառումների կատարումը համապատասխան փաստաթղթերում:

Այսպիսով, փաստաբան հրավիրելու և բժշկական զննման ենթարկվելու իրավունքները կարևորագույն երաշխիքներ են, որ կոչված են պաշտպանելու անձին հնարավոր ապօրինի քրեական հետապնդումից և վատ վերաբերմունքից: Այս երաշխիքները պետք է ապահովվեն ազատությունից զրկելու հենց սկզբից՝ այն պահից, երբ անձը ստիպված է մնալ ոստիկանությունում, այդ թվում՝ վարչական իմաստով ազատությունից զրկելու պահից (և ոչ թե արձանագրության կազմման ժամանակ)⁴⁴: Բանն այն է, որ ազատությունից զրկմանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում սպառնալիքի և ֆիզիկական բռնության ենթարկվելու ռիսկն ամենամեծն է: Հետևաբար, արգելանքի տակ գտնվող անձանց համար փաստաբանի և բժշկի հնարավորությունը հենց այդ ժամանակահատվածում վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք է: Ընդ որում, այդ իրավունքները պետք է ապահովվեն ոչ միայն հանցանք գործելու մեջ կասկածվող, այլ նաև ցանկացած անձի, ով ոստիկանության կամ որևէ այլ իրավապահ մարմնի պահանջի կամ որոշման հիման վրա զրկված է սեփական կամքով ազատ տեղաշարժվելու հնարավորությունից:

Ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու և դատարանի կողմից ազատ արձակվելու անձի իրավունքը:

Ազատությունից զրկվելու փաստով պայմանավորված նվազագույն իրավունքների երաշխավորման համատեքստում կարևոր է նաև ազատությունից զրկելու իրավաչափության բողոքարկման և դատարանի կողմից ազատ արձակվելու անձի հնարավորությանը: Այս իրավունքն ունի թե՛ սահմանադրական, թե՛ կոնվենցիոն հիմքեր:

Սահմանադրության 27-րդ հոդվածի կարգավորման տառին համահունչ՝ ազատությունից զրկման փաստով պայմանավորված անձի միասնական իրավունքների

⁴⁴ Տե՛ս, Կոմիտեի 2002 թվականի զեկույցը Վրաստանի վերաբերյալ (<http://www.cpt.coe.int/documents/geo/2002-14-inf-eng.pdf>):

ապահովման գաղափարի պատշաճ օրենսդրական արտացոլման հրամայականը ենթադրում է ազատությունից զրկման բոլոր ընթացակարգերի, մասնավորապես՝ խնդրո առարկա վարչական ձեռքարկման, ինչպես նաև բերման ենթարկելու և իրավախախտի բերման դեպքերում անձի իրավունքների նվազագույն ծավալի, այդ թվում՝ իրեն ազատությունից զրկելու իրավաչափության՝ դատական կարգով վիճարկման իրավունքի ապահովում: Ընդ որում, սահմանադրական այս իրավունքի ամրագրումն ինքնանպատակ չէ: Դրա հիմնարար նշանակությունը անձի իրավական հնարավորությունն է ազատ արձակվելու՝ իրեն ազատությունից զրկելու ոչ իրավաչափության վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

Մինչդեռ, ՎԻՎՕ 266-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական ձեռքարկումը, անձնական զննությունը, իրերի զննությունը և իրերն ու փաստաթղթերը վերցնելը կարող են շահագրգռված անձի կողմից գանգատարկվել վերադաս մարմնին (պաշտոնատար անձին) կամ դատախազին:

Մեջբերված օրենսդրական կարգավորումից ուղղակիորեն բխում է, որ օրենսգիրքն ամրագրում է վարչական ձեռքարկման իրավաչափության վիճարկման արտադատական կարգ: Ինչ վերաբերում է ազատությունից զրկման այլ ընթացակարգերի՝ բերման ենթարկելու և իրավախախտի բերման իրավաչափության վիճարկման իրավունքի ապահովմանը, օրենսգրքի համապատասխան կարգավորումներն ուղղակի բացակայում են:

Սահմանադրական դատարանը, սրա առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա կայացված որոշման 8-րդ կետով, այդուամենայնիվ, սահմանել է հստակ իրավական դիրքորոշում: Մասնավորապես, ըստ դատարանի՝ անկախ այն հանգամանքից, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածը նախատեսում է, որ վարչական ձեռքարկումը կարող է գանգատարկվել վերադաս մարմնին կամ դատախազին և դրանց հետ մեկտեղ չի նշում դատարանին, չի նշանակում, որ այդ դրույթը բացառում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կանոնակարգված՝ անձի դատական պաշտպանության իրավունքը:

Սահմանադրական նույն պահանջները վերաբերելի են նաև քրեական վարույթի ընթացքում ազատությունից զրկված անձանց՝ անկախ նրանից դա ձեռքարկվում է, կալանք, թե հարկադրանքի որևէ այլ միջոց, որը զրկում է անձին ազատությունից: Այս առումով, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը չունի ձեռքարկվածի ազատ արձակմանն առնչվող հատուկ կարգավորումներ, ինչն արդեն բարդություններ է ստեղծում նոր սահմանադրական կարգավորումների պայմաններում սահմանադրական հիմնարար իրավունքի իրացման համար:

Գլուխ 3. Վերաբերմունքը հավաքների մասնակիցների նկատմամբ և հատուկ միջոցների կիրառումը

1. Հավաքների մասնակիցների նկատմամբ վերաբերմունքը և արգելված վերաբերմունքի կապակցությամբ քննությունն իրականացնելու անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Յուրաքանչյուր պաշտոնատար անձ պարտավոր է միշտ հիշել սահմանադրական այս բացարձակ կանոնները և պահպանել դրանք իր ամենօրյա աշխատանքում: Այդ կանոնները պետք է դրվեն բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների հիմքում:

Պաշտոնատար անձը պարտավոր է քաղաքացու նկատմամբ ցուցաբերել հարգանք և նրա հետ հարաբերություններում լինել հանդուրժող: Միայն այս սկզբունքների պահպանմամբ է հնարավոր հասնել ժողովրդավարական երկրում իրավունքների իրական երաշխավորման հաստատուն պրակտիկայի: Այդ պրակտիկան ենթադրում է նաև արդյունավետ պայքար իրավախախտումների դեմ ու դրա հետ միասին՝ պատասխանատվության անխուսափելի ու խիստ միջոցների կիրառում լիազորությունները գերազանցած կամ ապօրինի գործադրած պաշտոնատար անձանց նկատմամբ:

Ավելի կոնկրետ՝ իրավախախտումը կամ հանրության համար վտանգ ներկայացնող արարքը կանխելու նպատակով պետության իրավասու մարմինների կողմից անձի նկատմամբ ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցի գործադրման ցանկացած դեպք պետք է կոնկրետ իրավիճակի տեսանկյունից լինի պատշաճ հիմնավորված: Այն պետք է լինի անհրաժեշտ և համաչափ՝ կանխելու համար այն իրավախախտումը կամ այլ վտանգը, որն այլ եղանակով հնարավոր չէր անել:

Պետք է բացառել օրենքով արգելված վերաբերմունքի⁴⁵ որևէ դրսևորում պետության կողմից ենթադրյալ իրավախախտում կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող՝ ազատությունից զրկված ցանկացած անձի նկատմամբ: Այս բացարձակ արգելքը պայմանավորված է նաև այն հիմնարար գաղափարով, որ պետությունը, զրկելով այդ անձին ազատությունից, ստանձնում է նաև նրա երաշխավորված պաշտպանության հանձնառություն: Ուստի, այս բացարձակ կանոնից ցանկացած շեղում պետք է դառնա քրեական վարույթի առարկա:

ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասն, այս առումով, սահմանում է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող

⁴⁵ Սույն զեկույցի իմաստով «արգելված վերաբերմունք» ձևակերպումն օգտագործվում է բնորոշելու համար օրենքով չթույլատրվող այնպիսի վերաբերմունք, ինչպիսին է անհամաչափ ֆիզիկական ուժի գործադրումը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, այդ թվում՝ խոշտանգումը:

վերաբերմունքի կամ պատժի: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի: ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես ոչ մի անձ չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

Հուլիսյան իրադարձությունների առաջին իսկ օրերից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրեց հավաքների մասնակիցների նկատմամբ Ոստիկանության կողմից արգելված վերաբերմունքի գործադրման դեպքեր՝ թե՛ սեփական դիտարկումների, թե՛ բողոքների հիման վրա: Այդ մասին հրապարակվեցին նաև տեղեկություններ զանգվածային լրատվության միջոցներով: Բողոքները, ինչպես նաև հրապարակային աղբյուրներում տեղ գտած տվյալները վերաբերում էին ոստիկանության ծառայողների կողմից հավաքների մասնակիցների նկատմամբ արգելված վերաբերմունք դրսևորելուն: Եղան նաև հրապարակումներ խոշտանգումների վերաբերյալ:

Հուլիսի 18-ին և 19-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արդեն իսկ ստացվեցին տեղեկություններ Ոստիկանության ծառայողների կողմից հավաքների մասնակիցների նկատմամբ բռնության գործադրման, նրանց արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման հեռախոսահամարին ներկայացված հաղորդագրության, ինչպես նաև հրապարակային տվյալների համաձայն՝ հուլիսի 18-ին ոստիկանության ծառայողները խոշտանգման ենթարկել քաղաքացիական ակտիվիստների, նրանց նկատմամբ գործադրել են բռնություն և դրսևորել անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Ըստ այդ տեղեկությունների՝ բերման ենթարկելիս նրանց նկատմամբ անհիմն կիրառվել են ձեռնաշղթաներ: Ըստ հայտարարության՝ արդյունքում նշված անձինք ստացել են մարմնական վնասվածքներ, այդ թվում՝ ուղեղի ցնցում⁴⁶:

Այս տվյալների հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում անմիջապես սկսվեց հարցի քննարկման ընթացակարգ: Նկարագրված տեղեկություններն ամփոփվեցին և քրեական վարույթ նախաձեռնելու առաջարկով ուղարկվեցին ՀՀ գլխավոր դատախազություն: Արդյունքում՝ հարուցվեց քրեական գործ:

⁴⁶ Տեղեկությունը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=JpzezoJCzm0>:

Մեկ այլ դեպքում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ՀՀ ոստիկանության բաժին գիշերը կատարած այցելության ժամանակ պարզեցին, որ բերման ենթարկված անձանցից մեկն ունի ծնոտի երկկողմանի կոտրվածք, բժշկական հաստատությունում ստացել է բուժօգնություն, ապա եկել է բաժին, որպեսզի իրերը վերցնի, սակայն իրեն չեն թույլատրել դուրս գալ ոստիկանության բաժնից ու ձերբակալել են: Ըստ նրա՝ Ոստիկանության բաժին բերման ենթարկվելիս ոստիկանության ծառայողների կողմից ենթարկվել է ծեծի: Պաշտպանի ներկայացուցիչներին կողմից բաժնում արձանագրվել է, որ նրա ծնոտը եղել է վիրակապված, չի կարողացել լիարժեք խոսել և ծնոտի կոտրվածքի պատճառով կարողացել է միայն հեղուկ վիճակ ունեցող սնունդ ընդունել:

Այս տեղեկությունները Մարդու իրավունքների պաշտպանի կողմից անմիջապես ուղարկվեցին Հատուկ քննչական ծառայություն: Այս գործի հետ կապված խնդրահարույց հարցը կապված էր փաստաբանի ու բերման ենթարկվածի պնդումների հետ այն մասին, որ Հատուկ քննչական ծառայության կողմից շարունակաբար մերժվում էր վերջինիս որպես տուժող ներգրավելը, իսկ դատաբժշկական փորձաքննությունը նշանակվել էր ուշացումով⁴⁷:

Քաղաքացիական ակտիվիստներին բռնության, այդ թվում՝ խոշտանգման ենթարկելու, նրանց արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ տեղեկություններն արագ տարածվեցին և հասարակությունում ստացան խիստ արձագանք: **Դրանք ակնհայտորեն նպաստեցին առանց այն էլ լարված իրավիճակի սրմանը: Նման տեղեկություններն էին, որ նպաստեցին ոստիկանության և ընդհանրապես՝ իրավապահ ու արդարադատության համակարգի հանդեպ վստահության կտրուկ նվազմանը:**

Ոստիկանության կողմից թույլ տրվող խախտումների վերաբերյալ տեղեկություններին զուգահեռ, հասարակության որոշ խմբերի կողմից շարունակվում էր Ոստիկանության և ընդհանրապես պետական ինստիտուտների նկատմամբ ատելության խոսքն ու բռնության, այդ թվում՝ զենքի միջոցով հարցեր լուծելու անթույլատրելի կոչերը: Կյանքից զրկված ոստիկանների օրինակով սոցիալական ցանցերում տարածվում էին խրախուսող կոչեր՝ զուգորդված ռասիստական բնույթի համեմատություններով (այս մասին առավել մանրամասն խոսվում է սույն զեկույցի հաջորդ գլխում):

Հուլիսյան իրադարձությունների ընթացքում հասարակության շրջանում լուրջ մտահոգության և բողոքի առարկա դարձավ այն, որ Ոստիկանության ծառայողները հավաքի մասնակիցներին սկսեցին բերման ենթարկել Ոստիկանության գորքերի թիվ 1032 և 1033 գորամասեր: Այս հարցի կապակցությամբ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից անմիջապես որոշում կայացվեց սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու մասին: Հուլիսի 18-ին Ոստիկանության գորքերի թիվ 1033 գորամասում Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրեցին, որ բերման ենթարկվածները պահվում էին գորամասի մարզասրահում՝ առանց դրա համար

⁴⁷ Տեղեկությունը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.azatutyun.am/a/27888853.html>:

պատշաճ պայմաններ ապահովելու: Այդ պայմանները հնարավոր էլ չէր ապահովել, քանի որ գորամասի մարզասրահն ունի բոլորովին այլ նպատակային նշանակություն:

Այս իրավիճակն ավելի սրեց լարվածությունը և առաջացրեց անվստահություն Ոստիկանության նկատմամբ: Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Ոստիկանությանը ներկայացվեց բերման ենթարկվածներին անհապաղ ազատ արձակելու, ինչպես նաև Ոստիկանության՝ խախտում թույլ տված ծառայողներին պատասխանատվության ենթարկելու պահանջ: Նույն օրը, այդ թվում՝ զիջեր ժամանակ գորամասի տարածքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կատարած աշխատանքների արդյունքում ազատ արձակվեց շուրջ 50 մարդ:

Այս անթույլատրելի պրակտիկան շարունակվեց հետագա օրերին ևս: Խնդրահարույցն, իհարկե, այն է, թե ինչու էին ցուցարարները տարվում Ոստիկանության գորքերի գորամաս: Ոստիկանության ստորաբաժանումներն ունեն իրենց վերապահված գործառույթները և դրանցից յուրաքանչյուրն իրականացնում է իրեն վերապահված խնդիրներ: Դրա հետ միասին, անձին բերման ենթարկելը չպետք է ինքնանպատակ լինի: Բերման ենթարկելը կամ որևէ այլ կերպ ազատությունից զրկելը նպատակ է հետապնդում ապահովել անձի մասնակցությունը կոնկրետ իրավախախտման կապակցությամբ տարվող վարույթին: Ըստ այդմ, անձը պետք է բերման ենթարկվի այն վայր, որտեղ նրա նկատմամբ կամ մասնակցությամբ պետք է վարույթ իրականացվի: Այս պայմաններում հարց է առաջանում՝ ինչու էին հավաքի մասնակիցները բերման ենթարկվում Ոստիկանության գորքերի գորամասեր: **Այստեղ պետությունը կրկնակի պարտավորություն ունի ցույց տալու համար գորամասեր բերման ենթարկելու կապը վարույթի հետ, ինչպես նաև հավաքի մասնակիցներին ազատությունից փաստացի զրկելու պահից պահանջվող երաշխիքներով չապահովելու պատճառները:**

Հասարակության մեջ լարվածությունն առաջացրած հարցերից եղավ այն, որ լայնորեն հրապարակվել էին տեղեկություններ այն մասին, որ ցուցարարներին բերման ենթարկելուն, նրանց նկատմամբ բռնություն կիրառելուն մասնակցել են նաև քաղաքացիական հագուստով ոստիկաններ: Առավել խնդրահարույց էր այն, որ հուլիսի 29-ին տարածվեցին հրապարակային տվյալներ այն մասին, որ քաղաքացիական հագուստով ու դեղահաբեր օգտագործած անձինք նույնպես մասնակցել են ցուցարարների նկատմամբ բռնություն գործադրելուն և հավաքը ցրելուն:

Բերման ենթարկվածներն իրենց հետ առանձնագրույցներում նշում էին նաև ոստիկանության ծառայողների կողմից իրենց անձնական իրերը վերցնելու մասին՝ առանց դրան որևէ պաշտոնական ձևակերպում տալու կամ այդ մասին փաստաթուղթ կազմելու և իրենց որևէ պատճառաբանություն ներկայացնելու: Քաղաքացու հետ առնչվող իրավապահ մարմնի յուրաքանչյուր ներկայացուցչի պարտականությունը պետք է լինի բոլոր այն գործողությունների անհապաղ արձանագրումը, որոնք ինքը կատարում է քաղաքացու հետ կամ նրա մասնակցությամբ: Խոսքը, հատկապես վերաբերում է անձնական իրեր վերցնելուն:

Անթույլատրելի պրակտիկա էր այն, որ արձանագրվեցին փաստաբանի մուտքը

նստիկանության բաժիններ խոչընդոտելու դեպքեր: Իրականում, նստիկանության ծառայողը փաստաբանի մուտքը նստիկանության բաժին կամ բերան ենթարկվածի պահման վայր խոչընդոտելու իրավունք չունի: Այս պահանջը խախտած պաշտոնատար անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Պաշտպանի ներկայացուցիչների կողմից Ոստիկանության բաժիններ իրականացվող այցերի առաջնահերթ նպատակներից էր ապահովել այդ իրավունքի իրացումը (այս մասին մանրամասն խոսվում է սույն զեկույցի նախորդ շարադրանքում):

Վերը շարադրվածով հանդերձ, հուլիսյան իրադարձությունների ընթացքում ցուցարարների նկատմամբ բռնության բոլոր դեպքերն արձանագրվեցին և ուղարկվեցին քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգի շրջանակներում քննարկելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես Երևանի Խորենացի փողոցում, այնպես էլ Սարի թաղում տեղի ունեցած հավաքների ընթացքում ցուցարարների նկատմամբ Ոստիկանության ծառայողների կողմից գործադրած բռնության, նրանց կողմից հատուկ միջոցների կիրառման, դրանց հետևանքով հավաքների մասնակիցներին, ինչպես նաև Սարի թաղի բնակիչներին պատճառված վնասների վերաբերյալ հաղորդումներին:

Հուլիսի 23-ին և դրան հաջորդող օրերին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը տարածեց հայտարարություններ՝ կապված քրեական գործ հարուցելու և նախաքննություն իրականացնելու հետ: Մարդու իրավունքների պաշտպանին Հատուկ քննչական ծառայության կողմից ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ հարուցվել է քրեական գործ այն դեպքի առթիվ, որ Մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև մի շարք քաղաքացիների, նրանց փաստաբանների հաղորդումների, ՁԼՄ-ների հրապարակումների հիման վրա հարուցվել է քրեական գործ: Այդ հաղորդումներն ու հրապարակումները վերաբերել են նրան, որ հուլիսյան իրադարձությունների շրջանակում Ոստիկանության ծառայողները, դուրս գալով իրենց լիազորությունների շրջանակից, իրենց պաշտոնական դիրքը ենթադրաբար ծառայության շահերին հակառակ օգտագործելով, հատուկ միջոցների գործադրման հետևանքով մարմնական վնասվածքներ են պատճառել տարբեր անձանց, բռնություն են գործադրել, ինչպես նաև խոչընդոտել են լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը և փաստաբանների լիազորությունների իրականացումը: Ըստ Հատուկ քննչական ծառայության՝ քրեական գործ էր հարուցվել նաև հուլիսի 29-ին Սարի թաղում ցուցարարների երթի հանգամանքները լուսաբանող լրագրողների նկատմամբ բռնություն գործադրելու և այլ եղանակներով լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու առերևույթ հատկանիշների մասին վկայող տեղեկությունների հիման վրա:

2016 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը հաղորդագրություն տարածեց այն մասին, որ 2016 թվականի օգոստոսի 12-ի դրությամբ՝ Հատուկ քննչական ծառայությունում քննվում են թվով 6 քրեական գործեր՝ հուլիսի 17-ից 31-ն ընկած ժամանակահատվածում Խորենացի փողոցում, Ազատության հրապարակում և հարակից տարածքներում, Սարի թաղում, Գյումրի քաղաքի

Թատերական հրապարակում, ինչպես նաև Ոստիկանության Աշտարակի բաժնում ոստիկանության ծառայողների կողմից առերևույթ բռնության գործադրմամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու, պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը և փաստաբանների լիազորությունների իրականացումը խոչընդոտելու դեպքերով:

Պետք է նշել նաև, որ օրինակ՝ Ոստիկանության կողմից Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված պարզաբանումների համաձայն՝ քննչական մարմինների կողմից ձերբակալված ու Ոստիկանության՝ ձերբակալված անձանց պահելու վայրեր են տեղափոխվել թվով 88 անձինք, որոնցից 66-ի մոտ զննությամբ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ (այս թիվը վերաբերում է միայն քրեական վարույթին և չի ներառում վարչական վարույթի շրջանակներում բերման ենթարկվածներին):

Ընդհանրապես, արգելված վերաբերմունքի դրսևորման ցանկացած դեպքի կապակցությամբ պետությունը պետք է քրեական վարույթի շրջանակում նախաձեռնի քննության պաշտոնական ընթացակարգ: Ընդ որում, այդ քննությունը պետք է տարվի քրեական ընթացակարգի շրջանակում՝ այդ նպատակի համար ստեղծված պետության իրավասու անկախ մարմինների կողմից: Միջազգայնորեն ընդունված է, որ քննություն իրականացնելու պահանջը դեռ մեխանիկորեն չի նշանակում, որ պետք է վերջնարդյունք երաշխավորվի: Սակայն այդ քննության շնորհիվ գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը և այն դեպքում, երբ պարզվի, որ արգելված վերաբերմունքի, այդ թվում՝ հնարավոր խոշտանգման վերաբերյալ պնդումները ճիշտ են, ապա պետք է նաև հանգեցնի հանցանքի կատարման մեջ մեղավորների լիարժեք բացահայտմանն ու նրանց մեղքը պարզվելու դեպքում՝ պատասխանատվության անխուսափելի միջոցների կիրառմանը: Այդ քննությունը նաև ենթադրում է արագացման սկզբունքի անվերապահ կիրառում: Դա նշանակում է, որ ենթադրյալ հանցանքի հանգամանքները պարզելուն և դրանով հանդերձ՝ անհրաժեշտ արդյունքը երաշխավորելուն ուղղված անհապաղ միջոցներ պետք է ձեռնարկվեն (ապահովվի տուժողի առաջնային ներգրավումը գործին, նրա հարցաքննությունը, փորձաքննության նշանակումը և այլն):

Քննություն իրականացնող մարմինները պետք է նաև պահանջվող ժամկետներում և պատշաճ արձագանք են բողոքներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան ՀՀ ոստիկանությունը ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ 2016 թվականի հուլիսի 19-ին Խորենացի փողոցում և հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Սարի թաղում տեղի ունեցած դեպքերի առթիվ ՀՀ ոստիկանությունում իրականացված ծառայողական քննության արդյունքներով ՀՀ ոստիկանության պետի հրամանով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել Ոստիկանության 22 ծառայող, որից 9-ը՝ նկատողության, 4-ը՝ խիստ նկատողության, 4 ծառայողներ ազատվել են զբաղեցրած պաշտոնից, իսկ 5-ի լիազորությունները դադարեցվել են: Ըստ Ոստիկանության՝ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառվել են ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ ենթակա ուժերը հասարակական

կարգի պահպանման ու հասարակական անվտանգության ապահովման ուղղությամբ ճիշտ չտեղաբաշխելու, իրավիճակից բխող պատշաճ միջոցառումներ չձեռնարկելու, պահպանվող անվտանգության գոտի երթի մասնակիցների մուտքը ժամանակին չսահմանափակելու, քաղաքացիական հագուստով անձանց կողմից լրագրողների նկատմամբ բռնություն կիրառելու և լրագրողական տեխնիկական վնասելու դեպքերը կանխելու ուղղությամբ բավարար միջոցներ չձեռնարկելու համար և այլն:

Չնայած քննչական մարմնի կողմից այդ օրերին պարբերաբար տարածվող հրապարակային տեղեկություններին, այդուհանդերձ հիմնական հարցը հասարակության լայն շրջանակների մոտ ի վերջո մնում է այն, թե արդյոք Ոստիկանության ծառայողներ կամ պաշտոնատար այլ անձինք կենթարկվեն քրեական պատասխանատվության այս գործերով: Հուլիսի 29-ի իրադարձություններից հետո հատկապես լարվածություն առաջացնող հարց էր, ինչպես վերը նշվեց, այն, թե ի վերջո արդյոք ոստիկանության ծառայողներ էին քաղաքացիական հագուստով անձինք և արդյոք նրանք դեղահաբեր էին ընդունել: Սույն զեկույցն ամփոփելու դրությամբ դեռ ավարտված չէր այն քրեական գործի քննությունը, որի շրջանակներում պետք է գնահատական տրվի Ոստիկանության ծառայողների գործողություններին: Սա չի կարող ընդունելի լինել, քանի որ ազդում է նաև քննություն իրականացնող մարմինների նկատմամբ վստահության վրա, ինչպես նաև չի նպաստում հնարավոր խախտումներն ապագայում կանխարգելելուն:

Լրագրողների նկատմամբ կիրառված բռնության գործերով տուժող ճանաչելու, ինչպես նաև արդյունավետ քննության մյուս հարցերի վերաբերյալ մանրամասն խոսվում է սույն զեկույցի 4-րդ գլխում:

Արգելված վերաբերմունքի գործադրման կանխարգելման, ինչպես նաև բերման ենթարկելու պրակտիկան վկայում է, որ հուլիսյան իրադարձությունների ընթացքում արդյունավետ չէր նաև դրանց օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը: Նկարագրված խախտումները բնույթով այնպիսին են, որ պահանջում են արագ արձագանք քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև մինչդատական քրեական վարույթի շրջանակներում հետաքննության և նախաքննության, հարկադրանքի միջոցների կիրառության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու սահմանադրական գործառույթներով օժտված դատախազի կողմից: Խախտման ցանկացած դեպք պետք է արժանանա դատախազի անհապաղ միջամտության ու խոսքը հատկապես վերաբերում է անձին ազատությունից զրկելու սկզբնական փուլերին: Դատախազը պետք է դատախազական ներգործության միջոցների օգտագործմամբ անմիջական միջամտություն ունենա հնարավոր ցանկացած տեսակի խախտում վերացնելու հարցում՝ առանց սպասելու որևէ հատուկ բողոքի կամ դիմումի վատ վերաբերմունքից ենթադրաբար տուժած կամ ազատությունից ենթադրաբար ապօրինի զրկված անձից: Այս պահանջը բխում է նաև մարդու իրավունքների ոլորտի միջազգային չափանիշներից, որոնք նշված խախտումների կանխարգելման ու վերացման հարցում առաջնահերթ դեր են վերապահում հենց դատախազին: Ուստի, դատախազությունը պետք է շարունակական ջանքեր գործադրի

նկարագրված ոլորտներում դատախազական հսկողության օպերատիվությունն ու դրանով պայմանավորված՝ արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

2. Հատուկ միջոցների կիրառումը հավաքների ընթացքում

Հուլիսի 20-ին պարեկապահակային ծառայության գնդի հարակից տարածքում՝ Խորենացի փողոցում ոստիկանությունը կիրառեց անբեկոր լուսաձայնային նոնակ՝ «Զարյա 3»՝ 24 հատ, 40 մմ լուսաձայնային արկ «Սվիրել»՝ 6 հատ, ձեռքի լուսաձայնային միատարր նոնակ «Ֆակել-Ս»՝ 4 հատ, լուսաձայնային գրգռիչ ազդեցության ձեռքի նոնակ՝ «Դրոֆա»՝ 3 հատ⁴⁸:

Հուլիսի 29-ին «Սարի թաղում» ՀՀ ոստիկանությունը կիրառեց 56 լուսաձայնային նոնակ: Համաձայն հրապարակված տվյալների՝ հուլիսի 29-ին Սարի թաղում ՀՀ ոստիկանությունը ցուցարարների դեմ կիրառել է 20 հատ «Ֆակել-Ս» ձեռքի լուսաձայնային միատարր նոնակ, 22 հատ «Զարյա 3» անբեկոր լուսաձայնային նոնակ, 13 հատ «Սվիրել» 44 մմ լուսաձայնային արկ, 1 հատ «Պլայմա-Ս» լուսաձայնային նոնակ: Ըստ նյութի՝ նոնակների կիրառման արդյունքում 60 քաղաքացի դիմել է բուժօգնության, որոնցից 5-ը այրվածքներով, 22-ը՝ կոտրվածքներով, շատերի մարմնում եղել են բեկորներ⁴⁹:

Դրանից բացի, հուլիսյան իրադարձությունների ընթացքում տուժել են Ոստիկանության 77 ծառայող, այդ թվում՝ էկզոզեն թունավորում 14, մարմնական վնասվածքներ 63, որից 8-ը՝ հրազենային, մնացած 55-ը ստացել են գլխի, վերին և ստորին վերջույթների տրավմատիկ բնույթի վնասվածքներ: Թվով 59 ծառայողներ հոսպիտալացվել են տարբեր բժշկական կենտրոններ:

Տվյալ օրը Սարի թաղում կիրառված նոնակի պայթյունի հետևանքով վնասվեց Գեղարքունիքի մարզի մի բնակչի աչքը, որը վիրահատության միջոցով հեռացվեց:

«Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի հոկտեմբերի 23-ի հրամանում առկա նկարագրության համաձայն՝ «Ֆակել-Ս» նոնակը կիրառվում է փակ տարածքներում, ըստ նկարագրված տեխնիկական տվյալների՝ բեկորային վնասվածքներ չի պատճառում: «Սվիրել» ԱՍԶ-40-ը լուսաձայնային կրակոց է, որը նախատեսված է փողատակի նոնականետներից արձակելու համար, ըստ տեխնիկական տվյալների՝ նույնպես բեկորային վնասվածքներ չի պատճառում: «Զարյա 3» նոնակի նկարագրությունը և տեխնիկական տվյալները հիշյալ որոշման մեջ առկա չեն, սակայն, դատելով Ոստիկանությանն արված հարցման պատասխանից՝ նույնպես բեկորներ չեն առաջացնում:

⁴⁸ Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://news.am/arm/news/341947.html>:

⁴⁹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://yn.am/?p=68460&l=am>:

Հիշյալ որոշման նկարագրությունում որևէ տվյալ առկա չէ նաև «Պլայմա-Մ» լուսաձայնային նոնակի նկարագրության և բեկորներ առաջացնելու հատկության մասին, սակայն տվյալ նոնակի վերաբերյալ եղած հանրամատչելի տեղեկատվությունից կարելի է եզրահանգել, որ տվյալ նոնակի պայթյունը մեծահասակ անձանց 1 %-ի մոտ կարող է առաջացնել ներքին ականջի վնասում, ինչպես նաև նոնակի կորպուսի բեկորներից առաջացող փափուկ հյուսվածքների վնասում, ներմաշկային հեմատոմաներ, իսկ նոնակի պայթուցիչ մասի գործողությունը կարող է հրդեհի կամ բռնկման պատճառ դառնալ: «Զարյա 3» նոնակի հանրամատչելի նկարագրություն առկա չէ, սակայն, այն, ըստ երևույթին, «Զարյա 2» նոնակի արդիականացված տարբերակն է, որի ազդեցության հիմնական բնութագրերը գրեթե նույնական են «Պլայմա-Մ» նոնակի ազդեցությանը:

Ըստ վերոհիշյալ հրամանի՝ գրգռող լուսաձայնային ազդեցության ձեռքի նոնակ «Դրոֆա»-ն նոնակի ընկնելու վայրից 5 մ հեռավորության վրա լուսաձայնային տարրերի պայթյունից առաջանում է լուսաձայնային ազդակ, իսկ գլանակի այրումից՝ գրգռիչ ազդեցությամբ օդակաթիլային ծածկույթ:

ՀՀ առողջապահության նախարարի 20.04.2012 թվականի N 09-Ն «Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» հրամանի համաձայն՝ կիրառված հատուկ միջոցներից Ֆակել Մ-ը, Պլամյա Մ-ը ենթակա են կիրառման մարդուց նվազագույնը 2.5 մետր հեռավորության վրա:

«Սվիրել» կրակոցի, ինչպես նաև «Զարյա 3» նոնակի կիրառման պայմանները հիշատակված հրամանով սահմանված չեն:

ՀՀ ոստիկանության պետի 11.10.2011 թվականի թիվ 2760-Ա հրամանի Հավելվածով սահմանված է հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցը: Ըստ ուղեցույցի 22-րդ կետի՝ յուրաքանչյուր հատուկ միջոցի գործադրման կամ տակտիկական հնարքի կիրառման ժամանակ ոստիկանության գործողությունները պետք է լինեն հնարավորինս նպատակաուղղված՝ պահպանելով իրավաչափության և համաչափության սկզբունքների պահանջները, իսկ վտանգավոր իրավիճակներում, որոնք սպառնում են մարդկանց կյանքին ու առողջությանը, նախքան ոչ նպատակաուղղված հատուկ միջոցների գործադրմանն անցնելը, պետք է գործադրվեն ռետինե գնդակներով փամփուշտներ (բացառությամբ այն դեպքերի, երբ ամբոխի ագրեսիվության աստիճանն այնքան բարձր է, որ հնարավոր չէ առանձնացնել կոնկրետ իրավախախտների գործողությունները):

Ուղեցույցի մեջբերված դրույթի բովանդակությունից բխում է, որ ոչ նպատակաուղղված հատուկ միջոցի կիրառման հնարավորությունը կարելի է դիտարկել միայն նպատակաուղղված միջոցների գործադրման ոչ նպատակահարմար լինելու դեպքում: Մինչդեռ, նպատակաուղղված միջոցների գործադրման

հնարավորությունը սպառված չլինելու պայմաններում ոստիկանությունը անմիջապես նախապատվություն է տվել ոչ նպատակաուղղված, ազդեցության մեծ տարածություն ունեցող հատուկ միջոցների կիրառմանը, ինչը վերոհիշյալ ուղեցույցով հատուկ միջոցի կիրառման կարգի խախտում է, և ցույցերի խաղաղ մասնակիցների իրավունքներն ապահովելու տեսանկյունից անթույլատրելի է:

Ուղեցույցի 23-րդ կետի համաձայն՝ զանգվածային անկարգությունների ժամանակ ոստիկանության բոլոր ծառայողներից պահանջվում է առավելագույն զսպվածություն, քանի որ ոստիկանության մեկ ծառայողի, դասակի կամ ստորաբաժանման անհամաչափ գործողությունները կարող են կտրուկ սրել իրավիճակը և հանգեցնել միջադեպի անսպասելի բարդացմանը: Այս իմաստով՝ նման իրադրություններում ոստիկանության յուրաքանչյուր ծառայող պետք է ձեռնպահ մնա անհատական գործողություններից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է ինքնապաշտպանության համար: Մինչդեռ, ցուցարարների հետ բախումների ժամանակ ոստիկանության որոշ աշխատակիցների կողմից դրսևորված վարքագիծը չէր նպաստում իրավիճակի հանդարտեցմանը, այլ հակառակը՝ որոշակի դեպքերում անհարկի սրում էր իրավիճակը, ստեղծում բազմաթիվ անձանց կյանքին և առողջության համար վտանգ ստեղծող իրավիճակ:

Հատուկ անդրադարձ պետք է կատարել քննարկվող ուղեցույցի 24-րդ կետին, համաձայն որի՝ եթե ամբոխը չունի ելքի ճանապարհ (հատկապես՝ երբ ամբոխը փակված կամ շրջապատված է), ապա չպետք է գործադրվեն այնպիսի հատուկ միջոցներ, որոնց ազդեցությունը կարող է խուճապ կամ ամբոխի հանկարծակի տեղաշարժ առաջացնել. օրինակ՝ ոստիկանությունը ամբոխը ցրելու կամ մասնատելու նպատակով գործադրում է արցունքաբեր գազով փամփուշտներ, ընդ որում՝ ամբոխը շրջապատված է ոստիկաններով, փշալարերով և այլ արգելապատնեշներով կամ անձանց տեղաշարժը սահմանափակված է փողոցի լայնությամբ: Արցունքաբեր գազի ազդեցությամբ՝ ամբոխը կտեղաշարժվի դեպի առավել ազատ տարածք (կամ դեպի ոստիկանության ծառայողները), ինչը կմեկնաբանվի որպես հերթական ագրեսիվ գործողություն՝ հանգեցնելով գործադրվող ուժի սաստկացմանը: Մրանից պարզ է դառնում, թե ոստիկանության ոչ հեռատես գործողություններն ինչպես կարող են բարդացնել իրավիճակը: Այդ նկատառումից ելնելով՝ նախքան որևէ տակտիկական հնարք կիրառելը կամ հատուկ միջոց գործադրելը պետք է օբյեկտիվ կերպով գնահատվեն ոչ միայն ոստիկանության մտադրությունները, այլ նաև՝ հավաքի մասնակիցների հավանական գործողությունները (վարքագիծը):

Սարի թաղում հուլիսի 29-ի դեպքերի ժամանակ մարդկանց բազմությունը հայտնվել էր տվյալ թաղամասի մի հատվածում, որտեղ առկա էր արգելապատնեշ, որը խոչընդոտում էր ցուցարարների շարժը, իսկ հակառակ կողմում տեղակայված էին ոստիկանության ուժերը: Նման պայմաններում, չպահպանելով քննարկվող ուղեցույցի պահանջը՝ կիրառվեց ոչ նպատակաուղղված գործողության հատուկ միջոց, ինչը սրեց իրավիճակը և նոր լարվածության ու բռնությունների առիթ դարձավ:

Ոստիկանությունը ձախողեց նաև ցուցարարներին հատուկ միջոցների կիրառման մասին տեղեկացնելու պարտականության կատարումը: Այսպես, համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է: Ըստ վերոհիշյալ ուղեցույցի՝ ոստիկանության ծառայողների կողմից զանգվածային անկարգությունների ժամանակ հատուկ միջոցներ գործադրելու մտադրության մասին նախազգուշացումներ անելու առաջարկելի ձևակերպումները հետևյալն են.

ա) «Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը):»:

բ) «Խոսում է ոստիկանությունը: Դադարեցրե՛ք զանգվածային անկարգությունը և հեռացե՛ք տարածքից, այլապես կգործադրվեն հատուկ միջոցներ (նշել տեսակը): Այլևս նախազգուշացում չի լինելու»::

Ոստիկանության նախազգուշացումները պետք է արվեն մարդկանց հասկանալի արտահայտություններով և առավել նպատակահարմար ու ընկալելի եղանակով, օրինակ՝ բարձրախոսի, բարձրաձայնման համակարգի, ցուցանակի, պաստառի, էլեկտրոնային էկրանի և այլնի միջոցով: Հնարավորության դեպքում մարդկանց բազմությունը կամ ամբոխին ուղղված առանձին նախազգուշացումների միջև պետք է տրվի ողջամիտ ժամանակահատված, որպեսզի մարդկանց խմբերը ցուցաբերեն համապատասխան արձագանք: Անհրաժեշտ է նաև էլեկտրոնային կրիչի վրա տեսաձայնագրել արված նախազգուշացումները և անհատների կամ ամբոխի կողմից հնչած պատասխանները (այդպիսի հիմք կարող է ապահովել, օրինակ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը): Մինչդեռ, ոստիկանությունը չապահովեց կիրառվելիք հատուկ միջոցների մասին տեղեկացնելու իր պարտականությունը: Այդ է վկայում տվյալ օրվա դեպքերի տեսագրությունը⁵⁰:

Եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է հատուկ միջոցների կիրառման իրավաչափության հարցին: Վերջինս հատուկ շեշտադրում է կատարել նոնսականետի միջոցով արցունքաբեր գազ պարունակող նոնսակի նետմանը: Հաշվի առնելով տվյալ հատուկ միջոցի բնույթը, վնասը, որը այդ միջոցը կարող է պատճառել անձի առողջությանը, Եվրոպական դատարանը, գտել է, որ տվյալ գործով ենթակա են կիրառման մահաբեր ուժի՝ իր կողմից ձևավորված չափանիշները: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ ոստիկանական գործողությունները չնայած, որ

⁵⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=Risy6Yl3taU>:

ազգային օրենսդրությամբ արտոնված են, այնուամենայնիվ, դրանք պետք է բավականաչափ կարգավորված լինեն ներպետական օրենսդրությամբ՝ կամայականության դեմ համաչափ և արդյունավետ երաշխիքների շրջանակներում: Ըստ դատարանի, անհրաժեշտ է ունենալ նոնակների գործադրման ուղեցույցեր, ինչպես նաև, որ ոստիկանության աշխատակիցները չպետք է ունենան հատուկ միջոցները կիրառելու չափազանց լայն հայեցողություն և հատուկ միջոցների կիրառման չկանոնակարգված նախաձեռնություն ցուցաբերելու հնարավորություն, որի համար անհրաժեշտ է, որ ոստիկանները անցնեն անհրաժեշտ պատրաստություն և ուսուցում և ունենան հատուկ միջոցի կիրառման հստակ ցուցումներ⁵¹:

Այս առումով անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ օրենսդրությամբ բավարար չափով կանոնակարգված չեն հատուկ միջոցների կիրառման ընթացակարգերը: Որոշ հատուկ միջոցների կիրառման առողջապահական ուղեցույցեր (օրինակ՝ «Սվիրել» լուսաձայնային կրակոցը, որը, ինչպես և Եվրոպական դատարանի վերոհիշյալ գործում նկարագրված հատուկ միջոցը, նույնպես նախատեսված է փողատակի նոնականետներից արձակելու համար, ինչպես նաև «Ջարյա 3» նոնակը) ընդհանրապես բացակայում են:

Եվրոպական դատարանն անդրադարձ է կատարել նաև հավաքները ցրելու ժամանակ ցուցարարների նկատմամբ կիրառված ուժի (հատկապես՝ արցունքաբեր գազի կիրառման) համաչափության հարցին: Մասնավորապես, դատարանը նշել է, արցունքաբեր գազի չհիմնավորված օգտագործումը անհամատեղելի է անթույլատրելի վերաբերմունքի արգելքի հետ⁵²:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ ոստիկանությունն, իհարկե, ունի հատուկ միջոցներ գործադրելու իրավասություն: Մակայն դրա համար, ինչպես վերը նշվեց, անհրաժեշտ է հավաստել դրանց համապատասխանությունը կոնկրետ պահանջների: Այս առումով, տվյալ իրավիճակում հատուկ միջոցները կիրառվեցին վերոհիշյալ ուղեցույցով սահմանված ընթացակարգի խախտմամբ, որոշակի հատուկ միջոցներ ոստիկանությունը կիրառել է առանց իրավական հիմքի, քանի որ չեն եղել տվյալ հատուկ միջոցների կիրառման առողջապահական չափանիշները սահմանող ուղեցույցեր: Որոշ հատուկ միջոցներ կիրառվել են առանց պահպանելու վերոհիշյալ առողջապահական ուղեցույցները, ինչի արդյունքում արձանագրվել են այրվածքների և բեկորային վնասվածքների բազմաթիվ դեպքեր:

Հուլիսյան իրադարձություններն ակնհայտորեն աչքի ընկան Սարի թաղում հուլիսի 29-ին հավաքի մասնակիցների նկատմամբ վերաբերմունքով: Այդ առումով, որքան խնդրահարույց էր հավաքը Սարի թաղ տեղափոխելը, ինչի մասին խոսվեց մանրամասն սույն զեկույցի 1-ին գլխում, դրանից ավելի խնդրահարույց էր Ոստիկանության գործողություններն այդտեղ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է

⁵¹ Աբդուլլահ Յասա և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (*Abdullah Yasa and Others v. Turkey*), գանգատ թիվ 44827/08, 16/07/13:

⁵² Ալի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի (*Ali Güneş v. Turkey*) գործով ՄԻԵԴ վճիռ, գանգատ թիվ 9829/07, 10/04/2012, կետ 43:

հատուկ միջոցների կիրառության արդյունքում հավաքի մասնակիցներին պատճառված վնասներին: Այդ ժամանակ հատուկ միջոցների գործադրման արդյունքում վնասներ պատճառվեցին նաև հարակից տների բնակիչներին:

Մասնավորապես, այդ միջոցների գործադրման համար անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով զգալի վնասներ պատճառվեցին հավաքի վայրին հարող բնակիչների տներին, քանի որ նոնակներն ընկել էին հենց այդ տներից մեկի վրա: Հասկապես խնդրահարույց էր հավաքի վայրին անմիջականորեն հարող տան վրա նոնակների նետումը, որոնք ոչ միայն հանգեցրին հրդեհի բռնկման, այլ նաև տանն այդ ժամանակ գտնվող շուրջ վեց երեխաներին վնաս պատճառելու իրական վտանգ ստեղծեցին: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանն անձամբ հավաստիացավ՝ այցելելով այդ տների բնակիչներին: Նրանց հետ առանձնագրույցներից պարզ դարձավ նաև մեկ այլ խնդրահարույց պրակտիկա, որը պետք է ի սպառ բացառել: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ ոստիկանությունը տներից մարդկանց սկսեց բերման ենթարկել բնակիչների հետ միասին: Բանն այն էր, որ հատուկ միջոցների գործադրման պատճառով հավաքի շատ մասնակիցներ ստիպված էին թաքնվել Մարի թաղի՝ հավաքին հարող տներում, իսկ նրանց բերման ենթարկելու նպատակով ոստիկանությունը նաև մուտք էր գործում այդ տներ ու առանց հստակեցման բերման ենթարկում նաև այդ տների բնակիչներին: Այս մասին հնարավոր եղավ հավաստիանալ նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նույն գիշերը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոց այցի ընթացքում:

Այցը նաև ցույց տվեց, որ գործադրված հատուկ միջոցներից տուժել էին նաև ոստիկանության ծառայողներ:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից անմիջապես պահանջ ներկայացվեց Ոստիկանությանը կասեցնելու այն ծառայողների լիազորությունները, ովքեր կարող են առնչություն ունենալ հավաքների մասնակիցների նկատմամբ արգելված վերաբերմունքի գործադրման հետ, իսկ հավաքված նյութերն ուղարկվեցին Գլխավոր դատախազություն՝ քրեական գործի հարուցման հարցը լուծելու նպատակով⁵³:

⁵³ <https://news.am/arm/news/339732.html>, <http://www.aravot.am/2016/08/01/722652/>:

ԳԼՈՒԽ 4. ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Լրագրողական գործունեության խոչընդոտում

Հուլիսի 17-ից 31-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացավ բազմաթիվ հաղորդումներ լրագրողների օրինական գործունեության խոչընդոտման դեպքերի մասին: Բոլոր հաղորդումները գրանցվեցին և ուսումնասիրվեցին համապատասխան ընթացակարգերի շրջանակներում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները հանդիպեցին ու հարցազրույցներ անցկացրին տուժող անձանց հետ, իսկ որոշ դեպքերում տվյալները ստուգվեցին ու ճշգրտվեցին բանավոր ու գրավոր հարցումների միջոցով: Կատարվեց նաև տեղագնում մի շարք վայրերում, օրինակ, Սարի թաղի այն հատվածում, որտեղ տեղի ունեցան բախումներ ցուցարարների և ոստիկանների միջև, որի ընթացքում տուժեցին լրագրողներ: Հավաքվեցին և ուսումնասիրվեցին դեպքերի վերաբերյալ ականատեսների հայտարարություններ, ՁԼՄ-ների լրատվական նյութեր, սոցիալական ցանցերի հրապարակումներ, մարդու իրավունքների տեղական և միջազգային կառույցների, հանրային գործիչների, դիվանագիտական կազմակերպությունների, պետական մարմինների բազմաթիվ հայտարարություններ և ուսումնասիրություններ:

Ըստ հավաքագրված փաստերի, նշված օրերի ընթացքում կոպտորեն խախտվել են «Azatutyun.am», «A1plus.am», «Panorama.am», «Lragir.am», «Armlur.am», «Panarmenian.net», «PAN-Photo», «lin.am», «NewsPress.am», «Հայկական ժամանակ» լրատվական ծառայությունների, ինչպես նաև «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվականի և «LifeNews» ռուսական լրատվամիջոցի լրագրողների և օպերատորների իրավունքները: Խախտումներն ուղեկցվել են բռնություններով, սպառնալիքներով, հետապնդումով, գույքի և լրատվական նյութի վնասմամբ ու ոչնչացմամբ՝ ընդհուպ մինչև լրագրողներին և օպերատորներին բերման ենթարկելուն, որոնք իրականացվել են ոստիկանության աշխատակիցների և քաղաքացիական հագուստով անձանց խմբերի կողմից: Արձանագրվել է նաև հրազենային վնասվածքի մեկ դեպք, մասնավորապես, ՊՊՕ գնդի շուրջ իրադարձությունները տեսանկարահանելիս գնդի ներսից արձակած կրակոցից վիրավորվել է «02» լրատվական գործակալության օպերատորը:

Հուլիսի 17-ից 21-ը արձանագրվեցին լրագրողների նկատմամբ ոստիկանների կողմից բռնության առաջին դեպքերը: Ազատության հրապարակում հուլիսի 17-ին, երբ մի խումբ քաղաքացիական ակտիվիստներ պատրաստվում էին անցկացնել հավաք, ոստիկանության մի աշխատակից բռնություն կիրառեց լրագրողի նկատմամբ այն բանից հետո, երբ վերջինս հարցրել էր, թե ինչու էին մի քաղաքացու հարկադրաբար տեղափոխում մոտակայքում գտնվող ոստիկանության մեքենա: Ոստիկանության աշխատակիցը, տեսնելով, որ լրագրողը նկարահանում է քաղաքացուն բերման ենթարկելու տեսարանը, մոտեցել է լրագրողին ու ոտքերով հարվածել նրան, իսկ այնուհետև մի խումբ ոստիկաններ նրան բռնի կերպով տեղափոխել են ոստիկանության

բաժին, որտեղից քիչ անց ազատ են արձակել, սակայն մինչ այդ հեռախոսից ջնջել են նկարահանված լրատվանյութը: Նման մեկ այլ դեպք տեղի է ունեցել հուլիսի 18-ին Խորենացի փողոցում, որտեղ ի պատասխան լրագրողի հարցապնդմանը, թե ինչու են բերման ենթարկում մոտակա պուրակում գտնվող քաղաքացիներին, ոստիկաններից մեկը հարվածել է նրան: Վերը նշված երկու դեպքում լրագրողները միջամտել են ոստիկանական գործողություններին՝ կատարելով հարցապնդում քաղաքացիներին բերման ենթարկելու պատճառների մասին, իսկ երրորդ դեպքում լրագրողը նաև չի ենթարկվել ոստիկանների հրահանգներին, որի արդյունքում տեղի է ունեցել կոնֆլիկտ նրա ու ոստիկանների միջև:⁵⁴ Այս իմաստով անհրաժեշտ է նկատել, որ լրագրողը պարտավոր է ենթարկվել ոստիկանի հրահանգներին և հավաքների ընթացքում չմիջամտել ոստիկանների գործողություններին: Ինչպես նկատել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, լրագրողները չեն կարող ազատվել ընդհանուր քրեական իրավունքին ենթարկվելու պարտականությունից զուտ այն հիմքով, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը նրանց ընձեռում է պաշտպանություն: Ընդունելի է, որ լրագրողները երբեմն կարող են հայտնվել հակասական իրավիճակում, երբ մի կողմից պարտավոր են ենթարկվել օրենքի պահանջին, իսկ մյուս կողմից՝ կատարել տեղեկություններ ձեռք բերելու և տարածելու իրենց մասնագիտական պարտականությունը՝ այդպիսով հնարավորություն տալով մամուլին կատարելու հասարակական վերահսկողի (watch dog) դերը: Շահերի բախման այս լույսի ներքո, այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ պատասխանատու լրագրության հայեցակարգը պահանջում է, որ երբ լրագրողը ստիպված է կատարել ընտրություն վերը նշված երկու պարտականությունների միջև և եթե նա ընտրությունը կատարում է ի վնաս քրեական իրավունքին ենթարկվելու պարտականության, նա պետք է ի գիտություն ընդունի, որ այդպիսով իրեն ենթարկում է իրավական, այդ թվում նաև քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգին՝ ոստիկանի օրինական հրահանգին չենթարկվելու համար⁵⁵:

Հուլիսի 19-ին և 21-ին Մարի թաղում և Խորենացի փողոցում արձանագրվեցին լրագրողների մասնագիտական գործունեության միջամտության դեպքեր, որոնք դրսևորվեցին մի դեպքում ոստիկանների կողմից լրագրողի նկարահանած տեսանյութերի ոչնչացմամբ, իսկ մյուս դեպքում քաղաքացիական հագուստով անձանց կողմից բռնության կիրառմամբ, տեսախցիկը խլելով և նկարահանած տեսանյութը ոչնչացնելով, որը պատկերում էր Խորենացի փողոցում մի խումբ ակտիվիստների և այդ անձանց միջև բախման տեսարանը:

Մարդու իրավունքների պաշտպանը դատապարտեց բռնությունը՝ դա որակելով որպես զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու խիստ բացասական երևույթ: Պաշտպանը հայտարարեց, որ լրագրողի մասնագիտական պարտականությունների կատարումը

⁵⁴ Տե՛ս հուլիսի 18-ի միջադեպը հետևյալ հղումով. <http://www.aravot.am/2016/07/24/719343/>:

⁵⁵ Տե՛ս Պենտիկայնեն ընդդեմ Ֆինլանդիայի (ՄՊ) ([Pentikainen v. Finland](#)) գործով ՄԻԵԴ վճիռ, զանգատ թիվ 11882/10, 20/10/2015, կետ 110:

խոչընդոտելը քրեորեն պատժելի արարք է և այդ առումով ստացված բոլոր նյութերն ուղարկվելու են համապատասխան քրեական հետապնդման մարմիններ: Նաև կոչ արեց բոլոր այն անձանց, ովքեր լրագրողների նկատմամբ բռնություն գործադրելու մասին չհրապարակված տեսանյութեր կամ տեղեկություններ ունեին, փոխանցելին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ⁵⁶:

Մարդու իրավունքների պաշտպանի այս հայտարարությունը ողջունեց Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը: Հայտարարությանը միացավ նաև Հայաստանում եվրոպական միության պատվիրակությունը, որը Հայաստանում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունների ղեկավարների համաձայնությամբ տարածած հաղորդագրության մեջ, ի գիտություն ընդունելով Պաշտպանի վերը նշված հայտարարությունը, ընդգծեց, որ քաղաքական փոփոխության նպատակով ուժի կիրառումն անընդունելի է և հորդորեց ՀՀ իշխանություններին լիարժեք հետաքննություն կատարել ոստիկանների կողմից իրականացված բոլոր իրավախախտումների մասին հաղորդումների առնչությամբ⁵⁷:

Այդուհանդերձ, հետագա օրերին լրագրողների և օպերատորների նկատմամբ բռնությունները չդադարեցին: Ավելին, բռնություններին զուգընթաց արձանագրվեցին լրագրողներին բերման ենթարկելու և ձերբակալելու դեպքեր, որոնք այնուհետև չհանգեցրին քրեական հետապնդման կամ համապատասխան վարչական վարույթի: Օրինակ, հուլիսի 24-ին մի լրագրող բերման ենթարկվեց հուլիսի 22-ին զանգվածային անկարգություններին մասնակցելու կասկածանքով, որին հետևեց բերման ենթարկելու մասին արձանագրության կազմելը, նրան որպես վկա ներգրավվելը, իսկ այնուհետև նրան ազատ արձակելը, մինչդեռ լրագրողը նշված օրը Խորենացի փողոցում իրականացրել էր լրագրողական գործունեություն:

Հուլիսի 26-ի իր ինը կետից բաղկացած ծրագրային հայտարարությամբ Պաշտպանը, կրկին մտահոգություն հայտնելով, ի թիվս այլ խախտումների, նաև լրագրողներին մարմնական վնասվածքներ հասցնելու, նրանց մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու վերաբերյալ հրապարակումների առնչությամբ, այդ դեպքերը գնահատեց որպես «առանձնապես դատապարտելի»⁵⁸: Հայաստանում ԵՄ պատվիրակությունը իր սոցիալական ցանցում տարածեց այս հայտարարությունը՝ անվանելով հետաքննության, հաշվետվողականության և թափանցիկության կոչ⁵⁹:

Վերը նշված բոլոր գործողությունները լրագրողական ազատության անօրինական միջամտություն են: **Որևէ օրենքով արգելված չէ լրագրողի կողմից հանրային միջավայրում ոստիկանական գործողությունների տեսանկարահանումը, քանզի դրանով լրագրողը իրականացնում է հանրային նշանակության կարևոր գործառույթ՝ տարածում է**

⁵⁶ Տոդատակի ծանոթագրություն 7. Պաշտպանի հուլիսի 21-ի հայտարարությունը:

⁵⁷ Տոդատակի ծանոթագրություն 15:

⁵⁸ Տե՛ս տոդատակի ծանոթագրություն 7՝ Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունները:

⁵⁹ Հասանելի է ԵՄ պատվիրակության Ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/eudelegationtoarmenia/>:

տեղեկատվություն հանրությանը հուզող դեպքերի վերաբերյալ, իսկ հանրությունն իր հերթին ունի նման տեղեկատվություն ստանալու իրավունք: Հետևաբար, ոստիկանների գործողությունները ոչ միայն միջամտություն էին լրագրողի տեղեկություններ տարածելու, այլ նաև հանրության տեղեկություններ ստանալու իրավունքին:

Անհասկանալի է նաև լրագրողին որպես վկա բերման ենթարկելը և արձանագրություն կազմելը: Լրագրողը չպետք է ներգրավվի որպես վկա այն իրադարձությունների, դեպքերի կապակցությամբ, որոնք լուսաբանել է: Այս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը արտահայտել է դիրքորոշում այն դեպքերի առթիվ, երբ լրագրողները ներգրավվել են որպես վկա իրենց աղբյուրների բացահայտման վերաբերյալ՝ նշելով, որ միայն այնպիսի խիստ բացառիկ հանգամանքներում, ինչպիսին են անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու նպատակները⁶⁰, կարող են արդարացված լինել լրագրողին որպես վկա ներգրավելը, հակառակ դեպքում լրջորեն վտանգվում է լրատվամիջոցների տեղեկություններ տարածելու ազատությունը, որն էլ իր հերթին ազդում է հանրային նշանակություն ունեցող տեղեկությունների ազատ հոսքի վրա: Իսկ եթե լրագրողը բերման է ենթարկվել հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիման վրա, ապա անօրինական է նրան որպես վկա ներգրավելը: Ինչ վերաբերում է քաղաքացիական անձանց կողմից լրագրողների նկատմամբ բռնություններ կիրառելուն և լրատվական նյութերը ոչնչացնելուն, ապա լրատվամիջոցների հաղորդումները նման դեպքերի մասին ինքնին պետք է դառնա իրավասու մարմինների կողմից քրեական վարույթ նախաձեռնելու հիմք:

Լրագրողական ազատությունների նկատմամբ ոտնձգությունների գազաթնակետը, անկասկած, Սարի թաղում հուլիսի 29-30-ի ծավալված իրադարձություններն էին: Տարբեր լրագրողներ, ովքեր Սարի թաղի իրադարձությունների ժամանակ գտնվել են տարբեր հատվածներում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի փորձագետների անցկացրած անանուն հարցումների թերթիկներում իրարից անկախ նշել են նույնաբովանդակ վկայություններ այն մասին, որ հատուկ միջոցների կիրառումից մի քանի րոպե առաջ քաղաքացիական հագուստով ինչ որ անձինք մոտեցել են իրենց և հրահանգել ցուցարարներից հեռու կանգնել, քանի որ ոստիկանները պատրաստվում են կիրառել հատուկ միջոցներ, որին հետևել է հատուկ միջոցների՝ լուսաձայնային պայթուցիկ սարքերի կիրառումը: Թեև որոշ լրագրողներ կանգնած են եղել ցուցարարներից հեռու, նրանց ուղղությամբ նույնպես նետվել են պայթուցիկներ, որի արդյունքում ստացել են այրվածքներ, բեկորային վնասվածքներ:

Տարբեր լրագրողներ իրենց վկայություններում նշել են, որ ոստիկանների շարքերի կողմից քաղաքացիական հագուստով անձանց առանձին խմբեր հարձակվել են լրագրողների վրա այն պահին, երբ նկատել են, որ լրագրողները լուսաբանում էին իրադարձությունները: Մի լրագրող պատմել է նաև, որ իրեն ծեծի ենթարկող երկու

⁶⁰ ՀՀ Սահմանադրական դատարանի ՄԴՌ-1234 որոշում: Տե՛ս դատական ակտի եզրափակիչ մասը՝ կետ 1: 76

անձանցից մեկը ոստիկանության համազգեստով էր, իսկ մյուսը քաղաքացիական հագուստով: Այդ անձինք ձեռքերով, ոտքերով ու մահակներով հարվածել են լրագրողներին, նրանց մարմնի տարբեր մասերին՝ պահանջելով դադարեցնել նկարահանումը, խլել ու կոտրել են տեսախցիկները, ուղիղ եթերի հեռարձակման տեխնիկական սարքավորումները, պահեստային մարտկոցները, ոչնչացրել են լրատվանյութը, իսկ ում հաջողվել է դուրս պրծնել նրանց ձեռքերից, քաղաքացիական հագուստով անձինք հետապնդել են, բռնել ու կրկին ծեծի ենթարկել, այնուհետև պոկել են լրագրողի հագուստի վրա ամրացված լրագրողական անվանաքարտը, պատռել կամ դեն նետել այն, այնուհետև սպառնացել կրկին հաշվեհարդար տեսնել, եթե շարունակի տեսանկարահանել կամ լուսանկարահանել իրադարձությունները: Նույնիսկ արձանագրվել է դեպք, երբ լրագրողին բռնության են ենթարկել քաղաքացիական հագուստով մոտ տասը անձ, ովքեր, ինչպես մնացած դեպքերում, հայտնվել են ոստիկանների շարքերի հետևից, զցել են լրագրողին գետնին, կոտրել են երկու տեսախցիկները, ոտքերով ու մահակներով հարվածել են մարմնի տարբեր մասերին ու այդ ընթացքում հարցրել, թե ինչ է տեսանկարահանել: Նույնիսկ, երբ լրագրողը ցույց է տվել լրագրողի անվանաքարտը, դա այդ անձանց չի կանգնեցրել, ընդհակառակը, նրանք պոկել ու դեն են նետել անվանաքարտը: Պաշտպանի աշխատակազմի կողմից արձանագրվել են նաև տեղեկություններ դիմակով ու ոստիկանական համազգեստով անձանց կողմից լրագրողների նկատմամբ բռնությունների մասին:

Վերը նշված բռնությունները ոչ թե ոստիկանության աշխատակիցների անփութության, այլ լրագրողների **թիրախավորման** արդյունք են, որը բարձրացնում է, ի թիվս այլնի, նաև խտրական վերաբերմունքի մասին հարց: Դա հաստատվում է նրանով, առաջին, որ բռնությունները կիրառվել են հատկապես այն պահին, երբ լրագրողները կամ օպերատորները լուսաբանելիս են եղել ոստիկանության աշխատակիցների գործողությունները, մասնավորապես՝ հատուկ միջոցների կիրառումը: Հետևաբար, բռնի գործողությունները հետևողականորեն ուղղված են եղել լրագրողների կողմից ոստիկանական գործողությունների լուսաբանման խափանմանը: **Այս երկու հանգամանքները միասին խոսում են այն մասին, որ լրագրողները ընտրվել են ընդհանուրի թվից՝ որպես որոշակի խումբ (identifiable group)՝ իրենց մասնագիտական գործունեության հատկանիշով: Սա ինքնին բարձրացնում է խտրականության մասին հարց:**

Երկրորդ, փաստերը ցույց են տալիս, որ **լրագրողների նկատմամբ վատ վերաբերմունքը դրսևորվել է նրանց պատժելու դիտավորությամբ:** Հակառակ դեպքում ինչպես բացատրել այն հանգամանքը, որ վերը նշված դեպքերում նույնիսկ լրագրողների կողմից տեսանկարահանումը դադարեցնելու պայմաններում շարունակվել է նրանց նկատմամբ բռնությունը: Քաղաքացիական հագուստով անձինք, ովքեր, փաստորեն, գործել են խմբերով, շարունակել են բռնություններով, ոտքերով, մահակներով հարվածել լրագրողներին նույնիսկ այն բանից հետո, երբ լրագրողները դադարեցրել են տեսանկարահանումը, դեպքերի ուղիղ հեռարձակումը: Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ մեկ լրագրողի նկատմամբ բռնությունը կիրառվել է միաժամանակ մի քանի

անձանց կողմից: Նման դեպքերում մի քանի անձինք շրջապատել են լրագրողին, վերցրել նրան օղակի մեջ, բռնել ոտքերն ու ձեռքերը, որպեսզի վերջինս գրկվի ինքնապաշտպանվելու հնարավորությունից, և շարունակել հարվածներ հասցնել մարմնի տարբեր մասերին՝ միաժամանակ կոտրելով լրագրողական տեխնիկան: Վերևում արդեն նշվել է, որ որոշ դեպքերում, երբ լրագրողին հաջողվել է մի կերպ դուրս պրծնել այդ անձանց ձեռքերից, վերջիններս շարունակել են հետապնդել լրագրողին, հասել են նրան ու շարունակել կրկին հարվածներ հասցնել՝ պոկելով և դեն նետելով լրագրողի հագուստին ամրացված լրագրողական անվանաքարտը: Մի լրագրող վկայել է, որ մի քանի այլ լրագրողների հետ պատսպարվել են մոտակա հացի փոռում, սակայն քաղաքացիական հագուստով անձինք կոտրել են դուռը, մտել ներս և ներսում բռնություններ կիրառել պատսպարված լրագրողների նկատմամբ: Բռնություն կիրառելու նման հետևողականությունը կարելի է բացատրել միայն պատժելու, անձին նվաստացնելու, արժանապատվությունը վիրավորելու ցանկությամբ: Նման արարքները և՛ անմարդկային են իրենց բնույթով, և՛ արժանապատվությունը նվաստացնող:

Այսպիսով, վերը նշված դեպքերի և նմանօրինակ այլ դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնությունները ուղղված են եղել լրագրողների և օպերատորների մասնագիտական գործունեության դեմ, նրանք թիրախավորվել են բացառապես լրագրող լինելու և այդ պահին լրագրողական գործունեություն իրականացնելու հատկանիշներով:

Հատկանշական է, որ Սարի թաղի բռնությունները լրագրողների նկատմամբ մեծամասամբ իրականացվել են քաղաքացիական հագուստով անձանց խմբերի կողմից: Թեև այդ խմբերը գործում էին ոստիկանների տեսադաշտում, ոստիկաններից ոչ մեկը, այդ թվում նաև շրջակայքում գտնվող ոստիկանության ղեկավար անձինք, փորձ չեն արել կանխել այդ բռնությունները: Դա թույլ է տալիս ենթադրել, որ քաղաքացիական հագուստով այդ անձինք ամենայն հավանականությամբ գործել են տեղում գտնվող ոստիկանության աշխատակիցների անմիջական թողստությամբ: Քրեական գործով քննությունը պետք է պարզի այդ անձանց ինքնությունը, ինչպես նաև՝ թե արդյոք նրանք քաղաքացիական հագուստով ոստիկաններ էին կամ գործում էին ոստիկանության աշխատակիցների հրահանգով:

Բացի նշվածից, անառարկելի է, որ լրագրողները ենթարկվել են Սահմանադրության 26-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված արգելված վերաբերմունքի: Եթե քաղաքացիական հագուստով անձինք ոստիկաններ չեն և այդ դեպքում նրանց գործողությունները լրագրողների հանդեպ բարձրացնում է պետական մարմինների պոզիտիվ պարտականության մասին հարց (օրինակ՝ դեպքի մասով արդյունավետ քննությունը կատարելու պարտականությունը), ապա ոստիկանների կողմից **հատուկ միջոցների** կիրառումը լրագրողների նկատմամբ բարձրացնում է նեգատիվ պարտականության մասին հարցը (պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից վատ վերաբերմունքի դրսևորումից ձեռնպահ մնալու պարտականությունը): Լրագրողները՝ որպես իրադարձությունները լուսաբանող

անձինք, ովքեր չէին մասնակցում բողոքի ցույցին և հանդիսանում էին իրադարձությունների արձանագրող, վնաս կրեցին հատուկ միջոցների գործադրումից:

Վերը նկարագրված բռնությունները լրագրողական կազմակերպությունների կողմից արդարացիորեն բարձրացրին բողոքի ալիք: Հուլիսի 21-ին, 28-ին և 30-ին մի շարք լրագրողական միություններ և իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ հանդես եկան միացյալ հայտարարություններով՝ արտահայտելով վրդովմունք լրագրողների նկատմամբ բռնությունների առնչությամբ և ՀՀ ոստիկանությունից պահանջելով անհապաղ դադարեցնել բիրտ ուժի կիրառումը և իրենց մասնագիտական պարտականությունը կատարող լրագրողների և օպերատորների նկատմամբ խոչընդոտումները:⁶¹ Իրավիճակն այն աստիճան վրդովեցնող էր, որ հուլիսի 30-ի հայտարարությամբ լրագրողական և իրավապաշտպան կազմակերպությունները հայտարարեցին, որ այլևս անհիմաստ են համարում որևէ բան պահանջել Ոստիկանությունից և որ իրավունք են վերապահում դիմել «լրագրողների շահերի պաշտպանության այլ օրինական միջոցների»:⁶² Ազատության հրապարակում տեղի ունեցավ լրագրողների բողոքի ակցիա, որին մասնակցեց նաև Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը՝ որպես բողոքին համերաշխության նշան:

Իրականում, լրագրողի նկատմամբ ապօրինի գործողություն կատարող ցանկացած անձ պետք է ենթարկվի պատասխանատվության խիստ միջոցների, ինչն այդ դեպքում կունենա նաև կանխարգելիչ նշանակություն: Որևէ պատճառ չի կարող արդարացնել մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողի նկատմամբ բռնությունը:

Հուլիսի 29-30-ի դեպքերի վերաբերյալ հայտարարություններով հանդես եկան մի շարք միջազգային կազմակերպություններ ու դիվանագիտական առաքելություններ: Երևանում ԱՄՆ դեսպանատունը մտահոգություն արտահայտեց այն հանգամանքի վերաբերյալ, որ ստացված արժանահավատ հաղորդումների համաձայն ոստիկանական գործողությունների արդյունքում ոստիկանների համար թիրախ են հանդիսացել լրագրողները և նրանց սարքավորումները, և, միաժամանակ, ողջունեց Մարդու իրավունքների պաշտպանի ջանքերն ուղղված ցուցարարների, լրագրողների, անցորդների հանդեպ դրսևորված բռնության դեպքերի փաստագրմանը և բերման ենթարկվածների իրավական պաշտպանությանը⁶³: Եվրոպական Միության մամուլի խոսնակը հորդորեց ՀՀ իշխանություններին հասարակական հանրահավաքները կառավարելիս ձեռնպահ մնալ բիրտ ուժի կիրառումից⁶⁴: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը կոչ արեց կողմերին վերադառնալ

⁶¹ Բոլոր երեք հայտարարությունները հասանելի են Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի www.khosq.am կայքի «Հայտարարություններ» բաժնում:

⁶² Նույն տեղում:

⁶³ ԱՄՆ դեսպանատան 30 հուլիսի, 2016թ. պաշտոնական հայտարարությունը: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armenian.armenia.usembassy.gov/news073016.html>:

⁶⁴ Տոկատակի ծանոթագրություն 23:

ժողովրդավարական երկխոսության եղանակին, որը բացառում է ուժի կիրառումը⁶⁵, իսկ ԵԱՀԿ Հայաստանի գրասենյակի ղեկավարը կոչ արեց <<բոլոր կողմերին>> ցուցաբերել առավելագույն զսպվածություն, չդիմել բռնության և գերծ մնալ սադրանքներից⁶⁶: Հուլիսի 30-ին ԱՄՆ դեսպանը, իսկ հուլիսի 31-ին ԵՄ Հայաստանի պատվիրակության գործերի ժամանակավոր հավատարմատարը այցելեցին «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում գտնվող տուժած լրագրողներին:

Դեպքերին արձագանքեց նաև ՋԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միլատովիչը, ով ի պաշտոնե կոչված է ազդարարել խոսքի և մամուլի ազատության ոտնահարումների վերաբերյալ ու խթանել ՋԼՄ-ների ազատության ոլորտում ԵԱՀԿ հանձնառությունների կատարումը Անդամ Պետությունների կողմից: ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված իր պաշտոնական նամակում նա նշեց, որ ակնկալում է **հավաստիացում**, որ *«լրագրողների իրավունքները և նրանց անվտանգությունը քաղաքացիական անհնազանդությունների շրջանում ապահովված կլինեն»* և որպես այդպիսի հավաստիացում նշեց, որ *«ՀՀ իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպես երաշխիք, որ լրատվամիջոցները թիրախավորված չլինեն ոստիկանության կամ հանցագործների կողմից»* և որ *«Ոստիկանությունը պետք է պաշտպանի լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչներին»*⁶⁷:

2. Լրագրողների գործունեությունը խոչընդոտելու հիմքով քննությունը

Մարդու իրավունքների պաշտպանը, լրագրողների նկատմամբ բռնությունների մասին ՋԼՄ-ներից ստացված տեղեկությունների, ինչպես նաև քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված հաղորդումների հիման վրա, ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, հուլիսի 30-ին որոշում կայացրեց սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու մասին: Նույն օրը Մարդու իրավունքների պաշտպանը այցելեց Մարի թաղի այն հատվածը, որտեղ տեղի էին ունեցել բախումներ և տեղում ուսումնասիրեց հատուկ միջոցների կիրառման հետևանքները, քաղաքացիներին հասցված վնասը: Այցի ընթացքում հավաքված տվյալները արձանագրվեցին իր նախաձեռնությամբ սկսված վարույթի շրջանակներում:

Հուլիսի 30-ին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ հայտարարությամբ՝ պահանջելով ոստիկանությանը անմիջապես ներկայացնել պարզաբանումներ լրագրողների նկատմամբ բռնությունների գործադրման, նրանց գործունեությունը խոչընդոտելուն քաղաքացիական հագուստով ոստիկանների

⁶⁵ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.coe.int/en/web/secretary-general/news/-/asset_publisher/EYIBJNjXtA5U/content/council-of-europe-secretary-general-concerned-over-hostage-crisis-in-yerevan:

⁶⁶ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.osce.org/node/257281>:

⁶⁷ Հայտարարության տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.osce.org/hy/fom/257451>:

հնարավոր ներգրավման մասին: Նույն հայտարարությամբ Պաշտպանը պահանջեց լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա անմիջապես հարուցել քրեական հետապնդում, իրականացնել մանրամասն քննություն և բացահայտել բոլոր մեղավոր անձանց⁶⁸: Պաշտպանը նաև քաղաքացիներին կոչ արեց տրամադրել lin.am, azatutyun.am, armlur.am, a1plus.am առցանց լրատվամիջոցների, «Արմենիա» հեռուստաընկերության լրագրողների նկատմամբ բռնության գործադրման կամ ոստիկանների հնարավոր ներգրավման մասին վկայող տեսանյութեր՝ երաշխավորելով հեղինակների ինքնության գաղտնիությունը⁶⁹:

Հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Երևանի Խորենացի փողոցում և Սարի թաղում տեղի ունեցած դեպքերի առիթով ՀՀ գլխավոր դատախազությունը հուլիսի 30-ին հարուցեց քրեական գործ լրագրողի առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով և այլ եղանակներով լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Գլխավոր դատախազությունը նախաքննություն կատարելու համար քրեական գործն ուղարկեց ՀՀ հատուկ քննչական ծառայություն⁷⁰:

Հաշվի առնելով ՀՀ գլխավոր դատախազության 2016 թվականի հուլիսի 30-ի պաշտոնական հաղորդագրությունը, Մարդու իրավունքների պաշտպանը, ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով, իր նախաձեռնությամբ դեպքերի քննարկման արդյունքում հավաքած փաստերը, մասնավորապես՝ ՋԼՄ-ների հաղորդումները և իր աշխատակազմին ուղղված քաղաքացիների և կազմակերպությունների ուղարկած հաղորդումները, հուլիսի 30-ին ուղարկեց ՀՀ գլխավոր դատախազին և խնդրեց այդ տեղեկությունները օգտագործել հարուցված քրեական վարույթի շրջանակներում և արդյունքների մասին տրամադրել տեղեկություններ: Քանի որ առկա էին նաև տեղեկություններ «dragir.am» առցանց լրատվամիջոցի լրագրող, ԼՂՀ քաղաքացի Մարութ Վանյանի նկատմամբ բռնությունների մասին, Մարդու իրավունքների պաշտպանը խնդրեց նրա վերաբերյալ նույնպես տրամադրել տեղեկություններ՝ դրանք Արցախի Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացնելու նպատակով:

Ի հավելումն վերը նշվածի, Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ գլխավոր դատախազին տեղեկացրեց, որ Մարդու իրավունքների աշխատակազմը ստացել է բազմաթիվ հաղորդումներ Խորենացի փողոցում և Սարի թաղում տեղի ունեցած հավաքների ընթացքում քաղաքացիների նկատմամբ ոստիկանության ծառայողների կողմից գործադրած բռնության, բնակիչների տներ ներխուժելու և մարդկանց ծեծի ենթարկելու, քաղաքացիների նկատմամբ քաղաքացիական հագուստով անձանց կողմից բռնություններ կիրառելու, այդ դեպքերի մասին ՋԼՄ-ների հաղորդումների

⁶⁸ Տե՛ս տողատակի ծանոթագրություն 7:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ ՀՀ գլխավոր դատախազության հուլիսի 30, 2016թ.-ի մամուլ հաղորդագրությունը: Տեքստն ամբողջությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ <http://prosecutor.am/am/news/6520/>:

մասին, և ելնելով ստացված տվյալներից, խնդրեց հնարավորինս սեղմ ժամկետում քննարկել նշված տեղեկությունների հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վարույթ նախաձեռնելու հարցը և քննարկման արդյունքների մասին տեղեկացնել: Ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը Մարդու իրավունքների պաշտպանին օգոստոսի 4-ին տեղեկացրեց, որ ներկայացված տվյալները ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված թիվ 61205016 քրեական գործի քննության շրջանակներում ստուգելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձեռնարկված միջոցների, դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկություն ստանալու և կարծիքներ փոխանակելու նպատակով օգոստոսի 2-ին Հայաստանում ԵՄ պատվիրակության գործերի ժամանակավոր հավատարմատարը և Հայաստանում ԱՄՆ դեսպանության քաղաքական և տնտեսական բաժնի ղեկավարը հանդիպեցին Մարդու իրավունքների պաշտպանի հետ, որի ընթացքում Պաշտպանը ներկայացրեց նրանց իր լիազորությունների շրջանակներում ձեռնարկված միջոցառումների՝ փաստերի հավաքման, մշտադիտարկման, իր նախաձեռնությամբ փաստերի ուսումնասիրման արդյունքում հարուցված գործընթացների մասին, ինչպես նաև փոխանակեցին կարծիքներ նշված դեպքերի ընթացքում մարդու իրավունքների խախտումների, հավաքների ազատության ու լրագրողական ազատությունների խախտումների վերաբերյալ⁷¹:

Ծառայողական քննություն

Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան ՀՀ ոստիկանությունից ստացված պատասխանի համաձայն, ի թիվս այլ հիմքերի, նաև քաղաքացիների և լրագրողների նկատմամբ բռնություն կիրառելու և լրագրողական տեխնիկական վնասելու դեպքերը կանխելու ուղղությամբ բավարար միջոցներ չձեռնարկելու համար որպես կարգապահական տույժ խիստ նկատողություն է հայտարարվել չորս և նկատողություն՝ ոստիկանության ինը ծառայողների: Նկատի ունենալով, որ ծառայողական քննության արդյունքներով ձեռք են բերվել տեղեկություններ ոստիկանության մի շարք ծառայողների կողմից անհամաչափ ուժ գործադրելու դեպքերի վերաբերյալ, դադարեցվել են հինգ ծառայողների լիազորությունները և նրանց վերաբերյալ ծառայողական քննության նյութերը ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ վերջիններիս արարքներին քրեաիրավական գնահատական տալու հարցը լուծելու նպատակով: Լրագրողական տեխնիկայի վնասման վերաբերյալ մամուլի հրապարակումները և ոստիկանության բաժիններից ստացված օպերատիվ հաղորդագրությունները, ըստ ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկության, կցվել են ծառայողական քննության նյութերին, մինչև այդ տվյալները պարզվեն Հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական

⁷¹ Տողատակի ծանոթագրություն 29:

գործերի շրջանակներում: Արդյունքում, նշված հիմքերով ծառայողական քննությունը կասեցվել է Ոստիկանության կարգապահական կանոնադիրքը հաստատելու մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի ա-կետի համաձայն, ըստ որի ծառայողական քննությունը կասեցվում է ոստիկանության ծառայողի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննարկմանն ուղարկված նյութերով մինչև համապատասխան որոշում կայացնելը:

Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշների համաձայն, թեև վատ վերաբերմունքի դեմ արդյունավետ քննությունը կարող է ներառել քրեական, կարգապահական և/կամ վարչական վարույթներ, սակայն կարգապահական վարույթը և կարգապահական պատասխանատվության ենթարկելը վատ վերաբերմունքի դեմ պայքարի համարժեք միջոց չէ, **եթե վատ վերաբերմունքը ներառում է պաշտոնատար անձի կողմից անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի ենթարկելը**⁷²: Նույն մոտեցումը դրսևորել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, որը սահմանել է, որ ծառայողական քննության արդյունքում կայացված որոշումը չի կարող գնահատվել որպես խոշտանգման փաստի պատշաճ արձագանք և որ այդ հարցում Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն մասին, որ խոշտանգումը պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության և պատժի⁷³: Հետևաբար, ոստիկանության մի շարք ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը քաղաքացիական հագուստով անձանց կողմից լրագրողների նկատմամբ բռնություն կիրառելու և լրագրողական տեխնիկական վնասելու դեպքերը կանխելու ուղղությամբ բավարար միջոցներ չձեռնարկելու հիմքով կարող է իրավական պաշտպանության համարժեք միջոց չհանդիսանալ: Միևնույն ժամանակ, ողջունելի է, որ լրագրությունները դադարեցված հինգ ծառայողների ծառայողական քննության նյութերը ուղարկվել են Հատուկ քննչական ծառայություն, եթե բավարար փաստեր կան, որ նրանք անձամբ ցուցաբերել են լրագրողների կամ քաղաքացիների նկատմամբ բռնությունների՝ խոշտանգման, կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Քրեական գործի քննությունը Հատուկ քննչական ծառայության կողմից

Հատուկ քննչական ծառայությունը Գլխավոր դատախազության, Մարդու իրավունքների պաշտպանի, քաղաքացիների, փաստաբանների հաղորդումների,

⁷² Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ): Վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն: Եվրոպական չափանիշների վերաբերյալ ուղեցույց: Էրիկ Սվանիձե: ԵՄ մարդու իրավունքների և իրավական կապերի ընդհանուր վարչություն: Կետ V-V.1.1. և նշված կետի մեկնաբանությունը կից բացատրական զեկույցում էջ 70-71: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.coe.int/t/dgi/hr-natimplement/publi/materials/1121.pdf>:

⁷³ Արա Գոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. փետրվարի 12-ի թիվ ԵԱՔԴ/0049/01/09 գործով որոշում: Կետ 25:

ինչպես նաև ԶԼՄ-ներում հրապարակած տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա հարուցեց քրեական գործեր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը), 309-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները անցնելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով), 164-րդ հոդվածի 2-րդ մասով (լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնեական դիրքն օգտագործելով) և 332.3-րդ հոդվածի 1-ին մասով (փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացումը խոչընդոտելը կամ, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, սպառնալը):

Քրեական գործերով նախաքննության ընթացքում Հատուկ քննչական ծառայությունը իր պաշտոնական հաղորդագրություններով պարբերաբար կոչ արեց Սարի թաղում տեղի ունեցած դեպքերին մասնակցած, ականատես կամ տուժած անձանց համագործակցել վարույթն իրականացնող մարմնի հետ՝ նախաքննության բազմակողմանիությունը, օբյեկտիվությունը և լրիվությունը լիարժեք ապահովելու համար: Որոշ դեպքերում Հատուկ քննչական ծառայությունը ուղղակի դիմեց լրագրողական համայնքին՝ կոչ անելով բռնություններից տուժած լրագրողներին դիմել քննչական մարմիններին անհետաձգելի քննչական ու դատավարական գործողություններին մասնակցելու համար: Օրինակ, մի անձի առաջադրված մեղադրանքի հիմքով քննվող քրեական գործի շրջանակներում պարզվել է, որ այդ անձը կոտրել է տեսանկարահանող լրագրողի աշխատանքային գործիք «Սոնի» ապրանքանիշի տեսախցիկը: Ձեռնարկված գործողությունների արդյունքում, «Սոնի» ապրանքանիշի տեսախցիկը հայտնաբերվել է և պատճառված վնասները պարզելու համար նշանակվել է դատաապրանքագիտական փորձաքննություն: Հատուկ քննչական ծառայությունը պաշտոնական հայտարարությամբ հորդորել է հիշյալ ապրանքանիշի տեսախցիկներով նկարահանումներ իրականացրած լրագրողին ներկայանալ քննչական մարմին՝ մասնակցելու «տեսախցիկի ճանաչման» քննչական գործողությանը, ինչպես նաև պարզաբանելու պատճառված վնասը վերականգնելու հետ կապված իրենց իրավունքներից օգտվելու կարգը⁷⁴: Միաժամանակ, Հատուկ քննչական ծառայությունը կոչ արեց 2016 թվականի հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Երևան քաղաքի Սարի թաղում տեղի ունեցած դեպքերին մասնակցած, ականատես կամ տուժած անձանց համագործակցել վարույթն իրականացնող մարմնի հետ՝ նախաքննության բազմակողմանիությունը, օբյեկտիվությունը և լրիվությունը լիարժեք ապահովելու համար:

Հատուկ քննչական ծառայության 2016թ. օգոստոսի 31-ի հայտարարության համաձայն՝ հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը Սարի թաղում տեղի ունեցած դեպքերից տուժած ենթադրաբար 99 քաղաքացիներից 23-ը լրագրողներ են, որոնցից 19-ը

⁷⁴ Հատուկ քննչական ծառայության 09/13/2016թ. պաշտոնական հայտարարությունը: Տեքստն ամբողջությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.ccc.am/hy/1428493746/3/5324>:

ճանաչվել են տուժող⁷⁵: 2016թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով առերևույթ հանցագործություններ կատարելու, այդ թվում՝ լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար մեղադրանքներ են առաջադրվել 8 անձանց, որոնցից 7-ի՝ «Ազատություն» ռադիոկայանի, «Արմենիա» հեռուստառնկերության և «news.am» կայքի աշխատակիցների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտած անձանց վերաբերյալ քրեական գործից անջատված մասերի նախաքննությունը ավարտվել է և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:⁷⁶ Դատարան ուղարկված մի շարք գործերով մեղադրանքներ են առաջադրվել ոչ միայն Քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով, այլ նաև 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (խուլիգանություն, որը կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից), մասնավորապես, որ կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը՝ տևական ժամանակ բարձրաձայն հայհոյանքներ տալով ու ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնելով ցուցարարներին և տեսնելով, որ իրենց այդ գործողությունները տեսանկարահանում է լրագրողական անվանաքարտ (բեյջ) կրող լրագրողը, հարձակվել են լրագրողի վրա, պահանջել, որ վերջինս չտեսանկարահանի իրենց, ապա ձեռքից խլել են տեսախցիկը, զցել են գետնին և սկսել ոտքերով ու ձեռքերով հարվածներ հասցնել լրագրողի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Այնուհետև, նկատելով ոստիկանության մոտեցող աշխատակիցներին, դիմել են փախուստի՝ իրենց հետ տանելով տուժողից վերցված տեսախցիկը՝ դրանում առկա իրենց վերաբերյալ տեսաձայնագրությունը վերացնելու նպատակով:

Առաջարկություններ

Ինչպես արդեն նշվեց վերևում, դեպքերի վերլուծությունը թույլ է տալիս հանգել եզրահանգման, որ լրագրողների նկատմամբ բռնությունները կրել են դիտավորյալ, նպատակամղված բնույթ, ուղղված են եղել լրագրողների կողմից դեպքերի լուսաբանումը, ուղիղ հեռարձակումը, տեսանկարահանումը **խոչընդոտելուն, խափանելուն**: Փաստերի վերլուծությունը նաև թույլ է տալիս եզրահանգել, որ բռնությունները ուղղված են եղել ոչ միայն լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելուն, այլ նաև լրագրողներին **պատժելուն**, նրանց մեջ վախ ու սարսափ սերմանելուն: Հետևաբար, լրագրողները **թիրախավորվել** են, իրենց մասնագիտության և մասնագիտական պարտականությունները կատարելու հատկանիշներով: Սա բարձրացնում է մարդու իրավունքի կոպիտ խախտման՝ խտրականության ենթարկված լինելու մասին հարց:

Խտրականությունը անձի կամ անձանց որոշակի խմբերի (identifiable group)

⁷⁵ Հատուկ քննչական ծառայության 31/08/2016թ. պաշտոնական հաղորդագրությունը. հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.ccc.am/hy/1428493746/3/5313>

⁷⁶ Հատուկ քննչական ծառայության 31/10/2016թ. պաշտոնական հաղորդագրությունը. հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.ccc.am/hy/1428493746/3/5366>

նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է էապես նման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատ՝ առանց օբյեկտիվ հիմքերի և ողջամիտ բացատրության, առանց միջոցների և նպատակի միջև ողջամիտ համաչափության:

Խտրականության հատկանիշով բռնության շարժառիթը կարող է լինել մարդկանց որոշակի խմբի նկատմամբ կանխակալությունը, անհանդուրժողականությունը, ատելությունը: Բռնությամբ ուղեկցվող միջադեպեր քննելիս քննչական մարմինները կրում են լրացուցիչ պարտականություն, այն է՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը խտրական ցանկացած դրդապատճառ բացահայտելու և պարզելու ուղղությամբ: Հետևաբար, վարույթն իրականացնող մարմինը, բացի բռնության հանցակազմի առկայությունը պարզելը, **պետք է պարզի նաև բռնության շարժառիթները և անհանդուրժողականության հնարավոր դրդապատճառների առկայությունը:** Այդ պարտավորությունը չկատարելը կնշանակի այն գործողությունների վրա, որոնցով խախտվում են հիմնարար իրավունքները և, այդպիսով, թույլ տալ խտրականության դրսևորում քրեական գործով քննություն կատարելիս⁷⁷:

Հետևաբար, քրեական գործով քննություն իրականացնելիս քննության առանձին առարկա պետք է հանդիսանա բռնությունների վերը նշված դրդապատճառները վեր հանելը և դրանցում հնարավոր խտրականության առկայությունը պարզելը: Այս իմաստով անհրաժեշտ կլինի պարզել ոչ միայն բռնություն իրականացրած ոստիկանների, այլ նաև այն անձանց ինքնությունը, ովքեր ենթադրաբար հրաման են տվել թիրախավորել ու պատժել լրագրողներին: Հատկապես կարևոր է պարզելը քաղաքացիական հագուստներով անձանց ինքնությունը, նրանց հնարավոր կապը ոստիկանության հետ և, եթե վերաբերելի է, նաև այն անձի (անձանց) ինքնությունը, ով հրաման է տվել ընդգրկել նման մարդկանց ոստիկանական գործողություններում:

Անհրաժեշտ է պարզել նաև Ոստիկանության մասին օրենքի 29-րդ հոդվածի (ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու հրազենի գործադրման հիմքերը, պայմանները և սահմանները) պահանջների խախտումով հատուկ միջոցների կիրառման հիմքերը լրագրողների նկատմամբ: Նշված հոդվածը պահանջում է հատուկ միջոցները կիրառել որպես բացառիկ միջոց, եթե այլ միջոցներով հնարավոր չէ ապահովել հասարակական կարգ ու կանոնի ապահովումը, իսկ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս առաջնորդվել՝ **ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:** Անհրաժեշտ է քննության շրջանակներում պարզել այն պաշտոնատար անձին կամ անձանց, ովքեր պատասխանատու էին իրենց մասնագիտական պարտականությունը կատարող լրագրողների նկատմամբ հատուկ միջոցների կիրառության համար և, հատկապես, պարզել նման հրամանի արձակման դրդապատճառները, ինչպես օրինակ՝ հնարավոր **քաղաքական անհանդուրժողականությունը:**

Քրեական գործով քննության ընթացքում լրագրողների նկատմամբ բռնության

⁷⁷ Տե՛ս Եվրոպական դատարանի եզրահանգումը [Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի](#) (*Virabyan v. Armenia*) գործով վճռում, գանգատ թիվ 40094/05, 2/10/2012, կետ 218:

հնարավոր խտրական դրդապատճառների հայտնաբերման ուղղությամբ քննություն չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ (վատ վերաբերմունքի արգելք) և 14-րդ հոդվածի (խտրականության արգելք) համաձայն արդյունավետ քննություն չկատարելու Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների չիրագործմանը⁷⁸:

3. Իրադարձությունների լուսաբանումը լրատվամիջոցների կողմից

2016թ. հուլիսի 17-ից 31-ը ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի վրա զինված հարձակման և դրա շուրջը ծավալվող դեպքերը, անկասկած, գտնվում էին հասարակության ուշադրության կենտրոնում: Ամենատարբեր հրապարակային հարթակներում ծավալվեցին հանրային բաց բանավեճեր զինված խմբի անդամների գործողությունների իրավաչափության, վտանգավորության, նրանց քաղաքական ծրագրերի և այդ ծրագրերը բռնությամբ իրականացնելու օրինականության, իրավաչափության ու նպատակահարմարության, ժողովրդավարական արժեքներին դրանց հարիր լինելու հարցերի շուրջ:

Հանրային բաց բանավեճի ծավալմանը մեծամասամբ նպաստեցին լրատվության միջոցները, այդ թվում՝ տպագիր մամուլը, հեռուստատեսությունը, ռադիոն, առցանց լրատվամիջոցները, սոցիալական ցանցերը, օտարերկրյա ՋԼՄ-ների ներկայացուցիչները և նույնիսկ լրագրողական միությունները և հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունները: Տեղեկատվության հոսքը, ընդհանուր առմամբ, տեղի էր ունենում անխափան ու արագորեն: Առկա էր բազմակարծություն՝ պաշտոնական լրահոսին զուգահեռ արագորեն տարածվում էր մասնավոր լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի լրահոսը:

Դեպքերի հենց սկզբից հանրային բանավեճը ծավալվեց այն հարցի շուրջ, թե զինված խմբի գործողությունները ահաբեկչություն էին, թե ոչ: Այս իմաստով լրատվամիջոցների ուշադրության կենտրոնից ակամայից դուրս մնաց այն հանգամանքը, որ խմբավորման գործողությունները բոլոր դեպքերում հասարակական անվտանգության դեմ ուղղված վտանգավոր գործողությունների էին: ՋԼՄ-ները լայնորեն լուսաբանում էին ոչ միայն տեղի ունեցող իրադարձությունները, այլ նաև ընդարձակ լրատվական ծավալ էին հատկացնում զինված խմբի անդամներին, նրանց գործողություններին ու նրանց համակիրներին: Այս առումով սկզբնական շրջանում տիրում էր որոշակի անորոշություն, թե արդյոք լրատվամիջոցների կողմից խմբավորման անդամների բռնության կոչ անող գործողությունները և հրապարակային հայտարարությունները լուսաբանելը խախտում էր լրագրողական էթիկայի հանրաճանաչ նորմերը: Անորոշությունը հատկապես տիրում էր այն հարցում, թե զինված խմբի գործողությունները իրավաբանորեն ահաբեկչություն էր, թե ոչ, որի հանգամանքը որոշակիորեն կաշկանդում էր լրագրողական համայնքին, քանի որ

⁷⁸ Նույն տեղում, կետ 224:

մարդու իրավունքների միջազգային նորմերը, այդ թվում նաև լրագրողական էթիկայի հանրաճանաչ նորմերը սահմանում են սահմանափակումներ այնպիսի կոչեր հրապարակելիս, որոնք ուղեկցվում են ատելության խոսքով ու բռնության քարոզով: Ուստի, խնդրո առարկա հարցը կայանում էր նրանում, թե արդյոք բռնության՝ որպես պայքարի միջոցի լուսաբանումը, դրա հիմքում ընկած փաստերի ու իրադարձությունների շրջանակներում, համապատասխանում էր ազատ արտահայտվելու, տեղեկություններ ու գաղափարներ տարածելու իրավունքի թույլատրելի շրջանակներին:

Հարցն առանձնապես սրություն ձեռք բերեց ՊՊԾ գնդի տարածքում հուլիսի 23-ի զինված խմբի անդամների մամուլի ասուլիսի առնչությամբ, որին զինված խմբի անդամները ներկայացան զինված և դրանով անակնկալի բերեցին հարցազրույց վերցնող լրագրողներին: Լրագրողական համայնքում հնչեցին կարծիքներ, որ զինված անձանց հետ մամուլի ասուլիսին լրագրողները չպետք է մասնակցեին, իսկ մասնակցելով խախտել էին լրագրողական էթիկայի կանոններ: Հնչեցին նաև կարծիքներ, որ քանի որ զինված խմբի անդամներին ահաբեկչության հիմքով մեղադրանք չէր առաջադրվել, ուրեմն մտավախություն չկար, որ լրագրողները շփվել էին ահաբեկիչների հետ և, այդպիսով, խախտել էթիկայի նորմեր⁷⁹: Այդուհանդերձ, նույն այդ ասուլիսի ընթացքում զինված խմբի անդամներից մեկը հնչեցրեց հետևյալ կոչը. *«Թող ձեռքեն, բենզինի շշերով, քարերով, հայերը լավ կովել գիտեն: Թող չնստեն լուփո-լուփո պատերի տակ խոսան, բենզինի շիշը վերցնեն, տան իր ճանապարհը փակողի գլխին, հարգելի ոստիկանները թող ճանապարհը բացեն»*,⁸⁰ որը ոչ այլ ինչ է, քան լրատվամիջոցով հնչեցված բռնության կոչ: Նշվածի կապակցությամբ հուլիսի 26-ին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ հայտարարությամբ, որում մտահոգություն հայտնեց, որ հուլիսի 23-ից սկսած զանգվածային լրատվության միջոցներով ՊՊԾ գնդի տարածքից տարածվեցին տեսանյութեր և հրապարակումներ, որոնցում առկա էին բռնության կոչեր:

Որոշ լրատվամիջոցներ ձգտում էին բացառապես նկարագրել ծավալվող գործողությունները՝ խուսափելով դրանց իրավաբանական որակումից, իսկ որոշ լրատվամիջոցներ էլ դատապարտում էին բռնությունը, դրանց հանրորեն վտանգավոր լինելը: Եթե միջազգային մամուլը հիմնականում փաստում էր դեպքերը, տեղական շատ լրատվամիջոցներ սկսեցին լայնորեն վերլուծել իրադարձությունները, դրանց առաջացման պատճառները, դեպքերի հնարավոր հանգուցալուծման տարբերակները, դրանց քաղաքական, տնտեսական, հասարակական հնարավոր հետևանքները, որը միանգամայն ողջունելի է:

Այդուհանդերձ, իրադարձությունների ծավալմանը զուգընթաց ավելի ու ավելի շատ լրատվամիջոցներ հակված էին դեպքերը ներկայացնել որպես ապստամբություն, հասարակական լայն շրջանակների ընդվզում, ազատագրական պայքարի սկիզբ,

⁷⁹ Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանի 23/07/2016թ. հարցազրույցը Aravot.am լրատվական կայքին: Հասանելի է հետևյալ հղումով <http://www.aravot.am/2016/07/25/719722/>:

⁸⁰ Նույն տեղում:

քաղաքական պայքարի եղանակ՝ այդպիսով փորձելով լեգիտիմություն հաղորդել պետական մարմնի դեմ ուղղված զինված գործողությանը: Ավելին, մի շարք լրատվամիջոցներ սկսեցին դեպքերին հաղորդել հերոսապատման բովանդակություն: Մամուլում, առցանց լրատվամիջոցներում սկսեցին հայտնվել քաղաքային միջավայրում զենքով շրջող քաղաքացիական անձանց լուսանկարներ՝ նրանց էպիկական հերոսի ընդհանուր բովանդակությամբ: Բռնության կոչերը և բռնությունները սկսեցին ներկայացվել որպես ազատագրական պայքարի թույլատրված, քաղաքական պայքարի լեգիտիմ եղանակ ու միակ հնարավոր միջոցը մարդու խախտված իրավունքները երկրում վերականգնելու համար:

Վերջինի առումով որոշ լրատվամիջոցների կողմից ներկայացվող հրապարակումներում ծավալվող հիմնական դիսկուրսը կայանում էր նրանում, որ բռնությունը արդարացված էր, քանի որ լեգիտիմ պայքարի բոլոր միջոցները նախկինում սպառվել էին իշխանությունների մեղքով և որ լայն ազգաբնակչությունը հավանություն էր տալիս բռնության միջոցով իշխանափոխության եղանակին, որի դեկր իրենց ձեռքը վերցրել էին զինված խմբի անդամները: Այդ լույսի ներքո շատ լրատվամիջոցներ լայնորեն հրապարակում էին զինված խմբի անդամների, նրանց աջակցող անձանց կամ հասարակական խմբերի, հասարակական նախաձեռնությունների հայտարարությունները, որոնք լի էին անհանդուրժողականության, բռնության արդարացման կոչերով:

Ի տարբերություն սոցիալական ցանցերի, որտեղ ատելության և անհանդուրժողականության, ոստիկանության աշխատակիցների հետ հաշվեհարդար տեսնելու կոչերը հնչում էին բացեփաց, հասցեագրված և առանց վերապահումների, ընդհուպ նման հայտարարությունների քրեորեն հետապնդելի բնույթի, լրատվամիջոցներում այլ անձանց կամ խմբավորումների հեղինակած բռնության կոչերի հրապարակումը կատարվում էր զինված խմբի և ոստիկանության միջև հնարավոր արյունահեղությունը կանխելու, քաղաքացիներին ապստամբելու իրավունքի իրականացման հնարավորություն տալու, երկրում սոցիալական արդարությունը վերականգնելու անհրաժեշտության ընդհանուր լույսի ներքո⁸¹:

Մի շարք լրատվամիջոցներ հրապարակում էին հիմնականում այն քաղաքացիների, հասարակության մեջ հայտնի այն անձանց հետ հարցազրույցները, ովքեր կոչ էին անում բնակչությանը միանալ զինված խմբի անդամների պայքարին և զինված պայքարով հասնել իշխանափոխության: Նման հոդվածներում զինված խմբի

⁸¹ «Ոտքի Հայաստան» քաղաքացիական նախաձեռնության կոչը ուղղված ժողովրդին՝ փողոց դուրս գալու և արյունահեղությունը կանխելու մասին, տպագրված www.armtimes.com կայքում 20/07/2016թ.-ին: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://armtimes.com/hy/article/89985>:

անդամները ներկայացվում էին որպես «ազգի մատաղացուներ»,⁸² «հերոսներ», «հայրենիքի մարտիկներ», «քաղբանտարկյալներ»⁸³:

Արդյունքում, տեղեկատվության հոսքը դեպի հասարակություն դարձավ միակողմանի. դեպքերի լուսաբանումը և հնչող գնահատող դատողությունները ամբողջությամբ չէին արտահայտում հասարակության բոլոր շրջանակների տրամադրությունները: Շատ լրատվամիջոցներ նախընտրում էին չտարածել զինված խմբի բռնի գործողությունները քննադատող հրապարակումներ: Արձանագրվեցին ինքնագրաքննության դեպքեր: Օրինակ՝ սեպտեմբերի 13-ին www.azatutyun.am լրատվական կայքում հրապարակվեց Էմիլ Դանիելյանի «Civil Society Support for Armenian Gunmen Raises Questions» (թարգմանաբար՝ «Քաղաքացիական հասարակության աջակցությունը հայկական զինված խմբին բարձրացնում է հարցեր») վերտառությամբ անգլերեն լեզվով հոդված, որում հոդվածագիրը քննադատեց քաղաքացիական հասարակությանը զինված խմբի գործողությունների առնչությամբ քաղաքացիական պասիվություն, որոշ շրջանակների կողմից նույնիսկ աջակցություն դրսևորելու համար: Հոդվածի հեղինակը և լրատվամիջոցը ենթարկվեցին քննադատության բազմաթիվ ընթերցողների կողմից: Ընդհուպ մինչև հնչեցին կարծիքներ, որ հեղինակը կատարում էր իշխանությունների պատվեր: Հաջորդ օրը լրատվամիջոցը հեռացրեց հոդվածը իր հարթակից, և դա պատճառաբանեց նրանով, որ հոդվածը չէր համապատասխանում լրատվամիջոցի «հավասարակշռված հրապարակում» չափանիշին: Հոդվածի հեռացնելը իր հերթին քննադատության ալիք բարձրացրեց այն ընթերցողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից, ովքեր համամիտ էին հոդվածի հեղինակի հետ: Ինչպես գրաքննությունը, այնպես էլ ինքնագրաքննությունը լրջորեն վնասում են հասարակության տեղեկություններ ստանալու իրավունքը և որպես այդպիսին դա անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում:

Ատելության խոսքի և բռնության քարոզչության, ինչպես նաև ոստիկանության թույլ տված խախտումների հետևանքով հասարակությունում ստեղծվեց լարվածության մթնոլորտ: Հուլիսի 29-ին Մարդու իրավունքների պաշտպանը տարածեց հայտարարություն, որում տազնապ հայտնեց, որ զինված հարձակմանը հաջորդեց ատելության խոսքի և բռնության քարոզչության <<աննախադեպ>> բռնկում և որ հասարակության առանձին խմբերի կողմից հրապարակայնորեն խրախուսվում էին ատելության և բռնության կոչերը և լայնորեն չարաշահվում արտահայտվելու ազատության իրավունքը: Ըստ Պաշտպանի, նման վիճակը խաթարում էր պետական իրավասու ինստիտուտների կողմից մարդու իրավունքների խախտումները կանխարգելելու ուղղությամբ արդյունավետ միջոցներ ձեռնարկելը և դրանով լրջորեն

⁸² Տե՛ս, օրինակ, «Ոչ թե զինյալ, այլ ապստամբ. հաղորդավարը կոչ է անում կանգնել ազգի մատաղացուների կողքին»: Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://armtimes.com/hy/article/89988>:

⁸³ «Հերոսը պետք է լինի ազգի ցավերի բալասանը. Պավիկ Մանուկյանի նոր նամակը՝ կալանավայրից». Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.1in.am/1979940.html>:

վտանգվում է Հայաստանում մարդու իրավունքների երաշխավորման ողջ համակարգը⁸⁴: Հայտարարության վերջում Պաշտպանը հորդորեց բոլոր կողմերին ձեռնպահ մնալ նման բնույթի հրապարակումներ, ինչպես նաև չստուգված և ՀՀ գործող օրենսդրական կարգավորումները հաշվի չառնող տեղեկություններ տարածելուց, քանի որ դրանք վտանգում էին ողջ գործընթացի խաղաղ հանգուցալուծումը:

Աստիճանաբար սրվող լարվածությանը զուգահեռ բարձրանում էր պատասխանատու լրագրության գործունը: Քանի դեռ ՊՊԾ գնդի շուրջ իրադարձությունները զարգանում էին, լրագրողական համայնքը կանգնած էր երկնտրանքի առջև. եթե լրագրողներն ունեին ազատ արտահայտվելու իրավունք և եթե հասարակությունն էլ ուներ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունք, ապա որքանով էր իրավաչափ իրադարձությունների մասին տեղեկություններ տրամադրելուն զուգընթաց նաև շարունակել տարածել զինված խմբի և նրանց աջակիցների ասելություն ու բռնություն քարոզող հայտարարությունները և կոչերը:

Մարդու իրավունքների տեսանկյունից խնդրահարույց էր հուլիսի 23-ին զինված խմբի հետ լրագրողների հանդիպման կազմակերպումը ուղիղ եթերի պայմաններում: Միջազգային պրակտիկան այսպիսի երևույթներն ընդունելի չի համարում: Օրինակ՝ Եվրոպական դատարանի՝ մի շարք լրագրողների դիմումի հիման վրա կայացված ու մինչ օրս արդիական համարվող որոշումներից մեկում արձանագրված է, որ ժամանակակից հասարակությունում ռադիոն և հեռուստատեսությունը զանգվածային լրատվության նշանակալի ուժ և ազդեցություն ունեն: Նրանց ազդեցությունն առավել անմիջական է, քան տպագիր մամուլինը, և հեռարձակողների՝ ռադիոյով կամ հեռուստատեսությամբ արված հայտարարությունը շտկելու, որակելու, թարգմանելու կամ մեկնաբանելու հնարավորություններն ավելի սահմանափակ են տպագիր մամուլի լրագրողների հնարավորությունների համեմատությամբ: Ուղիղ եթերով հայտարարությունները կարող են ներառել նաև գաղտնի հաղորդագրություններ փոխանցելու հատուկ ռիսկ. ռիսկ, որը նույնիսկ զգույշ լրագրողները չեն կարող վերահսկել իրենց պրոֆեսիոնալ գնահատականները տալիս⁸⁵: Այս դիրքորոշման հետ միասին, գնահատելով Իռլանդիայի համապատասխան իրավական ակտը, Եվրոպական դատարանն այն համարել էր Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին չհակասող՝ հաշվի առնելով, որ այդ ակտը ոչ թե ընդհանրապես սահմանափակում էր լրատվամիջոցների հրապարակումների բովանդակությունը, այլ ելնում էր նրանից, որ **բռնությամբ և այլ անօրինական եղանակներով սահմանադրական կարգը վտանգող կազմակերպությունների ղեկավարները կամ խոսնակները չեն կարող օգտվել ուղիղ**

⁸⁴ Մարդու իրավունքների պաշտպանի 2016թ. հուլիսի 29-ի հայտարարությունը. ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.armenpress.am/arm/print/855581/zinvats-hardzakmany-hajordecatelutyanyan-ev-brnutyan-qarozchutyanyan.html>:

⁸⁵ Պարսելը և այլոք ընդդեմ Իռլանդիայի (Purcell and others v. Ireland) գործով Եվրոպական դատարանի որոշում զանգատի ընդունելիության վերաբերյալ, գանգատ թիվ 15404/89: Եվրոպական դատարանն այս դիրքորոշումն արտահայտել է նաև մի շարք այլ վճիռներում:

եթերով հարցազրույցների հնարավորությունից և այլ հեռարձակումներից: Դրանք կարող են օգտագործել անօրինական գործողություններ խթանելու համար, որոնք վտանգում են պետության սահմանադրական կարգը, մինչդեռ այդ նույն կարգը երաշխավորում է ազատ խոսքի սահմանադրական իրավունքը:

Այս առումով, բարձր գնահատելի էր այն, որ, օրինակ, «Ազատություն» ռադիոկայանը հրաժարվեց ՊՊԾ գնդի տարածքը ուղիղ եթերի ռեժիմով նկարահանելուց և ռադիոկայանի լրագրողներն իրենց աշխատանքը ՊՊԾ գնդի տարածքում կատարեցին և հետագայում լուսաբանումն իրականացրին առանց ուղիղ հեռարձակման: Ընդհանրապես, Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումները վկայում են, որ «Ազատություն» ռադիոկայանը միակն էր, որ առավելագույն զսպվածությամբ էր աշխատում՝ բռնության քարոզի ու զինված դիմադրության կոչերի ցուցադրման տեսանկյունից:

Հուլիսյան իրադարձությունների օրերին նկատվում էին չափազանցություններով ելույթներ կամ կարծիքների տարածում, որոնցում պետական առանձին ինստիտուտների ներկայացվում էին հանրային պահանջներ՝ առանց հաշվի առնելու օրենքով նրանց տրված լիազորությունները կամ իրավական հնարավորությունները:

Նման ակնհայտ դրսևորում էր կարծիքների ու հետագայում նաև ելույթների միջոցով հանրության մոտ տպավորություն ձևավորելը, թե Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների մեջ է մտնում Ոստիկանության ՊՊԾ գնդի տարածքում գտնվող զինված խմբին սնունդով ապահովելու հարցի լուծմամբ զբաղվելը՝ ակնհայտորեն հաշվի չառնելով այն, որ Մարդու իրավունքների պաշտպանը պետական պաշտոնատար անձ է, գործում է օրենքով նախատեսված լիազորությունների սպառիչ շրջանակի հիման վրա և դրանից դուրս որևէ գործողություն անել չի կարող: Ընդ որում, դա մեկնաբանելիս առավելապես վկայակոչվում էր այն, թե Մարդու իրավունքների պաշտպանին է վերապահված ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի կամընտիր արձանագրությամբ սահմանված՝ կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը և հետևաբար՝ այդ հարցը նրա իրավասության առարկա է: Այդ ճնշումներն այնքան ինտենսիվացան, որ հուլիսի 26-ին Պաշտպանը ստիպված եղավ հայտարարել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի, այդ թվում՝ որպես Խոշտանգումների ազգային կանխարգելման մեխանիզմի լիազորությունները տարածվում են բացառապես այն անձանց պահման պայմանների վրա, ովքեր պետության կողմից իրենց կամքին հակառակ ազատությունից զրկվել են ենթադրյալ հանցանք կատարելու համար, այսինքն՝ գտնվում են անազատության մեջ (ձերբակալվածների պահման վայր, քրեակատարողական հիմնարկ և այլն) և այդ վայրից իրենց կամքով ազատ հեռանալու կամ, այլ կերպ ասած, ապամեկուսանալու հնարավորություն չունեն: Այսինքն՝ այս դեպքով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից որևէ միջամտություն կդիտվի՝ որպես օրենքով նախատեսված լիազորությունների սահմանների անցում: Չկա նաև միջազգային որևէ չափանիշ, որը կարող է հակառակը ենթադրել»: Իրավամբ, զինված խմբի անդամները իրենց կամքով էին ընտրել այնպիսի գործողությունների կատարում, որն անխուսափելիորեն հանգեցնելու էր ինքնամեկուսացմանը: Միևնույն ժամանակ, նրանք որևէ կերպ զրկված չէին ցանկացած պահի ապամեկուսանալու

հնարավորությունից: Նման պայմաններում ո՛չ Մարդու իրավունքների պաշտպանը և ո՛չ էլ պետական մարմինները չէին կրում զինված խմբի անդամներին սնունդ տրամադրելու պոզիտիվ պարտականություն:

Իրավիճակը հատկապես բարդանում էր այն պատճառով, որ հասարակության մի որոշ հատված, այդ թվում նաև քաղաքացիական հասարակության որոշ շրջանակներ, անթաքույց աջակցում էին զինված խմբի գործողություններին: Վերջինի առումով առավել զարմանալի էր այն հանգամանքը, որ իրադարձությունների ողջ ընթացքում, այդ թվում նաև դրան հաջորդող ժամանակահատվածում, քաղաքացիական հասարակությունը որպես ամբողջություն, կամ դրա առանձին հեղինակավոր ներկայացուցիչներ հստակորեն և աներկբայորեն այդպես էլ չդատապարտեցին զինված խմբի կողմից բռնությունները, այլոց ազատությունների դեմ ուղղված ոտնձգությունները: Հայտնի իրավապաշտպան կազմակերպությունները և իրավապաշտպանները առավելապես նախընտրեցին բավարարվել սահմանափակ և երկիմաստ հայտարարություններով և սպասել դեպքերի հետագա զարգացմանը:

Տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատության շրջանակները բավական լայն են: Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև այնպիսի արտահայտություններ, որոնք կարող են ցնցող, վիրավորական, սադրող կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից: Այդուհանդերձ, եթե խոսքը վերաբերում է ատելություն, բռնություն, անհանդուրժողականություն քարոզող խոսքին, ապա նման խոսքը բացարձակապես մերժվում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային և միջազգային իրավական կառուցակարգերով՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ նպատակ է հետապնդում ատելության խոսքը, անհանդուրժողականության քարոզը, կոչը: Այդ իմաստով, **ատելության խոսքի տարածումը ազատ արտահայտվելու իրավունքի չարաշահում է**, որի արգելքը հստակորեն սահմանված է միջազգային իրավական փաստաթղթերով, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի (այսուհետ նաև Դաշնագիր) 19-րդ հոդվածը սահմանում է, որ *«ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով»*.⁸⁶ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածը սահմանում է, որ *«Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն,*

⁸⁶ Տե՛ս Դաշնագրի 19-րդ և 20-րդ հոդվածների փոխկապակցության մասին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 34-րդ Ընդհանուր մեկնաբանությունը, կետ 50-52: Ընդ որում, այս դրույթում օգտագործված «ռասայական» հասկացությունը մեկնաբանվում է լայնորեն և ներառում է **կենսաբանական, տնտեսական, սոցիալական, մշակութային և պատմական** ընդհանրություններ ունեցող մարդկանց խմբեր: Հետևաբար, հասարակության որոշակի խմբի, օրինակ ոստիկանների, նկատմամբ ատելության խոսքը նույնպես արտահայտվելու իրավունքի անօրինական եղանակ է:

անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն գրադվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով»։ Իսկ ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով։

Այսպիսով, Դաշնագրի 20-րդ, Կոնվենցիայի 17-րդ և ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածները սահմանում են **իրավունքի չարաշահման** սկզբունքը, համաձայն որի այդ փաստաթղթերով սահմանված որևէ իրավունք, այդ թվում նաև ազատ արտահայտվելու իրավունքը, չեն կարող օգտագործվել վերացնելու կամ մերժելու համար այնպիսի հիմնարար արժեքներ, որոնք կազմում են նույն այդ իրավական փաստաթղթերով սահմանված իրավունքների հիմնաքարը՝ հանդուրժողականությունը, ատելության, խտրականության, մերժողականության արգելքը։ Նշված փաստաթղթերը կգրկվեն իրենց առարկայից ու նպատակից, եթե արտահայտվելու ազատության քողի տակ իրավունք տրվեր քարոզել անհանդուրժողականություն։

Դաշնագրի 20-րդ, Կոնվենցիայի 17-րդ և ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածների իմաստից ու առարկայից բխում է, որ լրատվամիջոցները և լրագրողները չեն կարող հայցել արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանություն՝ **արդարացնելու համար բռնություն, անհանդուրժողականություն, ատելություն սերմանող, քարոզող խոսքի տարածումը**։ Իսկ եթե լրագրողը բախվում է այնպիսի իրավիճակի հետ, երբ պարտավոր է հասարակական հետաքրքրություն ներկայացնող ընթացիկ դեպքերի վերաբերյալ տարածել տեղեկատվություն՝ պետք է դրսևորի զսպվածություն, երբ տեղեկատվությունը պարունակում է բռնության արդարացում և անհանդուրժողականության կոչեր։

Զինված խմբի կողմից ՊՊՄ գնդի վրա հարձակումը և դրա շուրջ զարգացումներ, անշուշտ, հանրային ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող իրադարձություններ էին և այդ առումով կարևոր էր լրագրողների կողմից հանրության համար ապահովել այդ իրադարձությունների վերաբերյալ ճշգրիտ, անաչառ ու հավասարակշռված տեղեկատվության ազատ հոսք՝ լրագրողական էթիկայի նորմերի պահպանմամբ։ Շատ լրատվամիջոցներ դեպքերը լուսաբանելիս կարողացել են պահպանել վերը նշված սկզբունքները։ Հատկանշական է, որ իրադարձությունները լուսաբանելիս լրագրողները հետևողականորեն վկայակոչում էին տեղեկատվության աղբյուրները՝ այդպիսով իրենց, որպես լրագրողի անձը հստակորեն տարանջատելով տեղեկատվության աղբյուրի, հեղինակի խոսքից, որպեսզի այլ անձի հեղինակած ատելության խոսքը չվերագրվեր հրապարակողին՝ տվյալ դեպքում լրագրողին կամ լրատվամիջոցին։ Այդուհանդերձ, խնդրո առարկա դեպքերը լուսաբանելիս հաճախ լրատվական հրապարակումները ուղեկցվել են ոչ թե դեպքերի ու իրադարձությունների պարզ ու հավասարակշռված լուսաբանմամբ, որը հնարավորություն կտար ընթերցողին այնուհետև ձևավորել իր

սեփական տեսակետը տվյալ իրադարձության վերաբերյալ՝ առանց լրատվամիջոցի անհարկի ազդեցության, այլ բռնության արդարացմամբ, կամ հերոսացմամբ, ենթադրաբար ծանր հանցագործություն կատարած անձանց զուլերգմամբ, նրանց անձից էպիկական հերոսի կերպար ստեղծելու անթաքույց ցանկությամբ: Լրատվության նման եղանակը հակասում է վերը նշված միջազգային իրավական փաստաթղթերին, ՀՀ Սահմանադրությանը և ներպետական օրենքներին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ նույնիսկ այդ դեպքում, երբ լրատվամիջոցը տարածում է այլ անձի հեղինակած խոսքը և լրագրողը հստակորեն տարանջատում է իր անձը լրատվական նյութից, նման լրատվական նյութի հրապարակումը անիրավաչափ է, եթե դա պարունակում է «ատելության խոսք և բռնության փառաբանում»⁸⁷: Այսպիսով, նույնիսկ այլ անձի հեղինակած տեքստի տարածումը տեղեկատվության նպատակով անիրավաչափ է, եթե այդ տեքստը պարունակում է բռնության փառաբանում, ատելության և բռնության քարոզ: Բռնության արդարացումը, անկախ այն հանգամանքից, թե ինչ նպատակով է կատարվում, **անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում:**

4. Արտահայտվելու ազատությունը սոցիալական ցանցերում

Իր հասանելիությամբ և հսկայածավալ տեղեկատվական նյութ տեղավորելու և հաղորդակցելու կարողությամբ համացանցը կարևոր դեր ունի հանրության՝ տեղեկություններ տարածելու և ստանալու հարցում: Այս իմաստով սոցիալական ցանցերը՝ որպես տեղեկությունների տարածման փոխակտիվ հարթակ, առավել արդյունավետ գործիք են: ԵԱՀԿ-ն համացանցի մատչելիությունը ճանաչում է որպես ինքնուրույն մարդու իրավունք⁸⁸: Հետևաբար, համացանցում տեղեկատվության հոսքի ցանկացած միջամտություն, որը կարող է դրսևորվել, օրինակ, համացանցի կոնտենտի արգելափակումով, ֆիլտրումով կամ հեռացումով, համարվում է արտահայտվելու ազատության իրավունքի միջամտություն:

Հուլիսի 17-ի առավոտյան Ֆեյսբուք սոցիալական ցանցի շատ օգտատերեր, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների մի շարք մասնագետներ, ահազանգեցին Ֆեյսբուք սոցիալական ցանցի անհասանելիության մասին: Ըստ բազմաթիվ աղբյուրների՝ այդ իրավիճակը տևեց մոտ 40 րոպե՝ մոտավորապես առավոտյան ժամը 10:05-ից: Այդուհանդերձ, սոցիալական ցանցի մատչելիության սահմանափակումը էապես չազդեց խնդրո առարկա իրադարձությունների վերաբերյալ հանրության

⁸⁷ Սուրեկն ընդդեմ Թուրքայի (թիվ 1) ([Surek v. Turkey](#) (no.1) գործով ՄԻԵԴ վճիռ, գանգատ թիվ 26682/95, 08/07/99, կետ 53:

⁸⁸ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն: Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ գրասենյակ: Դունյա Միյատովիչ: Ջեկույց համացանցում արտահայտվելու ազատության վերաբերյալ: Համացանցում արտահայտվելու ազատության, տեղեկության ազատ հոսքի և լրատվամիջոցների բազմախոհության վերաբերյալ ԵԱՀԿ անդամ պետություններում առկա իրավական դրույթների և պրակտիկայի վերաբերյալ: Տե՛ս էջ 37: Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.osce.org/fom/80723?download=true>:

տեղեկատվություն ստանալու իրավունքի վրա, քանի որ միջամտությունը տեղի էր ունեցել կարճ ժամանակահատվածով և սահմանափակ թվով օգտատերերի նկատմամբ: Այդուհանդերձ, ինտերնետ կոնտենտի արգելափակման, ֆիլտրման կամ կոնտենտի հեռացման ցանկացած դեպք մարդու իրավունքի լուրջ միջամտություն է:

Հուլիսի 17-31-ի դեպքերի վերաբերյալ հանրային դիսկուրս ծավալվեց նաև սոցիալական ցանցերում: Ընդհանուր առմամբ հնչում էր երկու կարծիք՝ մի մասը դատապարտում էր զինված խմբի կողմից ոստիկանության գնդի գրավումը և ուղեկցվող բռնությունները, իսկ մյուսը մասն արդարացնում էր նշված գործողությունները: Առաջինները գտնում էին, որ բռնությունն անթույլատրելի է ժողովրդավարական հասարակարգում, որ պետական մարմնի վրա զինված գրոհը, գույքի ոչնչացումը, պատանդառությունը, հրազենի կիրառումը ծանր հանցագործություններ էին՝ ուղղված հասարակական անվտանգության դեմ՝ հատկապես հաշվի առնելով Հայաստանի սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական խոցելի վիճակը: Նրանք, ովքեր արդարացնում էին զինված խմբի գործողությունները, իրենց մոտեցումը հիմնականում փաստարկում էին այն պնդումով, որ բոլոր հնարավոր լեգիտիմ միջոցները արդարությունը վերականգնելու, իշխանությունների կողմից մարդու իրավունքների խախտումները դադարեցնելու և ժողովրդի իշխանությունը վերականգնելու ուղղությամբ սպառվել էին և ապստամբությունը, զինված պայքարը միակ հնարավոր եղանակներն էին իշխանափոխության հասնելու համար, որի դեպքում միայն արդարությունը կվերականգնվեր: Այս երկրորդ խմբին պատկանող օգտատերերը սոցիալական ցանցում արտահայտվում էին երկու կերպ. մի մասը սուր քննադատության էր ենթարկում իշխանություններին առանց ատելության ու բռնության կոչերի, իսկ մյուս մասը քննադատում էր իշխանություններին ատելության, անհանդուրժողականության ու բռնության կոչերով:

Սոցիալական ցանցերում, հիմնականում Ֆեյսբուք (Facebook) սոցիալական ցանցում, արագորեն սկսեցին տարածվել բռնության կոչեր, օրինակ՝ «*դուրս արի փողոց բենզինի շշերով*», «*դեպի զինված գրոհ*», «*դրանց պտի մորթեիք*», «*ոտքի ելեք տրորենք բոլորին*», «*այս իշխանության դեմ միայն զենքով*», «*ի գործ, ի պայքար, ի զեն....*», «*զենք վերցրեք, հետներդ խանչալներ, դուբինկեք երկաթից ձողեր...*», և այլն: Նման կոչերը հաճախ ուղեկցվում էին բռնություն, հասարակական կարգի խախտում, ոստիկանների հետ ցուցարարների բախում, քաղաքային միջավայրում քաղաքացիական հագուստով զինված անձանց և բռնության այլ տեսարաններ պատկերող տեսանյութերով, լուսանկարներով ու ազդարարներով:

Ատելության խոսքը առավելապես ուղղված էր ոստիկանության ծառայողների դեմ, ինչպես օրինակ՝ «*միլիցայա՛ սատկե ջհանդամ չի սատկե*», «*ոստիկանինը կարա լինի շատ-շատ յոթ, քառսունք, տարի, սրբխեչ, ու ոչ պակաս տոնական տրամադրությամբ*», «*էն որ էն միլիցեն սատկել էր*», «*ոստիկանի ապրելն ու՛մ ա պետք, թող մեռնեն: Նույնիսկ մեռնելու արժանի չեն*», «*մենթերին ազգ ու տակով կործանել*», «*դրանցից 100 հատ էլ գոհվի՛ քիչա, մեր մի տղեն չարժեն 100-ով*», և այլն: Որոշ օգտատերեր նույնիսկ գոհունակություն էին արտահայտում ոստիկանության ծառայողների մահվան

կապակցությամբ, որոշներն էլ կոչ էին անում ավելի շատ «կոտորել»: Տարածվում էին նաև կոչեր բժիշկների վերաբերյալ, օրինակ՝ «բժիշկներ, դուք անասուններ եք», և այլն:

 sireli joxovurd, xndrum em naxapes plan mshakel groheluc araj ev @ntrel grohi hamar aravel harmar dirq kam dirqer,, miajn lav kazmakerpvats grohov hnaravor e hasnel mer herosnerin,, es havatum em im arjuts joxovrdin!!! kecce Hayastan!!!!!!!!!!!!!!!
See Translation
Like · Reply ·  1 · July 21 at 1:26pm



Araks Sabetgharian

Суббота в 12:03 · 

Ու հիմա պետքա մեր գրպանից փող հատկացնեն ոստիկանության օր օպերայում նշեն? Ոստիկանինը կարա շատ-շատ լինի յոթ, քառսունք, տարի, սրբխեչ ու ոչ պակաս տոնական տրամադրությամբ



1 комментарий · Репосты: 2



Нравится



Комментарий



Поделиться



Araks Sabetgharian

Вчера в 20:52 · Erevan · 

մլիցայա մեռել... ոչինչ, ինչ անենք... բա 100-ից ավել ջահել տղա զոհվեց սրանց ապաշնորհ արտաքին քաղաքականության պատճառով, մի մլիցեն ինչ ա, որ չզոհվի՝ սրանց ապաշնորհ ներքին քաղաքականության արդյունքում...

Репосты: 5



Нравится



Комментарий



Поделиться




Araks Sabetgharian и еще 38



1 ժամ առաջ · 🌐

Մլիցայա սատկե?
Ջհանդամ չի սատկե, սաղ էլ սատկեն
սրտիս դարդ չի...

Սոցիալական ցանցերի որոշ օգտատերեր նույնիսկ կոնկրետ խորհուրդներ, մարտավարական առաջարկներ էին կատարում, թե ինչպես ապակայունացնել վիճակը մայրաքաղաքում, մարզերում՝ դրանք ներկայացնելով որպես «քաղաքացիական անհնազանդության հնարքներ»: Օրինակ, մի օգտատեր առաջարկում էր, որ պետք է ուսումնասիրել, թե որտեղ է կենտրոնացած ոստիկանությունը. եթե կենտրոնացած է մեկ տեղում, «սպա շատ արագ կարելի է փակել մյուս տեղերի երթևեկությունը, պարալիզացնել քաղաքը»: Գուցե նույնպես որպես մարտավարական եղանակ, որոշ անանուն օգտատերեր փորձում էին օգտագործել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը՝ տարածելով հայտարարություններ, թե իբր լուրեր էին ստացվել Քարվաճառից, որ կազմակերպված հարձակում էր տեղի ունենալու Ադրբեջանի կողմից և որ առաջնագծում «տղաներին փամփուշտ չեն տալիս, և նահանջի հնարավորություն են տվել»:



28 МИН · 🌐

Ուշադրություն

Մենք լուր ենք ստացել, որ կազմակերպված հարձակում է տեղի ունենալու Ադրբեջանի կողմից, առաջնագծում գտնվող տղաներին փամփուշտներ չեն տալիս, եւ նահանջի հնարավորություն են տվել: Լուրը ստացել են Քարվաճառից:

Որպես կանոն՝ ատելության կոչերի տակ այլ օգտատերեր թողնում էին սպառնալիքներ, վիրավորանքներ, հայհոյանք, ծաղրանք արտահայտող մեկնաբանություններ՝ ոստիկանության ծառայողների և, ընդհանուր առմամբ, պետական մարմինների հասցեին: Օգտատիրոջ էջում տեղադրված երրորդ անձի մեկնաբանությունները նույնպես առաջացնում են պատասխանատվություն օգտատիրոջ համար, եթե վերջինս ի վիճակի է վերահսկել ու կառավարել իր էջում այլ

անձանց թողած մեկնաբանությունների հոսքը՝ հետևաբար նաև հեռացնել անօրինական կոնտենտը: Ընդ որում, ատելության խոսք և բռնություն սերմանող կոնտենտի հեռացումը սոցիալական ցանցի, հատկապես առցանց լրատվամիջոցի կողմից, չի համարվում մասնավոր գրաքննության կիրառում⁸⁹:

Ատելության խոսքը հաճախ ուղեկցվում էր ռասիստական բնույթի արտահայտություններով: Այդ իմաստով առավել հաճախ ռասիստական ծառայողների նկատմամբ օգտագործվում էր «թուրք» բառը՝ այդպիսով ռասիստական խտրականության երանգ հաղորդելով ատելության խոսքին: Այս արտահայտությունն օգտագործվում էր նաև անհասցե կոչերում, օրինակ՝ «Եթե թուրք չես միացի պայքարին»:

Սոցիալական ցանցերում գերակայում էր նաև ակնհայտ **անհանդուրժողականությունը** այն օգտատերերի նկատմամբ, ովքեր քննադատում էին զինված խմբի գործողությունները: Վերջիններս արժանանում էին վիրավորական խոսքերի՝ ենթարկվելով հանրային պարսավանքի, նրանց էին վերագրվում «ազգի դավաճանի», «իշխանությանը ծախվածի» որակումներ:

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակը ատելության շարժառիթով հանցագործության նախնական հատկանիշ է համարում կոնկրետ մարդկանց կամ մարդկանց որոշակի խմբի (identifiable group) նկատմամբ **կանխակալությունը** կամ **նախապաշարմունքը**՝ նրանց ռասայի, սեռի, ազգության, քաղաքացիության, մաշկի գույնի, էթնիկ պատկանելիության կամ **անձնական և սոցիալական բնույթի այլ հատկանիշների հիմքով**⁹⁰:

Հատկանշական է, որ Ֆեյսբուք սոցիալական ցանցի կանոնակարգը արգելում է տեղադրել ատելության խոսք, սպառնալիք, բռնություն սերմանող կոնտենտ և արգելում է այս տիրույթում իրականացնել որևէ անօրինական, ապակողմնորոշող, չարամիտ կամ խտրական գործունեություն⁹¹: Հետևաբար, վերը նշված օրինակներում և նմանօրինակ բոլոր այլ դեպքերում օգտատերերը խախտել են սոցիալական ցանցի հետ կնքած առցանց պայմանագիրը:

Ատելության խոսք տարածող օգտատերերը մեծամասամբ գործում էին անանուն կամ օգտագործում էին կեղծանուններ: Նրանց էջերում որպես կանոն կամ բացակայում էին անձնական տվյալները, կամ էլ տվյալները իրական չէին: Համացանցում անոնիմ (անանուն կամ կեղծանունով) հանդես գալը, արտահայտվելու իրավունքի իրացումը ճանաչվում է որպես ինքնուրույն իրավունք՝ որպես արտահայտվելու ազատության իրավունքի դրսևորման եղանակ, որն անհրաժեշտ է օգտատերերի, ազատորեն արտահայտվող անձանց անվտանգությունը առցանց միջավայրում պաշտպանելու,

⁸⁹ Դելֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի (*Delfi AS v. Estonia*) գործով Եվրոպական դատարանի վճիռ (ՄՊ), զանգատ թիվ 64569/09, 16/06/15, կետ 157:

⁹⁰ Ատելության շարժառիթով հանցագործության սահմանումը Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի (ODIHR) կողմից. տեքստն հասանելի է հետևյալ հղումով՝ <http://hatecrime.osce.org/what-hate-crime>:

⁹¹ Ֆեյսբուք սոցիալական ցանցի առցանց պայմանագրի [«Իրավունքներ և պարտականություններ»](#) բաժնի 3-րդ ենթաբաժին:

Տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/legal/terms>:

ինչպես նաև առցանց միջավայրում տեղեկությունների և գաղափարների ազատ արտահայտման հնարավորությունը մեծացնելու նպատակով⁹²: Այդուհանդերձ, համացանցում անոնիմ մնալու իրավունքը, որքան էլ որ դա կարևոր արժեք է, պետք է փոխհավասարակշռվի այլոց իրավունքների ու շահերի հետ: Անոնիմությունը չի կարող օգտագործվել ատելության խոսք կամ բռնության քարոզ տարածելու նպատակով, քանի որ նման խոսքը չի պաշտպանվում արտահայտվելու ազատության իրավունքով⁹³:

Կեղծ անհատական տվյալներով սոցիալական ցանցում գրանցվելը նաև որոշ սոցիալական ցանցերի կանոնակարգի խախտում է: Քանի որ խնդրո առարկա տիրույթը հիմնականում վերաբերում էր Ֆեյսբուք սոցիալական ցանցին, օգտատիրոջ և ցանցի միջև առցանց պայմանագիրը սահմանում է, որ օգտատերերը պետք է նշեն իրենց իրական անուններն ու ազգանունները, պարտավորվում են չբացել մեկից ավելի էջեր իրենց անունից, չտրամադրել որևէ կեղծ անձնական տեղեկություն, կամ առանց թույլտվության հաշիվ բացել որևէ այլ անձի համար⁹⁴: Փաստորեն, վերը նշված բոլոր օրինակներում օգտատերերը խախտել են սոցիալական ցանցի հետ իրենց պարտականությունները, որոնք նրանք ստանձնել են օգտատեր գրանցվելու ժամանակ սոցիալական ցանցի հետ առցանց պայմանագիր ստորագրելիս:

Սոցիալական ցանցի կեղծանունով կամ անանուն աղբյուրից վերցված տեղեկությունների տարածումը լրատվամիջոցների կամ լրագրողների կողմից հակասում է «պատասխանու լրագրություն» և «բարեխիղճ հայտարարություն» (fair comment) լրագրողական մասնագիտական, ինչպես նաև օրինականության և կոնվենցիոն պահանջներին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *«հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատության իրականացումը կապված է «պարտավորությունների» և «պատասխանատվության» հետ, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխիղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով»⁹⁵*: Պատասխանատու լրագրության սկզբունքը պահանջում է, որպեսզի լրատվամիջոցներն օգտվեն վստահելի աղբյուրներից, քանի որ, առաջին, առաջնահերթ է, որ տարածված տեղեկությունը լինի ճշգրիտ ու վստահելի, երկրորդ, անանուն աղբյուրից վերցրած տեղեկության համար պատասխանատվության կարող է ենթարկվել լրատվամիջոցը՝ հատկապես ատելության

⁹² Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Ինտերնետում հաղորդակցության ազատության» մասին Հռչակագրի 7-րդ սկզբունքը:

Ամբողջական տեքստն անգլերեն լեզվով հասանելի է հետևյալ հղումով՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805dfbd5:

⁹³ [Դեյֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի](#) գործով Եվրոպական դատարանի վճիռ, վկայակոչված վերևում, կետ 140 և 149:

⁹⁴ Facebook սոցիալական ցանցի առցանց պայմանագրի [«Իրավունքներ և պարտականություններ»](#) բաժնի 4-րդ ենթաբաժին:

Տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/legal/terms>:

⁹⁵ Բլադետ Տրոմսոն ու Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի (*Bladet Tromsø and Stensaas v. Norway*) գործով Եվրոպական դատարանի վճիռ (ՄՊ), զանգատ թիվ 21980/93, 20/05/99, կետ 65:

խոսքի դեպքում: Այս սկզբունքն ամրագրել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը իր նախադեպային իրավունքում, սահմանելով, որ տեղեկատվություն տարածողը չի կարող հայցել պաշտպանություն այլ անձի վիրավորական կամ գրպարտող բնույթի տեղեկության վերարտադրման ու տարածման համար, եթե այդ անձը կոնկրետ ֆիզիկական կամ իրավաբանական անձ չէ⁹⁶: Սույն մեկնաբանությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ մասի դրույթից, համաձայն որի գրպարտության կամ վիրավորանքի համար պատասխանատվություն կրում է հրապարակողը, եթե «տեղեկատվության աղբուրը (հեղինակը) հայտնի չէ»:

Հուլիսյան դեպքերի ընթացքում և դրանից հետո, համացանցում ստեղծվեցին մի շարք հանրային խմբեր այդ դեպքերի վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու, հանրային բաց քննարկումներ կազմակերպելու նպատակով: Այդպիսի նախաձեռնություններից մեկը «Մասնա ծոեր-բացահայտում» անվանումով էջի և փաստահավաք խմբի ստեղծումն էր Ֆեյսբուք սոցիալական ցանցում, որի նպատակն էր հուլիսյան դեպքերի ընթացքում մարդու իրավունքների խախտումներ ու հանցագործություններ կատարած ՀՀ պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքումը և իրավասու մարմիններին ու հանրությանը ներկայացնելը: Թեև ողջունելի է խմբի առաքելությունը, որը տեղավորվում է պետական մարմինների նկատմամբ հանրային վերահսկողության կարևոր առաքելության շրջանակներում, միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ այս էջում հաճախ հնչում էին վիրավորական, ատելություն ու բռնություն սերմանող արտահայտություններ, որոնք անհարիր են այն հասարակական առաքելության ու ժողովրդավարական արժեքների պաշտպանության հետ, որոնք ստանձնել է նախաձեռնող խումբը: Մասնավորապես, խմբի էջում օգտատերերը հաճախ հնչեցնում էին ոստիկանների, պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական, ծաղրական արտահայտություններ, հայհոյանքներ, տարածում են անձի մասնավոր կյանքի, ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկություններ, որոնք որպես այդպիսին որևէ առնչություն չունեն պաշտոնատար անձի հանրային գործառույթների կամ հուլիսյան դեպքերի հետ: Էջում հիմնական թիրախավորված խումբը ոստիկանության աշխատակիցներն են, որոնց օգտատերերը հասցեագրում են «օմոն»-ականներ, «մենթեր» վիրավորական արտահայտություններով:

Փաստահավաք խումբը շարունակաբար կատարում էր հանրային հարցում կոնկրետ անձանց վերաբերյալ: Եթե պաշտոնատար անձի կողմից իրավախախտումների, իր աշխատանքային պարտականությունների հետ կապված գործունեության վերաբերյալ տվյալներ ձեռք բերելը հանրային հարթակներից կարող է վերաբերելի լինել խմբի առաքելության հետ, ապա անհասկանալի է, թե ինչու է փաստահավաք խումբը շարունակաբար հորդորում հանրությանը տվյալներ ուղարկել

⁹⁶ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ-ի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2012թ. ապրիլի 27-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով որոշում:

տվյալ անձի ամուսնացած կամ չամուսնացած լինելու, ընտանիքի անդամների, ԱՄՆ-ում բարեկամների ու հարազատների, Ռուսաստանում կապերի մասին:

Հուլիսյան իրադարձությունների հենց սկզբից՝ հուլիսի 17-ից Մարդու իրավունքների պաշտպանը կոչ արեց գերծ մնալ զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական ցանցերով չստուգված տեղեկությունների տարածումից, քանի որ դրանք անհարկի լարում էին առանց այդ էլ ծայրահեղ լարված իրավիճակը: Պաշտպանը, բնականաբար, առաջին հերթին նկատի ուներ բռնության և անհանդուրժողականության կոչերը, որոնք այդ պահի դրությամբ արդեն սկսել էին տարածվել տարբեր հարթակներում՝ այդ թվում նաև սոցիալական ցանցերում: Հաշվի առնելով, որ դեպքերից մի քանի օր անց աստելության խոսքն արդեն բացեիքաց տարածվում էր տարբեր հանրային հարթակներից, հուլիսի 26-ի իր ծրագրային հայտարարության մեջ, որով Պաշտպանը կատարեց կոնկրետ առաջարկներ հասարակության մեջ լարվածությունը թուլացնելու և մարդու իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ, Պաշտպանը անթույլատրելի համարեց սոցիալական ցանցերում հնչող աստելության խոսքի խրախուսումն ու զինված դիմադրություն ցույց տալու կամ բռնության ցանկացած ձևի կիրառությանն ուղղված սպառնալիքներն ու կոչերը, և հորդորեց բոլոր կողմերին ձեռնպահ մնալ նման բնույթի հրապարակումներ, ինչպես նաև չստուգված և ՀՀ գործող օրենսդրական կարգավորումները հաշվի չառնող տեղեկություններ տարածելուց⁹⁷:

⁹⁷ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը և առաջարկները Երևանում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ, կետ 5: Հուլիսի 26, 2016: Ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://web.facebook.com/Armenianombudsman/posts/551780361676099>: